9/51

Ժառանգակից
ԵՎՐԱՍԻԱ

V (1)
2016

© National Library of Armenia OCR by Portmind

9/5
07.06.2017
1-ԷՔՀ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՏՈՐ V (1)

ԵՐԵՎԱՆ 2016

© National Library of Armenia

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

CONTEMPORARY EURASIA

ECONOMIC AND POLITICAL ISSUES

EDITED BY RUBEN SAFRASTYAN

VOLUME V (1)

YEREVAN 2016

707-2017

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

СОВРЕМЕННАЯ ЕВРАЗИЯ

ЭКОНОМИЧЕСКИЕ И ПОЛИТИЧЕСКИЕ ВОПРОСЫ

ПОД РЕДАКЦИЕЙ РУБЕНА САФРАСТЯНА

ТОМ V (1)

ЕРЕВАН 2016

© National Library of Armenia

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
Ռուբեն Սաֆրաստյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Լիլիթ Հարությունյան, պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ գիտաշխատող
Գոհար Իսկանդարյան, պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ գիտաշխատող
Վահրամ Տեր-Մաթևոսյան, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ գիտաշխատող
Լևոն Հովսեփյան, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ գիտաշխատող
Նազելի Նավասարդյան, պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ ԱԻ գիտաշխատող (հատորի պատասխանատու)

«Ժամանակակից Եվրասիա» գիտական պարբերականի V(1) համարը նվիրված է Եվրասիական տարածաշրջանում ընթացող զարգացումներին և տարածաշրջանի վրա դրանց ազդեցության ուսումնասիրությանը: Հատորում ընդգրկված հոդվածները վերաբերում են Մերձավոր Արևելքի, Հարավային Կովկասի առանցքային քաղաքական գործընթացներին, տնտեսական ու անվտանգության հիմնախնդիրներին, ներքաղաքական վերափոխումներին: Պարբերականը նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների, փորձագետների, դիվանագետների, ուսանողների, ինչպես նաև ընթերցող այլ շրջանների համար:

ISSN 1828-3948

PUBLISHED BY THE DECISION OF THE SCIENTIFIC COUNCIL
OF THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

EDITOR IN CHIEF
Ruben Safrastyan, Academician of NAS RA

EDITORIAL BOARD:
Lilit Harutyunyan, PhD, Assoc. Prof., Senior Research Fellow IOS NAS RA
Gohar Iskandaryan, PhD, Assoc. Prof., Senior Research Fellow IOS NAS RA
Vahram Ter-Matevosyan, PhD, Senior Research Fellow IOS NAS RA
Levon Hovsepyan, PhD, Senior Research Fellow IOS NAS RA
Nazeli Navasardyan, PhD, Research Fellow IOS NAS RA, Responsible for the Volume

The current issue of the "Contemporary Eurasia" V (1) is devoted to the ongoing developments and processes in the Eurasia and their impact on the region. The Volume contains articles dealing with the key political developments, economic and security issues, internal political transformations in the Middle East and South Caucasus. The publication may be of interest for social scientists, experts and students.

ISSN 1828-3948

© National Library of Armenia

ИЗДАЕТСЯ ПО РЕШЕНИЮ УЧЕНОГО СОВЕТА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГЛАВНЫЙ РЕДАКТОР
Рубен Сафрастян, академик НАН РА

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ
Лилит Арутюнян, к. и. н., доцент, старший научный сотрудник ИВ НАН РА
Гоар Искандарян, к. и. н., доцент, старший научный сотрудник ИВ НАН РА
Ваграм Тер-Матевосян, к. и. н., старший научный сотрудник ИВ НАН РА
Левон Овсепян, к. и. н., старший научный сотрудник ИВ НАН РА
Назели Навасардян, к. и. н., научный сотрудник ИВ НАН РА, (ответственная за выпуск)

Выпуск V (1) периодического сборника "Современная Евразия" посвящен актуальным событиям Евразии, и изучению их влияния на развитие ситуации в регионе. Включенные в сборник статьи рассматривают ключевые политические, экономические проблемы, а также вопросы безопасности и внутриполитических трансформаций в Ближневосточном регионе и на Южном Кавказе. Выпуск предназначен для историков, политологов, дипломатов, экспертов, студентов, а также для широкого круга читателей, интересующихся Евразийским регионом.

ISSN 1828-3948

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՇԽԱՐՀԱՌԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՎՐԱ 10

ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 21

ԵՎԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՃԱՊՈՆԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ՀԵՏ 34

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ
ԱԴՐԲԵՋԱՆ-ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՄԻՏՈՒՄՆԵՐ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ 44

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱԼԱՎԻԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 53

ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆ
2012Թ. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ» ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԵՎ ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ 69

ՄՈՒՇԵՂ ՂԱՀՐԻՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՆԱՎԹԱՅԻՆ ՎԵՃԵՐԸ ԲԱՂԴԱԴԻ ԵՎ ԷՐԲԻԼԻ ՄԻՋԵՎ (2003-2015 ԹԹ.) 89

© National Library of Armenia

CONTENTS

ARMEN MANVELYAN
THE IMPACT OF THE MOVEMENT OF GEOSTRATEGIC CENTERS OF ENERGY ON THE SOUTH CAUCASUS 10

GOHAR ISKANDARYAN
ARMENIA-IRAN ECONOMIC RELATIONS AND PROSPECTS OF DEVELOPMENT 21

HARUTYUNYAN YEVA
JAPAN'S ECONOMIC RELATIONS WITH SAUDI ARABIA 34

ARAKS PASHAYAN
AZERBAIJAN-SAUDI ARABIA RELATIONS: THE TENDENCIES AND THE PERSPECTIVES 44

GRIGOR VARDANYAN
SECURITY PROBLEMS OF ALAWITE COMMUNITY IN THE CONTEXT OF RUSSIAN MILITARY PRESENCE IN SYRIA 53

GOR GEVORGYAN
2012 ALTERNATIVE "DEMOCRATIC" PRESIDENTIAL ELECTIONS IN EGYPT AND THE RISE OF ISLAMISTS 69

MUSHEGH GHAHRIYAN
TERRITORIAL AND OIL DISPUTES BETWEEN BAGHDAD AND ERBIL (2003-2015) 89

СОДЕРЖАНИЕ

АРМЕН МАНВЕЛЯН
ПЕРЕМЕЩЕНИЯ ГЕОСТРАТЕГИЧЕСКИХ ЭНЕРГЕТИЧЕСКИХ ЦЕНТРОВ И ИХ ВЛИЯНИЕ НА ЮЖНО-КАВКАЗСКИЙ РЕГИОН 10

ГОАР ИСКАНДАРЯН
АРМЯНО-ИРАНСКИЕ ЭКОНОМИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ И ПЕРСПЕКТИВЫ ИХ РАЗВИТИЯ 21

АРУТЮНЯН ЕВА
ЭКОНОМИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ ЯПОНИИ С САУДОВСКОЙ АРАВИЕЙ 34

АРАКС ПАШАЯН
ОТНОШЕНИЯ МЕЖДУ АЗЕРБАЙДЖАНОМ И САУДОВСКОЙ АРАВИЕЙ: ТЕНДЕНЦИИ И ПЕРСПЕКТИВЫ 44

ГРИГОР ВАРДАНЯН
ПРОБЛЕМЫ БЕЗОПАСНОСТИ АЛАВИТСКОЙ ОБЩИНЫ В КОНТЕКСТЕ РОССИЙСКОГО ВОЕННОГО ПРИСУТСТВИЯ В СИРИИ 53

ГОР ГЕВОРГЯН
АЛЬТЕРНАТИВНЫЕ «ДЕМОКРАТИЧЕСКИЕ» ПРЕЗИДЕНТСКИЕ ВЫБОРЫ 2012 г. В ЕГИПТЕ И ПОБЕДА ИСЛАМИСТОВ 69

МУШЕГ ГАГРИЯН
ТЕРРИТОРИАЛЬНЫЕ И НЕФТЯНЫЕ СПОРЫ МЕЖДУ БАГДАДОМ И ЭРБИЛЕМ (2003-2015 ГГ.) 89

© National Library of Armenia

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՇԽԱՐՀԱՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՎՐԱ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Էներգետիկ աշխարհառազմավարական կենտրոններ են կոչվում այն տարածաշրջանները, որոնք ոչ միայն հարուստ են նավթի ու գազի մեծ պաշարներով, այլև կարևոր նշանակություն ունեն միջազգային շուկաներ էներգակիրների տարանցման գործում: Այդ տարածաշրջանները միշտ էլ եղել են նավթ սպառող հիմնական տերությունների ուշադրության կենտրոնում՝ որպես վերջիններիս հումքի մատակարարման կարևորագույն աղբյուրներ, և դրանց նկատմամբ վերահսկողությունը սուր մրցակցությունների ու հակասությունների պատճառ է հանդիսացել: Այդ կենտրոններն առանցքային նշանակություն ունեն նաև նավթի գնագոյացման ձևավորման վրա և այս հանգամանքով է պայմանավորված այդ տարածաշրջանների ռազմավարական կարևորությունն էներգետիկ համաշխարհային շուկայի համար:

Միաժամանակ այդ տարածաշրջաններն իրենց վրա են կրում էներգետիկ շուկաներում կատարվող փոփոխությունների թե՛ դրական և թե՛ բացասական ազդեցությունները: Օրինակ՝ այդ տարածաշրջաններում գտնվող պետությունների զարգացման ու անվտանգության դինամիկան շատ հաճախ կախված է համաշխարհային էներգետիկ շուկայում նավթի ու գազի գների տատանումներից: Այդ պետությունների տնտեսական ու քաղաքական համակարգերը նույնիսկ կարող են հայտնվել լրջագույն ռիսկերի առաջ՝ պայմանավորված համաշխարհային էներգետիկ շուկայում կատարվող գնային տեղաշարժերով՝ պահանջարկի ու առաջարկի փոփոխությամբ, ինչն իր հերթին նվազեցնում կամ կարևորում է տվյալ տարածաշրջանի ռազմավարական նշանակությունը:

Այդ պետությունների ներքին ու արտաքին քաղաքականության վարքագիծը երբեմն ուղիղ համեմատական է նավթի

ու գազի շուկաներում տեղի ունեցող զարգացումներին: Այն ազդում է ոչ միայն առանձին վերցրած պետությունների, այլև տարածաշրջանների անվտանգության դինամիկայի, միջպետական հարաբերությունների որակի ու նույնիսկ ներքաղաքական զարգացումների վրա: Նավթի միջազգային շուկայում տեղի ունեցող տեղաշարժերը շատ դեպքերում կարող են նաև այդ տարածաշրջաններում ձևավորված ռազմաքաղաքական հավասարակշռության փոփոխության հանգեցնել և հակամարտությունների պատճառ դառնալ:

Միջազգային շուկայում նավթի գների թե՛ կտրուկ բարձրացումը և թե՛ գնանկումը հանգեցնում են ոչ միայն տնտեսական ու քաղաքական փոփոխությունների, այլև խորքային աշխարհառազմավարական տեղաշարժերի, ինչը փոխում է նաև հիմնական խաղացողների՝ էներգակիրներով հարուստ տարածաշրջաններում նավթի խոշոր արդյունահանողների և ամենամեծ սպառողների շահերը: Մեծ Մերձավոր Արևելքում, նաև մասամբ Հարավային Կովկասում տեղ գտած վերջին տարիների զարգացումները հենց այդ փոփոխությունների ու ազդեցությունների վառ օրինակներ են:

Նավթի գների անկումը համաշխարհային շուկայում առաջարկի ու պահանջարկի անհավասարության պայմաններում հանգեցրել է նավթային տարածաշրջանների անվտանգային դինամիկայի նվազմանը՝ ավելացնելով հնարավոր պատերազմների ու ճգնաժամերի ռիսկերը: Նման երևույթ առաջին անգամը չէ, որ նկատվում է այդ տարածաշրջաններում, սակայն հետխորհրդային շրջանում հարավկովկասյան տարածաշրջանի համար ընդհանրապես և առանձին պետությունների համար մասնավորապես սա նոր երևույթ է, որը կարող է էականորեն փոխել տարածաշրջանում ձևավորված ռազմաքաղաքական հավասարակշռությունը:

Էներգակիրներով հարուստ պետությունները նավթի գների փոփոխության պայմաններում

Էներգետիկ տարածաշրջանների աշխարհառազմավարական նշանակությունը կախված է նաև այնտեղ գտնվող և էներգակիրներով հարուստ պետությունների կարևորությունից նավթի միջազգային շուկայում: Առանձին վերցրած նավթային պետության գոյատևման բանաձևը կախված է նավթագազային համակարգի զարգացածությունից և դրանից քաղաքական ու տնտեսական համակարգերի կախվածությունից: Այս թեման երկար տարիներ եղել է արևմտյան գիտական շրջանակների

© National Library of Armenia

ուշադրության կենտրոնում, որոնք փորձում էին այսպիսով դուրս բերել նավթային պետությունների գոյատևման բանաձևի ալգորիթմը: Դեռ անցած դարի վերջին՝ 1997թ., Կալիֆոռնիայի համալսարանում հրատարակվեց գիտական աշխատանք՝ «Առատության պարադոքսը. նավթի աճը և նավթային պետությունները» (The Paradox of Plenty: Oil Booms and Petro-states) վերնագրով, որի հեղինակը համալսարանի պրոֆեսոր Թերի Լին Կարլն (Terry Lynn Karl) էր, ով փորձել էր վերլուծել, թե ինչու են նավթով հարուստ պետությունները ձախողվում և ինչ սխալներ են գործում այդ հումքի արդյունահանումն ու արտահանումը կազմակերպելու ժամանակաշրջանում[1]:

Ըստ հեղինակի՝ նմանատիպ պետություններում տնտեսական խնդիրների ու ճգնաժամերի հիմքը, կարելի է ասել, դրվում է նավթի նկատմամբ աճող պահանջարկի և բարձր գների ժամանակաշրջանում, սակայն դրանց բացասական հետևանքները նկատվում են, երբ նավթի գները սկսում են անկում ապրել: Հիմնական խնդիրներն առաջանում են այն ժամանակ, երբ նավթից ստացվող գերեկամուտները հնարավորություն են տալիս նմանատիպ պետություններում գործող վարչակազմերին շատ դեպքերում փոխելու քաղաքական ու տնտեսական համակարգերը և դրանց զարգացման տրամաբանությունը՝ ամրապնդելով սեփական իշխանությունը:

Առաջին ու հիմնական սխալը, ըստ արևմտյան հեղինակների, այն է, որ գերշահույթ ունեցող նավթային պետությունները փոխում են պետության հիմնական գործառույթներից մեկը՝ հավաքման ու բաշխման համակարգը, ինչը կառավարման ավտորիտար ձևի անցման առաջնային քայլերից է: Այսինքն՝ նմանատիպ պետություններում գործող վարչախմբերը վերանայում են հարկման համակարգը և այդ երկրները վերածում այսպես կոչված «հարկային դրախտների»՝ ազատելով տեղական ոչ նավթագազային ընկերությունները հարկային տուրքերից ու պարտավորություններից: Դրական թվացող այս գործընթացի իրական նպատակն է նվազեցնել տնտեսության ոչ նավթային սեկտորի ազդեցությունը պետության ֆինանսավորման համակարգում, ինչը հանգեցնում է նաև դրանց քաղաքական ազդեցության կրճատմանը:

[1] Մանրամասն տե՛ս Terry Lynn Karl, The Paradox of Plenty: Oil Booms and Petro-states, http://cddrl.fsi.stanford.edu/publications/the_paradox_of_plenty_oil_booms_and_petrostates.

Պարզեցնելով հարկման համակարգը՝ գործող վարչակազմերը կախման մեջ են հայտնվում նավթագազային ընկերություններից, որոնք դառնում են այդ տիպի պետությունների ֆինանսավորման հիմնական, իսկ երբեմն նաև միակ աղբյուրը: Այդ պետությունների վարչակազմերը միաժամանակ դադարում են հաշվետու լինել բնակչությանը իրականացվող քաղաքական ու տնտեսական գործառույթների համար, իսկ նավթի վաճառքից ստացվող գերեկամուտները նավթի բարձր գների պայմաններում հնարավորություն են տալիս նրանց ոչ միայն հրաժարվելու հարկման համակարգից, այլև իրականացնելու բաշխման գործառույթ, որի հիմքում ընկած է բնակչության մի հսկայական զանգվածի, այդ թվում նաև ոչ նավթային սեկտորի ընկերությունների սուբսիդավորումը պետական եկամուտներից: Այս գործառույթի արդյունքում նմանատիպ վարչակազմերը կարողանում են վերջնականապես իրենց ենթարկել պետության բոլոր ինստիտուտները՝ միաժամանակ «գնելով» բնակչության մի հսկայական զանգվածի օրինականությունը:

Հարկահավաքման համակարգի վերանայումը, որը սկզբնական շրջանում նպաստում է այդ պետությունների վարչակազմերի ուժեղացմանը, հետագայում լուրջ խնդիրներ է առաջացնում այդ պետությունների համար նավթի գնանկման շրջանում, երբ վերջիններս ստիպված են լինում փոխել այդ քաղաքականությունը՝ անցնելով դրա խստացման ռեժիմին ֆինանսական լրացուցիչ միջոցներ հավաքագրելու համար, ինչը որպես կանոն առաջացնում է բնակչության մի ստվար հատվածի ու հատկապես ոչ նավթային ընկերությունների դժգոհությունը:

Հաջորդ սխալը, որ գործում են այդ վարչակազմերը, կապված են խոշոր ներդրումներ պահանջող ծրագրերի հետ, որոնք նրանք սկսում են իրականացնել հատկապես ծառայությունների ու շինարարության ոլորտում՝ բնակչության համար աշխատատեղեր ապահովելու համար: Խնդիրն այն է, որ նավթագազային ոլորտը, լինելով ֆինանսատար, միաժամանակ աշխատատար չէ: Այսինքն՝ նավթագազային ոլորտում հսկայական՝ միլիարդավոր դոլարների ներդրումների պայմաններում ստեղծվում են չնչին թվով աշխատատեղեր, և գերեկամուտներ ստացող նավթային պետություններն աշխատատեղերի ստեղծման համար ստացվող եկամուտների մի մասը սկսում են ուղղել դեպի ծառայությունների ու շինարարությունների

© National Library of Armenia

ոլորտներ, որոնք ապահովում են ոչ բարձր որակավորում պահանջող մեծաքանակ աշխատատեղեր:

Սակայն, ինչպես նշեցինք, այս համակարգը կարող է գործել միայն նավթի բարձր գների պայմաններում: Նավթի գնի անկումը և եկամուտների նվազումը կրճատում են նաև ներդրումները շինարարության ու ծառայությունների ոլորտներում՝ հանգեցնելով աշխատատեղերի զանգվածային կրճատման, այստեղից բխող տնտեսական ու քաղաքական հետևանքներով:

Նավթի բարձր գները, գերեկամուտներն ու արտարժույթի հսկայական ներհոսքն իրենց հերթին հանգեցնում են տեղական արժույթի գերարժևորմանը, և ստեղծվում է մի իրավիճակ, որը տնտեսագետները կոչում են «հոլանդական» հիվանդություն: Տեղական արժույթի գերարժևորումը հանգեցնում է ոչ նավթային սեկտորի ապրանքների թանկացմանը և որպես հետևանք՝ դրանց մրցունակության անկմանը պետության ներսում, ի տարբերություն ներմուծվող ապրանքների, իսկ դրսում նվազեցնում է արտահանումը: «Հոլանդական» հիվանդությամբ տառապող տնտեսության ոչ նավթային սեկտորը սկսում է նվազել՝ հանգեցնելով հազարավոր ձեռնարկությունների փակման և աշխատատեղերի կրճատման: Այսինքն՝ առաջանում է մի տարիմաստ իրավիճակ, երբ նավթային գերեկամուտները հանգեցնում են ոչ նավթային սեկտորի, այդ թվում՝ գյուղատնտեսության ոլորտի քայքայմանը և գործազուրկների թվի ավելացմանը: Փաստորեն սկսում են ոչնչանալ տնտեսության այդ ճյուղերը, և նավթային պետությունները խորքային կախման մեջ են հայտնվում աշխատող միակ ուղղությունից՝ նավթագազային համակարգից: Նմանատիպ երկրները շատ հաճախ կոչվում են մեկ տնտեսության պետություններ, ինչն էլ համարվում է ռիսկային՝ նվազեցնելով նրանց կայունության մակարդակը:

Այսպիսով, նավթային ռեսուրսներ ունեցող պետությունները պետական համակարգն ու հատկապես նրա հարկային ոլորտը հզորացնելու, արդյունաբերության ոչ նավթային սեկտորում ներդրումներ կատարելու, ֆինանսական «հոլանդական» հիվանդության ախտանիշներից ազատվելու համար քայլեր ձեռնարկելու փոխարեն գնում են ավելի հեշտ, սակայն ռազմավարական զարգացման տեսակետից սխալ ուղիով՝ հարկերի ու մաքսերի զանգվածային նվազեցման և նավթադոլարների հաշվին շինարարության ու ծառայությունների սեկտորի ֆինանսավորման ճանապարհով:

Նավթի բարձր գների պայմաններում տեղի ունեցող տնտեսական փոփոխություններն ուսումնասիրող Թերի Լին Կարլի աշխատությունն ուղղված էր զգուշացնելու նմանատիպ պետություններին՝ խուսափելու այդ սխալներից: 2003 թ. հրատարակվեց մեկ այլ հետազոտություն՝ Սվետլանա Ցալիկի (Svetlana Tsalik) «Կասպյան նավթային եկամուտներ. ո՞վ կօգտվի» (Caspian Oil Windfalls: Who Will Benefit?) վերնագրով[2]: Այս աշխատանքում ոչ միայն փորձ էր արվում բացատրելու՝ նավթային բարձր եկամուտների վտանգները, այլ նաև որոշակի օրինակներով ցույց են տրվում մեթոդներ նավթի բարձրացող գներին որպես կանոն հաջորդող գնանկման հետևանքներից խուսափելու համար, հատկապես Կասպյան ավազանի պետությունների համար:

Սակայն, չնայած այս զգուշացումներին և կատարված մեծաթիվ հետազոտություններին ու գիտական աշխատանքներին, էներգակիրներով հարուստ շատ պետություններ կրկնում էին այն դասական սխալները, որոնք էլ պատճառ են դառնում նավթի գնանկման պայմաններում ֆինանսատնտեսական և հետագայում քաղաքական խորքային ճգնաժամերի կրկնվելու համար: Հետևաբար, նավթային գերշահույթի շրջանում սխալներ անող պետությունների գոյատևման հիմնական խնդիրն է հասկանալ, թե որքան կարող են ձգվել նավթի ցածր գները, և ինչ ռեսուրսներ ունեն նրանք այդ ճգնաժամը վերապրելու համար, մինչև համեմատաբար բարձր գների ժամանակաշրջանը:

Հարավային Կովկասում այս խնդիրն առաջին հերթին կենսական նշանակություն ունի Ադրբեջանի համար, որի նավթային եկամուտները և արդյունահանման ծավալները տարեցտարի նվազում են՝ հանգեցնելով ֆինանսատնտեսական ու նաև քաղաքական ճգնաժամի: Ադրբեջանը, որն ունի տարածաշրջանում ամենացածր հարկվող համակարգը, ստիպված է լինելու հարկային կոշտ քաղաքականություն իրականացնելու, ինչը կարող է էլ ավելի սրել սոցիալական իրավիճակը և դժգոհություններն այդ երկրում: Ստեղծված իրավիճակում պաշտոնական Բաքուն ստիպված է մեծացնել իր արտաքին պարտքը՝

[2] Svetlana Tsalik, Caspian Oil Windfalls: Who Will Benefit? https://www.opensocietyfoundations.org/sites/default/files/full_report_0.pdf.

© National Library of Armenia

բանակցություններ վարելով Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի հետ, իսկ վերջիններս պահանջում են հարկային կոշտ քաղաքականության մշակում՝ միջազգային պահանջներին համապատասխան[3]:

Նավթի ու գազի եկամուտների անկման պայմաններում 2016 թ. Ադրբեջանի պետբյուջեն էականորեն կրճատվեց և ըստ ադրբեջանական աղբյուրների՝ կազմում է ընդամենը 16 մլրդ մանաթ, որն առկա միջին փոխարժեքով կազմում է մոտ 10 մլրդ դոլար[4]: 2014 թ. Ադրբեջանի բյուջեն կազմում էր մոտ 25 մլրդ դոլար: Այսինքն՝ այն ամենը, ինչ այսօր տեղի է ունենում Ադրբեջանում և, ընդհանրապես նավթ արդյունահանող պետություններում, բազմաթիվ անգամներ կրկնվել է, սակայն նավթից ստացվող գերշահույթների շրջանն այն աստիճան գայթակղիչ է, որ ավտորիտար ռեժիմները կառավարման գրագետ համակարգեր կազմակերպելու փոխարեն, որպես կանոն նախընտրում են այն օգտագործել են սեփական վարչակարգերի ամրապնդման համար:

Կարելի է արձանագրել, որ նմանատիպ պետությունները գոյատևում են ցիկլային երկու համակարգերում՝ բարձր և ցածր գների պայմաններում: Ցածր եկամուտները կարող են ներքաղաքական ճգնաժամերի՝ սոցիալական, էթնիկական ու քաղաքացիական բախումների պատճառ հանդիսանալ: Այն նավթային պետությունները, որոնք ունեն ֆինանսական մեծ միջոցներ, որոշակի հնարավորություն ունեն դիմակայելու ցածր գների ժամանակաշրջանում, օրինակ՝ Սաուդյան Արաբիան կամ Պարսից ծոցի այլ պետություններ, իսկ մյուսները՝ Նիգերիան, Վենեսուելան և այժմ արդեն Ադրբեջանը, որպես կանոն, ֆինանսատնտեսական այդ նավթային փոսից դուրս գալու գործում մեծ դժվարություններ են ունենում: Ավելին, հետագայում նույնիսկ նավթի գնի բարձրացման պայմաններում էական առաջընթաց չի արձանագրվում այդ տիպի պետությունների տնտեսություններում, քանի որ ստիպված են լինում երկար ժամանակ ծախսել՝ առկա ֆինանսական խնդիրները լուծելու և կուտակված պարտքերը մարելու համար:

Աշխարհառազմավարական տեղաշարժը Հարավային Կովկասում

[3] International Monetary Fund, "World Economic Outlook Database", September 18, 016, http://www.imf.org/external/pubs/ft/weo/2016/01/weodata/index.aspx.

[4] 2016 State Budget of Azerbaijan was Approved, http://cesd.az/new/?p=9770.

Ի՞նչ է խորքային առումով այդ տեղաշարժը և ինչպե՞ս է նավթի գնանկումն ազդում դրա վրա: Էներգետիկ աշխարհաքաղաքականության համակարգում թերևս կարևորագույն բաղադրիչն էներգետիկ անվտանգության համակարգն է, որն, ըստ արևմտյան տեսաբանների ներկայիս մեկնաբանության, հենվում է այդ շուկայի ազատականացման գործընթացի վրա: Սակայն էներգետիկ շուկայի ազատականացման համակարգը տարբեր կերպ է գործում նավթի բարձր և ցածր գների պայմաններում, քանի որ փոխվում է պահանջարկի ու առաջարկի հարաբերակցությունը:

Նավթի բարձր գնի պայմաններում, երբ պահանջարկը որպես կանոն ավելին է, քան առաջարկը, նավթ արդյունահանող ցանկացած պետություն, լինի մեծ թե փոքր, ինչպես օրինակ՝ Ադրբեջանը, նավթի իր 0.4%[5] պաշարով մեծ արժեք է ներկայացնում և հայտնվում է նավթ սպառող հիմնական խաղացողների ուշադրության կենտրոնում: Այդ պետությունը (Ադրբեջանը) նույնիսկ նավթի փոքր պաշարով դառնում է արժեքավոր խաղացող շուկայում և, օգտվելով այդ կարգավիճակից, փորձում է այն օգտագործել իր ներքաղաքական և տարածաշրջանային շահերի ենթատեքստում:

Ադրբեջանը, օգտվելով նավթի բարձր գներից ու պահանջարկի աճից, փորձում էր տարածաշրջանային առանցքային պետության դերը ստանձնել, իսկ նավթ սպառող մի շարք պետություններ պատրաստ էին սատարելու այդ հարցում: Սակայն իրավիճակը կտրուկ փոխվում է նավթի գների անկման շրջանում, երբ առաջարկը գերազանցում է պահանջարկը: Նավթ սպառող հիմնական պետությունների հետաքրքրություններն այդ երկրների ու այնտեղ գործող ռեժիմների հանդեպ նվազում են և նրանց նույնիսկ սկսում են քննադատել նրանց կառավարման ավտորիտար համակարգերի համար:

Հարգացման այս սցենարը կրկնվում է բազմիցս, և այսօր ականատես եք Ադրբեջանի օրինակին, երբ Արևմուտքը վերջերս սկսեց նկատել քաղբանտարկյալների ու նույնիսկ ժառանգական բռնատիրության առկայությունը: Սկսում է մարել հետաքրքրությունը վերջինիս նավթագազային սեկտորի նկատմամբ, ինչն իր հերթին հանգեցնում է այդ պետության

[5] BP Statistical Review of World Energy, June, 2016, https://www.bp.com/content/dam/bp/pdf/energy-economics/statistical-review-2016/bp-statistical-review-of-world-energy-2016-full-report.pdf.

© National Library of Armenia

707-2017

հանդեպ նավթի շուկայի հիմնական սպառողների վերաբերմունքի կտրուկ փոփոխության, և նույնիսկ պարզվում է, որ Ադրբեջանն իր նավթագազային պաշարներով գերագնահատված է եղել, և ժամանակն է դրանք վերագնահատել՝ նվազեցնելով նրա նշանակությունն էներգետիկ միջազգային շուկայում:

Ըստ ադրբեջանական մամուլի՝ ներկայումս դոլարի իրական արժեքը Բաքվի սև շուկայում 1-ը 2 հարաբերության է, ինչը նշանակում է, որ Ադրբեջան պետությունն իր բոլոր ակտիվներով հանդերձ գերագնահատված է առնվազն 2 անգամ[6]:

Հարավային Կովկասում Ադրբեջանի նավթային դերի փոփոխությունը տեղի է ունենում Իրանի ակտիվության ֆոնի վրա, որի՝ էներգետիկ շուկա վերադարձը սպառնալիքներ է ստեղծում առաջին հերթին մանր խաղացողների համար: Այսինքն՝ Ադրբեջանի՝ որպես նավթ արդյունահանող պետության դերի նվազումը նվազեցնում է նաև Հարավային Կովկասի՝ որպես նավթի արդյունահանման և տարանցման տարածաշրջանի աշխարհատնտեսական նշանակությունը: Հարավային Կովկասը՝ որպես նավթ արդյունահանող տարածաշրջան, սպառող հիմնական պետությունների համար աստիճանաբար կարող է կորցնել իր հետաքրքրությունը, իսկ նավթի արտահանման ծավալների նվազումը և հատկապես Կենտրոնական Ասիայից էներգակիրների տեղափոխման չնչին ծավալները հուշում են, որ տարանցման տեսանկյունից հետաքրքրությունը նույնպես կարող է նվազել:

Ադրբեջանի նավթային վարկանիշի նվազումը տեղի է ունենում Հայաստանի՝ որպես տարածաշրջանում կայունության պահպանման հիմնական դերակատարի վարկանիշի բարձրացման ֆոնին: Սա հատկապես նկատելի է քառօրյա պատերազմից հետո, երբ պարզ դարձավ, որ նավթային եկամուտների նվազմամբ Ադրբեջանն իր վարքով և գործողություններով սկսում է դառնալ տարածաշրջանային կայունությանն սպառնացող անկանխատեսելի ու ագրեսիվ պետություն, ինչը հարված էր վերջինիս վարկանիշին՝ որպես նավթի ու գազի կայուն մատակարարի:

Հարավային Կովկասը կորցնում է նավթային շրջանի կամ էներգակիրների տեղափոխման միջանցքի վերջին տարիներին նրան պարտադրված վարկանիշը, և կարող է ձեռք բերել

[6] Валютный "черный рынок" возвращается, 13.01.2016, http://ru.sputnik.az/economy/20160113/403346403.html.

կարևորագույն տրանսպորտային խաչմերուկի կարևորություն՝ հարավ-հյուսիս և արևելք-արևմուտք ուղղություններով, որտեղ նավթի ու գազի դերակատարությունը չունի նախկին նշանակությունը, չնայած նաև վերջնականապես չի կորցրել իր դերը:

Նոր ձևաչափով տարածաշրջանը՝ որպես տարանցիկ առևտրային միջանցք, կարող է հետաքրքրություն ներկայացնել, եթե կան այլընտրանքային ուղիներ, առաջին հերթին Ադրբեջանին: Երկրորդը՝ եթե կան կայունության ու անվտանգության հստակ երաշխիքներ, իսկ այդպիսիք հնարավոր է պահպանել միայն Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների շահերի հաշվառմամբ: Հայաստանը ոչ միայն կայուն զարգացող, այլև տարածաշրջանում կայունություն ու խաղաղություն պարտադրող պետության վարկանիշ է ձեռք բերել:

Հետևաբար, փոփոխությունների, վերադասավորումների, վերաիմաստավորման ու վերագնահատումների այս շրջանում Հայաստանը նոր հնարավորություն է ստանում՝ զարգացնելով իր հարաբերություններն Իրանի ու Ռուսաստանի հետ՝ Հյուսիս-Հարավ ծրագրի իրականացման առումով, ինչպես նաև մասնակցելու Արևելք-Արևմուտք տրանսպորտային նոր ծրագրերի իրականացման նախագծերին: Այս ծրագրերի լիարժեք իրականացումը հնարավոր է միայն Հայաստանի մասնակցության դեպքում, ինչն իրականացվում է նաև Վրաստանի ներգրավմամբ, որն իր հերթին հնարավորություն է տալիս վերջինիս մասամբ ազատվելու թուրք - ադրբեջանական տանդեմի ազդեցությունից:

Հարավային Կովկասում տրանսպորտային միջանցքների կառուցման նախագծում Հայաստանի մասնակցության կարևորությունը բխում է այդ ծրագրերին կայունություն ու հուսալիություն հաղորդելու տրամաբանությունից: Բացի այդ ծրագրով շահագրգիռ պետությունները տրանսպորտային ծրագրերի իրականացման համար տարածաշրջանում ցանկանում են տեսնել անվտանգության հստակ երաշխիքներ, ինչին կարելի է հասնել միայն Հայաստանի ներգրավմամբ ու նրա շահերի հաշվառմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նավթի գների անկումն ունենում է ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական հետևանքներ. ազդում է նավթային տարածաշրջանների ռազմաքաղաքական հավասարակշռության վրա և նվազեցնում դրանց կարևորությունն էներգետիկ համաշխարհային շուկայի համար: Հարավային Կովկասում,

© National Library of Armenia

որտեղ տեղի է ունենում աշխարհառազմավարական փոփոխությունների գործընթաց, այն արտահայտվում է տարածաշրջանի նավթի արդյունահանման ու արտահանման միջանցքի դերակատարման նվազմամբ: Նավթի ցածր գների պայմաններում նկատվում են տարածաշրջանի էներգետիկ նշանակության կարևորության նվազման հստակ միտումներ, ինչը պայմանավորված է նավթի միջազգային շուկայում պահանջարկի ու առաջարկի հավասարակշռության խախտմամբ: Սակայն անցումային այս փուլում տարածաշրջանը դեռ չի ազատվել նավթի ու գազի արդյունահանման և տարանցման կենտրոնի ընկալումից, միաժամանակ Հարավային Կովկասում դեռ լիարժեքորեն չեն նախանշվում նոր աշխարհառազմավարական կենտրոնի՝ տրանսպորտային խաչմերուկի վերածվելու հստակ միտումներն ու դրա վերջնական կարևորությունը մեծ տերությունների համար:

Անցումային ժամանակաշրջանի տևողությունը կախված է երկու հանգամանքից՝ միջազգային շուկայում նավթի գներից և տրանսպորտային ծրագրերի իրականացման արագությունից: Առաջին պլան են մղվում տարանցիկ-տրանսպորտային միջանցքների կառուցման կարևորության հարցերը, որոնք էլ կնախանշեն տարածաշրջանի աշխարհառազմավարական կարևորությունը թե՛ տարածաշրջանի պետությունների, թե՛ գլոբալ խաղացողների համար:

ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև տնտեսական համագործակցության հիմնասյունները դրվեցին ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո, երբ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր սոցիալ-տնտեսական ծանրագույն ժամանակաշրջանում, և տնտեսական հարաբերությունները զարգանում էին քայլ առ քայլ՝ ապրանքափոխանակությունից հասնելով մանր առևտրի և ձգտելով իրականացնել խիստ կարևոր համատեղ ծրագրեր: Հարաբերությունների ձևավորման առաջին տարիներին առկա խնդիրներից էին թերևս ոչ միայն տեղեկատվության պակասը, այլ նաև երկրների տնտեսությունների կառուցվածքային տարբերությունները: Իրանը վարում է առավելապես ներփակ պլանային տնտեսությանը բնորոշ քաղաքականություն՝ հովանավորելով իր սեփական ապրանքատեսակները, հարկաբյուջետային և մաքսային քաղաքականություն իրականացնելով ու դժվարացնելով այլ երկրների ապրանքների մուտքը: Հայկական շուկան, ըստ էության, մեծ հետաքրքրություն չի ներկայացնում Իրանի համար, քանզի շուկան բավական փոքր է, և գնողունակությունն էլ ցածր է: Սակայն այս պարագայում խիստ կարևոր է ՀՀ աշխարհագրական դիրքը, որը կարող է կամուրջ դառնալ Իրանի և ԱՊՀ մի շարք երկրների միջև, այսօր արդեն նաև ԵԱՏՄ երկրների, իսկ Իրանը Հայաստանի համար Մերձավոր Արևելքի և Պարսից ծոցի երկրների միջև տնտեսական համագործակցության զարգացման գործում նշանակալի դեր կարող է ունենալ:

ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո նախագծվեց հետագա գործունեության ողջ ծրագիրը: 1992 թ. փետրվարի 9-ին ստորագրվեց հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին

© National Library of Armenia

հռչակագիրը[1], որտեղ արծարծվում էին երկու երկրների միջև տնտեսական համագործակցության սկզբունքները:

1992 թ. նոյեմբերին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրամանագրով ստեղծվեց «Հայ-իրանական կապերի կոորդինացման միջպետական հանձնաժողովը», որը մեծ ազդեցություն ունեցավ հայ-իրանական տնտեսական հարաբերությունների աստիճանական զարգացման ու ծավալման գործում: Նույն ժամանակամիջոցում՝ 1992 թ., երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները խթանելու նպատակով Թեհրանում ստեղծվեց «Իրան-Հայաստան առևտրային պալատ»՝ իրանահայ գործարար Լևոն Ահարոնյանի գլխավորությամբ:

1990-ական թվականներին Հայաստանի արտաքին տնտեսական կապերի մեջ Իրանը գրավում էր երկրորդ տեղը՝ զիջելով միայն Ռուսաստանին: 1994 թ. համեմատությամբ երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունն ավելացավ երեք անգամ և հատեց տարեկան 200 մլն դոլարի սահմանը: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ 1995 թ. ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև ստորագրվեց առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը: Այդ համաձայնագրի 1-ին կետով նախատեսվում էր փոխշահավետության հիման վրա և յուրաքանչյուր երկրի օրենսդրության շրջանակներում զարգացնել երկարաժամկետ առևտրատնտեսական համագործակցություն: Համաձայնագրի 3-րդ կետով միմյանց պետք է տրամադրվեր առավելագույն բարենպաստության ռեժիմ՝ առևտրատնտեսական հարաբերությունների գծով[2]:

1997 թ. Երևանում կազմակերպվեց իրանական արդյունաբերական և լայն սպառման ապրանքների մեծ ցուցահանդես, որն ունեցավ շարունակական բնույթ: Այդ ցուցահանդեսներն առևտրական, արդյունաբերական ընկերություններին հնարավորություն են տալիս ճանաչելու միմյանց ապրանքանիշերը և փոխշահավետ պայմանագրեր կնքելու: Այս ցուցահանդեսների աշխարհագրությունը հետագայում ընդլայնվեց, և այժմ իրականացվում է նաև Հայաստան-Ռուսաստան և

[1] ՀՀ ԱԳՆ Դիվանագիտական բանբեր, Հայաստան-Իրան, Վենետիկ, 1993 թ., էջ 19:

[2] Համաձայնագիր ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ, ՀՀ ԱԳՆ, Պատմադիվանագիտական բաժին, ցուցակ 1, գործ N 286:

Իրան միջազգային արդյունաբերական ցուցահանդես, որին հաջորդում է երևանյան բիզնես-ֆորումը: Սակայն մինչև այսօր էլ երկու երկրների տնտեսական հարաբերությունների զարգացումը խոչընդոտում են մի շարք խնդիրներ: Դրանք հիմնականում վերաբերում են մաքսային ոլորտին, ինչպես նաև օրենսդրական դաշտի անկատարությանը: Այն հնարավոր կլինի լուծել երկու երկրների մաքսային ու հարկային տոկոսադրույքների իջեցման, արգելքների վերացման, արտահանման ու ներմուծման օրենքների պարզեցման ու դյուրացման ճանապարհով[3]:

2000-ական թվականների սկզբին նկատվում էր հայ-իրանական առևտրային կապերի որոշակի թուլացում 90-ականների առաջին կեսի համեմատությամբ, քանզի հայկական շուկա թափանցեցին ռուսական ապրանքները, որոնք ավելի որակյալ և «հարազատ» էին Հայաստանին: Հետագայում Հայաստանի շուկա թափանցեցին եվրոպական ապրանքներ, որոնք ինչ-որ առումով դուրս մղեցին թե՛ պարսկական և թե՛ ռուսական ապրանքները[4]: 2000 թ. Իրանը Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Բելգիայից հետո գրավեց 4-րդ տեղը[5]: Բոլոր պայմանավորվածություններով հանդերձ իրանական շուկան շարունակում է փակ մնալ հայ արտադրողների համար: Թեև այդ երկրում հայկական ապրանքատեսակների ներմուծումն արգելող որևէ որոշում չկա, սակայն իրանական մաքսատանը խոչընդոտներ են ստեղծվում:

Ուշագրավ է, որ ՀՀ բոլոր երեք նախագահներն էլ արտաքին քաղաքականության ոլորտում խիստ կարևորել են հայ-իրանական հարաբերությունները՝ ուշադրության կիզակետում պահելով հատկապես տնտեսական հարաբերությունների բարելավումը:

[3] Հայ-իրանական գործարար համաժողովի մասնակիցների դիմումը երկու երկրների օրենսդիր և գործադիր մարմինների բարձրաստիճան պաշտոնյաներին, 21 նոյեմբերի, 1998 թ., ՀՀ ԱԳՆ, Պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 46, 47:

[4] Թորոս Թորոսյան, Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության առևտրատնտեսական կապերը /հիմնախնդիրներ և հեռանկարներ/, Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, Երևան, N 6-7, 2002 թ., էջ 80:

[5] ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի այցն Իրան, Արաքս, Թեհրան, 24 (107), հունվար, 2002, էջ 20:

© National Library of Armenia

2004 թ. առաջին անգամ Հայաստան ժամանեց ԻԻՀ, նախագահը, որով նոր հարթության վրա դրվեցին երկկողմ հարաբերությունները: Մ. Խաթամիի հետ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը կարևոր քննարկումներ ծավալեց երկկողմ հարաբերություններում առկա խնդիրների լուծման ուղիները գտնելու վերաբերյալ և այցի ավարտին ստորագրեց 7 համաձայնագիր, որոնց զգալի մասը տնտեսական հարաբերություններին էր վերաբերում: 2006 թ. հունվարին Թեհրանում տեղի ունեցավ Իրան-Հայաստան կապերի կոորդինացման միջկառավարական հանձնաժողովի 6-րդ նիստը, որի ընթացքում կողմերն ընդգծեցին «Հյուսիս-Հարավ առանցքում» Հայաստանի պարտադիր մասնակցությունը: Նիստի ժամանակ ԻԻՀ-ի ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Դավուդ Դանեշ Ջաֆարին գոհունակությամբ արձանագրեց, որ 2005 թ. զգալիորեն աճել է Հայաստան-Իրան առևտրաշրջանառությունը, 2005 թ. Իրանը Հայաստան է արտահանել 150 մլն դոլարի ապրանք, իսկ Հայաստանը՝ 40 մլն դոլարի ապրանք Իրան[6]: Սակայն այս թվերից նկատելի է, որ Իրանը դեռ տեղական արտադրանքի նկատմամբ շարունակում է վարել պրոտեկցիոնիստական քաղաքականություն, ինչով էլ պայմանավորված է հայկական ապրանքների դժվար մուտքն իրանական շուկա:

2006 թ. հուլիսի 5-ին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանն աշխատանքային այցով մեկնեց ԻԻՀ, որի հիմնական նպատակն էր հստակեցում մտցնել միջտնտեսական հարաբերություններում, հատկապես էներգետիկայի ոլորտում՝ հայ-իրանական գազատարի, երրորդ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի, ինչպես նաև այլընտրանքային ճանապարհի կառուցման բնագավառում[7]:

ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի հրավերով 2011 թ. դեկտեմբերի 23-ին Հայաստանում էր գտնվում ԻԻՀ-ի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը: Նախագահներն ընդգծեցին Հայաստանի Հանրապետությունում և Իրանի Իսլամական Հանրապետությունում գործարար շրջանակների տնտեսական և ներդրումային գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծման կարևորությունը[8]: Բանակցություններից հետո ԻԻՀ-ի արտգործնախարար Ալի Աքբար Սալեհին հայտարարեց, թե Իրանը և Հայաստանը տնտեսական և առևտրային կապերը խթանելու նպատակով հող են նախապատրաստում ազատ առևտրի համաձայնագրի կնքման շուրջ[9]: 2012 թ. Ապրիլի 29-ին ԻԻՀ-ի նախագահ Մահմուդ Ահմադինեժադն առաջարկեց իր օգնականներին «Պատրաստել ազատ առևտրի գործունեության համար պայմանները»՝ ընդգծելով երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների կարևորությունը[10]:

Այսպիսով, հայ-իրանական տնտեսական հարաբերությունների զարգացման կարևոր խնդիրներից են արտահանման և ներմուծման հարաբերակցության կարգավորումը, ներդրումների ներգրավումը: Այս խնդիրների լուծումը զգալիորեն կախված է հայ-իրանական առևտրատնտեսական կապերի հետագա զարգացման և կատարելագործման գործընթացից:

Չնայած հայկական ապրանքները մեծ դժվարությամբ են մուտք գործում իրանական շուկա, սակայն առկա թվերը հուշում են, որ որոշակի ծավալի ապրանք այնուամենայնիվ մտնում է իրանական շուկա: Հայաստանից արտահանվող ապրանքների գերակշռող մասը կազմում են քիմիական արդյունաբերության ապրանքները, մետաղյա ջարդոնները, թափոնները, հանքահումքային ապրանքները, երկակի նշանակության օգտագործման ապրանքները:

Իսկ ահա Իրանից Հայաստան ներկրվել են կենսական նշանակության ապրանքներ, օրինակ՝ կաթնամթերք, ձու, չորացված մրգեր, տոմատի մածուկ, սոխ և սխտոր, մրգեր, ցորեն, բրինձ, ինչպես նաև նավթային կոքս, բիտում, որն օգտագործվում է ասֆալտի մեջ, ծծմբաթթու, ազոտական թթու,

[6] В Тегеране проходит шестое заседание Межправительственной комиссии по торгово – экономическому сотрудничеству Ирана и Армении, 31 января 2006, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=37132, В 2005 г. товарооборот между Ираном и Арменией составил 190 млн. долл. США, 01 февраля, 2006, http://www.iran.ru/rus/news_iran. php?act=news_ by_id&news_id=37160.

[7] Тегеран и Ереван высоко оценивают уровень ирано-армянского сотрудничества, ИРНА, 18 декабря 2006 года, http://www.irna.ir/ru/news/ view/menu-291/0612181577142243.htm.

[8] ՀՀ նախագահի և Իրանի նախագահի համատեղ հայտարարությունից, 23.12.2011 թ., http://www.aravot.am/2011/12/23/287212/.

[9] Iran, Armenia mulling free trade agreement, Tehran Times, Dec.25 2011, http://www.tehrantimes.com/economy-and-business/93896-iran-armenia-mulling-free-trade-agreement.

[10] The Armenia-Iran Relationship: Strategic implication for security in the Sout Caucasus region, Ed. by Claude Moniquet and William Racimora, European Strategic Intelligence & Security Center, 2013, p. 8.

© National Library of Armenia

տարբեր տեսակի քիմիական նյութեր և տարրեր, գորգ և այլն[11]: Ընդհանուր առմամբ Իրանից Հայաստան ներմուծվում է ավելի քան 600 անուն ապրանք՝ Հայաստանից Իրան արտահանվող շուրջ 100 անուն ապրանքի դիմաց[12]:

Որոշ տվյալներով Հայաստանում գրանցված են իրանական մոտ 2000 ձեռնարկություններ: Իսկ 2016 թ. դրությամբ Իրանում չի գրանցվել ոչ մի հայկական ընկերություն: Իրանի նման քաղաքականությունը կարող է կապված լինել նրա նկատմամբ իրականացված պատժամիջոցների և սեփական արտադրողին պաշտպանելու հետ: Իրանի և միջազգային վեցնյակի միջև 2015 թ. ձեռք բերված միջուկային համաձայնությունից հետո Իրանի նկատմամբ մի շարք պատժամիջոցներ հանվեցին, որը հնարավորությունների լայն դաշտ է բացում իրանական գործարար աշխարհի առջև: Իրանական կողմը կարող է վերանայել ՀՀ-ի նկատմամբ իր տնտեսական քաղաքականությունը, որը մեծապես կնպաստի հայ-իրանական առևտրային համագործակցությանը: Հայաստանն առավել արդյունավետ կարող է համագործակցել Իրանի հյուսիսային նահանգների հետ: Այսօր Ատրպատականը՝ Իրանի հյուսիսային նահանգը, որին սահմանակցում է Հայաստանը, վերածվում է խոշոր բիզնես-նահանգի: Մոտ 3 միլիոնանոց Թավրիզն ավելի մեծ առևտրաշրջանառություն ունի, քան Հայաստանը, նրա բյուջեն մի քանի անգամ ավելի մեծ է, քան Հայաստանի Հանրապետության բյուջեն: Առկա տեղեկատվության համաձայն՝ Թավրիզի բյուջեն կազմում է Թեհրանի բյուջեի մոտավորապես 30%-ը: Ակնհայտ է, որ Ատրպատական նահանգի ղեկավարությունը, հաշվի առնելով նրանց թյուրքախոս լինելու հանգամանքը, պետք է որ ցանկություն ունենա մեծացնելու առևտրաշրջանառությունը սահմանակից երկրի հետ:

Այսօր հայ-իրանական տնտեսական համագործակցությանը կարող են նպաստել համատեղ ծրագրերի իրականացումը, օրինակ՝ հնարավոր է Իրանից կիսավարտ ապրանքատեսակները բերել Հայաստան, ամբողջական մշակման են-

[11] ՀՀ մաքսային ծառայություն, ՀՀ արտաքին առևտուրն երկիր-ապրանք կտրվածքով (2010-2011 թթ.), http://www.customs.am/Content.aspx?itn=csClcsa2011.

[12] Ինչ ենք վաճառում Իրանին և ինչ ենք այնտեղից ներմուծում. ՀՀ-Իրան առևտրի իրական պատկերը (ինֆոգրաֆիկա, http://b4b.am/news/ 25.01.2016 թ.:

թարկել և դարձնել պատրաստի արտադրանք, վրան փակցնել «Արտադրված է Հայաստանում» և արտահանել միջազգային շուկա: Հատկապես դա դառնում է արդիական Հայաստանի՝ ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո: Հայաստանը նաև օգտվում է ԵՄ 28 երկրներ արտոնյալ պայմաններով ապրանք ներմուծելու իրավունքից:

ՀՀ-ԻԻՀ համատեղ ծրագրերը, որոնք կյանքի են կոչվել կամ մնացել են թղթի վրա

Ժամանակին բավականաչափ քննարկվում էր **Մեղրի-Նորդուզի սահմանային շուկայի հարցը,** որն արդյունավետ չգործեց՝ մեխանիզմների բացակայության և օրենսդրական դաշտում առկա հակասությունների պատճառով: Այն մի քանի անգամ բացվեց և փակվեց: Ըստ հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Ա. Մովսիսյանի. «...այն նպատակները, որ ունեինք, չիրականացան: Փաստորեն դա դարձել էր մի շուկա, որն արդյունք չտվեց»[13]:

2004 թ. Իրանում՝ Ջուլֆայում, ստեղծվեց «**Արաս» ազատ առևտրի գոտին**, որը ստեղծման առաջին տարիներին ոչ լիարժեք էր գործում: Ազատ առևտրի գոտին ազատված է հարկերից: Հարկային պարտավորություններն անհրաժեշտ չեն նաև արտահանման ժամանակ[14]: Այսօր արդեն նկատվում է առևտրի գոտու ակտիվությունը, որտեղ հայկական ընկերությունները ևս կարող են լավագույնս ներկայացնել իրենց արտադրանքը:

Հայ-իրանական բանակցություններում առանձնահատուկ տեղ էին զբաղեցնում **Քաջարան-Մեղրի թունելի վերաբերյալ** քննարկումները, որը սակայն ֆինանսական խնդիրների պատճառով չիրականացավ:

Հայաստան-Իրան հարաբերությունների հաստատումից ի վեր բանակցությունների օրակարգում է գտնվել **Հայաստան-Իրան երկաթգծի** կառուցման ծրագիրը, որը տնտեսական անվտանգության ևս մեկ երաշխիք կդառնա Հայաստանի համար: Բնականաբար քննարկումների հենց սկզբից էլ կող-

[13] Հարցազրույց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար (2001-2014 թթ.), Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ (2006-2014 թթ.) Արմեն Մովսիսյանի հետ, հունիսի 15, 2013, Երևան:

[14] Իրանը հայ գործարարներին լայն հնարավորություններ է առաջարկում սահմանամերձ «Արաս» ազատ առևտրի գոտում, 11.11.2014, http://www.yerkirmedia.am/wap.php?act=news&lan=hy&id=23005.

© National Library of Armenia

մերը գիտակցում էին, որ այն բավական ֆինանսներ պահանջող ծրագիր է, և որ դրա կառուցման մեջ երկու երկրներն էլ ունեն իրենց շահերը: Հայաստանը, այսպիսով, կարող է դուրս գալ շրջափակված վիճակից: Իրանը ցանկանում է այլընտրանքային ճանապարհ ունենալ դեպի Եվրոպա, ինչպես նաև խորացնել համագործակցությունը ԵԱՏՄ երկրների հետ: Սակայն Հայաստանի տարածքում կառուցվող երկաթգծի արժեքը որոշ տվյալներով կազմելու է 3 մլրդ 200 մլն դոլար, որը Հայաստանն այս պահին չի կարողանում հայթայթել[15]: Միևնույն ժամանակ 2016 թ. փետրվարին Ադրբեջանի նախագահի Իրան կատարած այցի շրջանակներում ԻԻՀ-ի նախագահ Հ. Ռոհանին մամուլի ասուլիսի ժամանակ նշեց, որ մինչև 2016 թ. ավարտը Իրանի և Ադրբեջանի երկաթգծերը կմիավորվեն[16]: 2016 թ. դեկտեմբեր ամսվա տվյալներով դեռ այդ աշխատանքներն ավարտված չեն, և երկաթգծերի միանալուն դեռ շատ կիլոմետրեր կան:

Հատկանշական է, որ Հայաստանն Իրանի համար դառնում է ցամաքային ճանապարհի այլընտրանք: 2016 թ. նոյեմբերի 23-ին Գերմանիայից Իրան հասան առաջին բեռները նոր, այլընտրանքային ճանապարհով: Բեռնափոխադրությունն իրականացվեց Սև ծովով, հասավ Փոթի նավահանգիստ, այնուհետև երկաթգծով Հայաստան՝ մինչև Երասխ կայարան, այնտեղից էլ բեռնատար մեքենաներով հասցվել է Իրան: Համաձայն Իրանի միջազգային տրանսպորտի ասոցիացիայի քարտուղար Ղոլամհոսեյն Ամիրի. «Բեռնափոխադրման ծախսը նոր ուղիով կազմեց 1-2% ավելի ցածր»[17], քան Թուրքիայի տարածքով անցնելու դեպքում: Հաշվի առնելով, որ վերջին տարիներին Թուրքիայի տարածքով Եվրոպայից եկող բեռների տեղափոխումը խնդիրներ է առաջացնում, կարծում ենք, որ այս նոր ուղղությունը գերակա կդառնա Իրանի Իսլամական Հանրապետության համար: Իսկ տարիներ հետո հնարավոր է հավելյալ ֆինանսական հատկացումներ հայթայթելու պարագայում անդրադառնանք Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման ծրագրին, ինչը շատ ավելի կհեշտացնի այդ բեռների փոխադրման գործընթացը:

[15] Հայաստան-Իրան երկաթգծի 3 մլրդ 200 մլն-ոց ծրագրի համար ներդրում է անհրաժեշտ http://galatv.am/hy/news/3-200/.

[16] Рухани: Железные дороги Ирана и Азербайджана будут соединены к концу года http://kavkasia.net/Azerbaijan/2016/1456259604.php.

[17] 1st European Cargo Bypasses Turkey to Reach Iran, November 22, 2016, https://financialtribune.com/articles/domestic-economy/54005/1st-european-cargo-bypasses-turkey-to-reach-iran.

Դեռևս 1992 թ. փետրվարի 9-ին կնքված հայ-իրանական հռչակագիրը ներառում էր էներգետիկ բնագավառում համագործակցության հարցեր: Առաջին անգամ **Հայաստան-Իրան գազատարի ծրագրի** գաղափարն արծարծվել է 1992 թ. միջկառավարական համաձայնագրում: 2007 թ. մարտի 19-ին ի վերջո բացվեց հայ-իրանական գազատարի առաջին հատվածը: ԻԻՀ-ի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը բարձր գնահատելով Հայաստանի հետ ձեռք բերված համաձայնություններն էներգետիկայի, գազի, նավթի և ջրային ռեսուրսների ոլորտներում, նշեց. «Այդ ծրագրերի իրականացումը կամրապնդի երկու երկրների հարաբերությունները»[18]: Ըստ էության այս ծրագրով նախատեսվում էր ԻԻՀ-ից ստանալ գազ, որը վերածվելու էր էլեկտրաէներգիայի և արտահանվելու էր Իրան երկու երկրների միջև կառուցված **բարձրավոլտ էլեկտրահաղորդման** երկու գծերի միջոցով: Այսօր արդեն աշխատանքներ են տարվում բարձրավոլտ էլեկտրահաղորդման 3-րդ գծի կառուցման ուղղությամբ, որով էապես առաջընթաց կգրանցվի երկու երկրների միջև էներգետիկ համագործակցության բնագավառում: **Էլեկտրահաղորդման 3-րդ** գծի հիմնարկեքը տեղի է ունեցել 2010 թ. և պետք է ավարտին հասցվի 2017 թ.: Իրան-Հայաստան 400կՎ երկշղթա օդային գծի՝ Հայաստանում կառուցվող հատվածի երկարությունը մոտ 279 կմ է: Իրան-Հայաստան 400 կՎ երրորդ էլեկտրահաղորդման գծի և «Նորավան» ենթակայանի կառուցումը հնարավորություն կտա երկու երկրների էներգահամակարգերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը 350ՄՎտ-ից հասցնելու մինչև 1000ՄՎտ-ի[19], որը կբարձրացնի առաջին հերթին Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության մակարդակը: Այս ծրագիրը կյանքի կոչելը հնարավորություն կընձեռի տարածաշրջանի էներգետիկ համակարգերին միանալու իրար և

[18] Президент ИРИ: Иран не видит никаких преград на пути дальнейшего развития взаимоотношений с Арменией, 20 марта 2007, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=45638.

[19] Հայ-իրանական էլեկտրահաղորդման 3-րդ գծի կառուցման համար իրանական կողմը կտրամադրի 107,9 մլն եվրո գումար, 13.08.2015, http://armenpress.am/arm/news/815250/hay-iranakan-elektrahaxordman-3-rd-gtsi-karucman-hamar.html.

© National Library of Armenia

առանց խոչընդոտների անհրաժեշտության դեպքում միմյանց փոխանցելու էլեկտրաէներգիա:

Այսօր արդեն քննարկվում է նաև գազի հետ կապված նոր ծրագիր: 2016 թ. օգոստոսի 4-ի ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ կստեղծվի «Էներգաիմպէքս» փակ բաժնետիրական ընկերությունը, որը հնարավորություն կընձեռի ավելացնելու բնական գազի ներկրումն Իրանի տարածքից՝ առավել արդյունավետ դարձնելով Իրան-Հայաստան գազամուղի օգտագործումը[20]: Հետագայում փորձ է արվելու իրանական գազը Վրաստան արտահանելու, ինչն իրականում ձեռնտու է բոլոր կողմերին: Վրաստանը հնարավորություն կստանա բազմազան դարձնելու գազի ներկրման աղբյուրը՝ ի հակակշիռ ադրբեջանականի: Հայաստանը, հանդիսանալով տարանցիկ երկիր, կստանա տարանցիկության վճար կամ դրան համարժեք գազ, որը կհոգա նրա էներգետիկ անվտանգության խնդիրները: Իրանն իր հերթին կմեծացնի գազի արտահանման աշխարհագրությունը:

1998 թ. սկսած՝ շարունակվում են **էլեկտրաէներգիայի փոխշահավետ սեզոնային փոխանակումները**: Հայաստանն ամառային ամիսներին էլեկտրաէներգիա է տրամադրում Իրանին, փոխարենը այն ստանում է ձմեռային ամիսներին:

Հայաստան-Իրան էներգետիկ համագործակցության մեկ այլ ծրագիր է Հայաստանի տարածքում համատեղ **նավթավերամշակման գործարանի** կառուցումը: Այն եռակողմ ձևաչափ ուներ՝ Հայաստան-Ռուսաստան-Իրան: Նախատեսվում էր Հայաստանում իրանական նավթի բազայի վրա կառուցել նավթավերամշակման գործարան: Այս պայմանագիրն առայժմ սառեցված է, որի հիմնական պատճառը թերևս նավթի գնի շուրջ եղած անհամաձայնությունն է[21]:

Կողմերը որոշեցին մեկ այլ ծրագիր իրականացնել՝ **պատրաստի նավթամթերքներ** տեղափոխել Հայաստան՝ Թավրիզ-Արարատ ձգվող 8 մատնաչափ տրամագծով խողովակաշարով, որը բավարարելու է Հայաստանի պահանջարկը: Միջազգային նավթային շուկայում տեղի ունեցող փոփոխություններն

[20] Կստեղծվի «Էներգաիմպէքս» ընկերություն, 4 օգոստոս 2016, http://www.gov.am/am/news/item/12562/.

[21] Տեղեկանք Հայ-իրանական տնտեսական համագործակցության համատեղ նիստի քննարկմանը ներկայացվող հարցերի մասին, ՀՀ ԱԳՆ, պատմադիվանագիտական բաժին, գործ 84, էջ 95:

անկայուն իրավիճակ են ստեղծել նավթամթերքների գնագոյացման ոլորտում: Նախագծման աշխատանքներն ավարտվել են, վերջնականապես հստակեցվում են խաղի կանոնները[22] (Ի.Գ.-Խոսքը վերաբերում է նավթի գնին, և փոխադրման ծախսերին: Այս ծրագիրը դեռևս ամբողջովին օրակարգից դուրս չի եկել):

Իրանական կողմը մեծ ցանկություն ունի ներգրավվելու Հայաստանում **հողմակայանների կառուցման** գործում, ինչի համար 2,5 մլն դոլար դրամաշնորհ է տրամադրել, որպեսզի փորձնական հողմակայան կառուցեն Պուշկինի լեռնանցքում[23]: Այն շահագործման է հանձնվել 2006 թ.: Այսօր ևս քննարկվում են այդ ոլորտում համագործակցության խորացման հարցեր:

Երկու երկրների միջև էներգետիկ ոլորտի համագործակցության հաջորդ հատման կետը **Արաքս գետի վրա կառուցվող հէկ-երն են:** Այն լինելու է երկու հիդրոէլեկտրակայանից բաղկացած կասկադ, մեկը Հայաստանի կողմում՝ Մեղրիում, մյուսը՝ Ղարաչիլանում՝ Իրանում: Շինարարության ամբողջ ֆինանսական խնդիրը կլուծի իրանական կողմը, որը հէկ կառուցելուց հետո, 15 տարի կշահագործի այն և արտադրված էներգիայով հետ կվերցնի իր ներդրումը, որից հետո Մեղրիի հէկ-ը սեփականության իրավունքով կհանձնվի Հայաստանի Հանրապետությանը[24]: Մեղրու հէկ-ի կառուցման հիմնարկեքն արվեց 2013 թ. նոյեմբերի 8-ին, իրականացվել են գեոդեզական աշխատանքները, սակայն դեռևս 2016 թ. դրությամբ շինարարական բուն աշխատանքները չեն սկսվել, որը բացատրվում է իրանական կողմի ոչ բավարար ֆինանսական հատկացումներով:

Հայաստանի անկախացումից ի վեր **զբոսաշրջությունը** հայտարարվեց մեր երկրի տնտեսության առանցքային ճյուղերից մեկը: Եթե անկախության տարիներին Իրանից Հայաստան այցելում էին բացառապես իրանահայեր, քաղաքական

[22] Հարցազրույց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար (2001-2014 թթ.), Հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ (2006-2014 թթ.) Արմեն Մովսիսյանի հետ, հունիսի 15, 2013, Երևան:

[23] Пути эффективной интеграции энергосистем стран Южного Кавказа, Баку, Ереван, Тбилиси, 2004, с. 43.

[24] Սարիբեկյան Գ., Երկվորյակ ՀԷԿ-ը շուտով լույս աշխարհ կգա, 17/09/2010, http://www.hraparak.am/2010/09/17/erkvoryak-heke-shutov-luys-ashxarhkga/.

© National Library of Armenia

գործիչներ և առևտրի ոլորտի ներկայացուցիչներ, ապա արդեն 2000-ականների սկզբներից Իրանի քաղաքացիները սկսեցին աստիճանաբար բացահայտել իրենց հարևան երկրին: Հայաստանն իրանցիների կողմից լայնածավալ սկսեց բացահայտվել 2008 թ.-ից: Այսպիսով, 2006 թ. Հայաստանի սահմանը հատել են մոտավորապես 30 հազար իրանցի, 2007 թ.՝ մոտ 40 հազար, 2008 թ.՝ մոտ 43 հազար, 2009 թ.՝ մոտ 87 հազար, 2010թ. մոտ 120 հազար, 2011թ. մոտ 134 հազար[25]:

2012 թ. նկատվեց իրանցիների հոսքի նվազում, որը հիմնականում կապված է Իրանի նկատմամբ իրականացված պատժամիջոցների հետ, որն արդեն ազդում էր քաղաքացիների վրա, քանզի իրանական ռեալը օրօրի արժեզրկվում էր:

2016 թ. ՀՀ-ն և ԻԻՀ-ն որոշեցին վերացնել մուտքի արտոնագրերը երկու երկրների միջև: «Քաղաքացիների առանց մուտքի արտոնագրերի այցելությունների մասին» փոխըմբռնման հուշագիրը վավերացնելու հարցը քննարկվեց և ընդունվեց խորհրդարանում: Նախատեսվում է, որ այցելությունների ժամանակ քաղաքացին առավելագույնը մինչև 90 օր կարող է գտնվել տվյալ երկրում[26]: Դա կարող է լինել անընդհատ 90 օր, կարող է լինել ընդհատումներով 180 օրվա ընթացքում: Առանց վիզայի ռեժիմը բնականաբար կխթանի զբոսաշրջիկների նոր հոսք ու կստեղծի առավել նպաստավոր պայմաններ ՀՀ-ի և ԻԻՀ-ի քաղաքացիների փոխադարձ այցելությունների համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Իրանի նկատմամբ պատժամիջոցների չեղարկումից հետո Հայաստանում կարծում էին, թե Իրանը կվերանայի տնտեսության ոլորտում իր նախկին քաղաքականությունը, հատկապես հարևան երկրների նկատմամբ: Ցավոք մինչ այս պահը դեռ Իրանը վարում է սեփական արտադրանքի հովանավորման քաղաքականությունը, ինչով դժվարացնում է այլ երկրների մուտքն իրանական շուկա:
2. Առևտրատնտեսության ոլորտում հարաբերությունների

[25] Հարցազրույց ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության և տնտեսական զարգացման վարչության պետ Մեխակ Ապրեսյանի հետ, ապրիլի 3, 2012 թ., Երևան:

[26] Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումը, 14.06.2016 թ., http://www.concourt.am/armenian/decisions/ common /2016/pdf/sdv-1281.pdf.

խորացման միակ կռվան կարող է հանդիսանալ որոշ ապրանքատեսակների նկատմամբ երկուստեք արտոնյալ պայմանների ստեղծումը:

3. Թե՛ Իրանը և թե՛ Հայաստանն ըստ էության շահագրգռված են տնտեսական հարաբերությունների զարգացման հարցով: Իրանը կարող է օգտվել Հայաստանի՝ ԵԱՏՄ-ի անդամակցությունից և ԵՄ արտոնյալ համագործակցությունից՝ իր ապրանքներն այդ շուկաներ առավել բարենպաստ ռեժիմով հասցնելու համար:
4. Հայաստանը պետք է առանց արգելքի իր ապրանքները ներկրի Իրան և նաև Իրանի տարածքով դուրս գա այլ շուկաներ:
5. Այսօր հայ-իրանական գազամուղն աշխատում է ոչ իր ամբողջական հզորության չափով: 3-րդ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի, իսկ հետագայում նաև 4-րդի կառուցմամբ հայ-իրանական էներգետիկ ոլորտում մենք նոր որակ և ռազմավարական հեռանկարներ կարող ենք արձանագրել:
6. Զբոսաշրջության ոլորտում անհրաժեշտություն է նկատվում խորացնելու աշխատանքները տուրօպերատորների, հյուրանոցների հետ: Հատկապես մարտ ամսին անհրաժեշտություն է զգացվում համակարգելու ժամանող իրանցիների խմբերի այցը, կազմակերպելու տարատեսակ միջոցառումներ: Բնականաբար, այդ օրերին ՀՀ ոստիկանության և Ազգային անվտանգության մարմիններն առավել ինտենսիվ աշխատանք պետք է իրականացնեն՝ կանխելու հնարավոր առաջացած խնդիրները:

© National Library of Armenia

ԵՎԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ՀԵՏ

Սաուդյան Արաբիան և Ճապոնիան ռազմավարական գործընկերներ են: Երկկողմ հարաբերությունները, որոնք ունեն ավելի քան 60 տարվա պատմություն, հիմնված են փոխշահավետության, երկու երկրների միջև բարեկամության և սերտ համագործակցության վրա: Իհարկե, առաջին հերթին Ճապոնիային հետաքրքրում է Սաուդյան Արաբիան իր նավթային մեծ պաշարներով: Երկու կողմերը մեծ տեղ են տալիս համաշխարհային նավթային շուկայի կայունությանը, որտեղ Սաուդյան Արաբիան խաղում է կարևոր դեր՝ լինելով աշխարհի ամենամեծ նավթային պաշարներն ունեցող պետությունը և ՕՊԵԿ-ի կարևոր անդամ-պետություններից մեկը: Ճապոնիան Սաուդյան Արաբիայի երկրորդ ամենամեծ առևտրային գործընկերն է ԱՄՆ-ից հետո, որից ստանում է իր նավթային ներկրումների 24.8%-[1]ը, իսկ Տոկիոն իր հերթին ներդրումների տեսքով աջակցում է Սաուդյան Արաբիայի տնտեսության զարգացմանը:

Ճապոնիայի և Սաուդյան Արաբիայի միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են դեռևս 1955 թ., որին այնուհետև հաջորդեց տնտեսական հարաբերությունների հաստատումը: Արդեն 1957 թ. Ճապոնիան ներգրավվեց նավթի արդյունահանման գործընթացի մեջ: Ծագող արևի երկիրն իր մեծ կապիտալի շնորհիվ կարողացավ ստեղծել «Արաբիեն օյլ» ("Arabian Oil") նավթային ընկերությունը[2], որը մտավ «Յոթ քույրեր» միջազգային նավթային կարտելի կազմի մեջ[3] և մերձավորարևելյան տարածաշրջանում առկա ամերիկյան ու անգլիական նավթային մենաշնորհների մրցակցության պայմաններում իրավունք ստացավ հետախուզական աշխատանքներ ծավալելու Ծոցի ծովափնյա շրջաններում: «Արաբիեն օյլ»-ը 1957 թ. կոնցեսիոն պայմանագիր ստորագրեց Սաուդյան Արաբիայի, իսկ 1958 թ. հուլիսին՝ Քուվեյթի հետ[4]՝ Սաուդյան Արաբիայի ու Քուվեյթի սահմանագծում տեղակայված «Չեզոք գոտում» հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով[5]: Հետախուզական աշխատանքների արդյունքում 1960 թ. «Արաբիեն օյլ»-ը հայտնաբերեց «Խաֆջի» նավթահանքը[6] և կոնցեսիոն հիմունքով սկսեց իրականացնել նավթի արդյունահանում, մշակում և վաճառք[7]: «Խաֆջի» նավթահանքը մտնում է աշխարհի 30 ամենախոշոր նավթահանքերի ցանկի մեջ, որի նավթային պաշարները հաշվարկվում են ավելի քան 500 մլն բարել: Այս նավթահանքից արդյունահանված վառելանյութի 90%-ն «Արաբիեն օյլ»-ն արտահանում է Ճապոնիա, ինչն ապահովում է Ճապոնիայի նավթային պահանջարկի 40%-ը[8]: 1961 թ. մինչ օրս «Արաբիեն օյլ» ընկերությունն արդյունահանել է ընդհանուր առմամբ 3.9 մլրդ բարել նավթ, որից 2.8 մլրդ-ն առաքվել է Ճապոնիա: Հետևաբար «Արաբիեն օյլ»-ից ստացված ողջ եկամտի 80%-ը բաժին է հասնում Ճապոնիային, իսկ մնացած 20%-ը հավասարապես բաժանվում է Սաուդյան Արաբիայի և Քուվեյթի միջև[9]:

Հետագա հետախուզական աշխատանքների արդյունքում 1963 թ. «Արաբիեն օյլ»-ը հայտնաբերեց «Հոութ»-ը, որտեղից օրական արդյունահանում էր 2,160 բարել նավթ[10], իսկ 1967 թ.՝

---

[1] Saudi Arabia remains Japan's top oil supplier, 01.03.2016, http://english.alarabiya.net/en/business/energy /2016/03/01/Saudi-Arabia-remains-Japan-s-top-oil-supplier.html

[2] Озолинг В., Экономика Саудовской Аравии, М., 1975, с. 125.

[3] Peterson J., The Politics of Middle Eastern Oil, Washington, 1983, p. 3.

[4] Քանի որ Քուվեյթը համարվում էր Մեծ Բրիտանիայի պրոտեկտորատը, Տարո Յամաշիտան՝ «Արաբիեն օյլ»-ի հիմնադիր տնօրենը, ստիպված էր գնալ Լոնդոն՝ «Չեզոք գոտում» հետախուզական աշխատանքներ ծավալելու համար թույլտվություն ստանալու նպատակով: Մանրամասն տե՛ս Sharikat al-Zayt al-Arabīyah al-Mahdūdah, The 35-year History of the Arabian Oil Company, 1958-1993: A Bridge between the Arabian Gulf and Japan in War and Peace, 1995, p. 45.

[5] Venn F., Oil Diplomacy in the Twentieth Century, London, 1986, p. 126.

[6] Longrigg S., Oil in the Middle East, Its Discovery and Development, London, 1968, p. 311.

[7] Sharikat al-Zayt al-Arabīyah al-Mahdūdah, նշվ. աշխ., էջ 54:

[8] Озолинг В., նշվ. աշխ., էջ 127:

[9] Obaid N., The Oil Kingdom at 100, Petroleum, Policymaking in Saudi Arabia, Policy Papers, Washington Institute for Near East Policy, Washington, 2000, p. 58.

[10] Նավթի արտահանումը «Հոութ» նավթահանքից սկսեց իրականացվել

© National Library of Armenia

«Լուլու» նավթահանքը և «Դորա» կոչվող բնական գազի հանքերը[11]:

Ճապոնական «Արաբիեն օյլ» ընկերության նավթի արդյունահանման ծավալները տարեցտարի ավելանում էին՝ պահանջելով նոր ներդրումներ: Խնդիրն այն է, որ «Խաֆջի» նավթահանքից արդյունահանված նավթը մեծ քանակությամբ նստվածք է պարունակում, որից մաքրազտելու համար Ճապոնիայի նավթամշակման արդյունաբերությունը բավական հզոր չէր և ի վիճակի չէր վերամշակման ենթարկելու օրեցօր աճող արդյունահանվող նավթի քանակը (տե՛ս աղյուսակ 1): Այդ պատճառով որոշվեց 1965 թ. կնքել համաձայնագիր «Արաբիեն օյլ»-ի և ճապոնական մի խումբ ընկերությունների միջև՝ «Ֆուջի օյլ» ("Fuji oil") ընկերություն ստեղծելու վերաբերյալ, որը 1969 թ. Տոկիոյում սկսեց կառուցել նավթամշակման գործարաններ՝ տարեկան 4 մլն տոննա հզորությամբ:

1966 թ. ճապոնական «Արաբիեն օյլ» ընկերությունը, Քուվեյթի և Սաուդյան Արաբիայի կառավարությունների հետ համաձայնեցնելով, կնքեց «Նիպպոն գազոլին կոմպանի օֆ Ջապան»-ի ("Nippon Gasoline Company of Japan") հետ պայմանագիր Սաուդյան Արաբիայում նավթի վերամշակման գործարան կառուցելու վերաբերյալ: Նախատեսվում էր նավթի արդյունահանման քանակին զուգընթաց աստիճանաբար մեծացնել վերամշակման գործարանի հզորությունը[12]: Այսպես՝ 1960 թ. Ճապոնիան Սաուդյան Արաբիայի Ջիդդա և Էր-Ռիյադ քաղաքներում, իսկ 1980 թ.՝ Յանբույում կառուցեց նավթի վերամշակման գործարաններ: Ավելին՝ Սաուդյան Արաբիան 1976-1985 թթ. ընթացքում նավթի վերամշակման ոլորտի զարգացման համար հատկացրեց 16.2 մլրդ դոլար, որի շնորհիվ 1970-1988 թթ. ընթացքում սաուդյան նավթի վերամշակման գործարանների հզորությունն աճեց համարյա 3 անգամ՝ հասնելով 483 մլն բարելի: Սաուդյան Արաբիան այս ցուցանիշով զբաղեցնում է երկրորդ տեղը ողջ Ասիա-աֆրիկյան տարածաշրջանում՝ զիջելով միայն Ճապոնիային (1.5 մլրդ բարել ցուցանիշով)[13]:

1969 թ.: Մանրամասն տե՛ս Sharikat al-Zayt al-Arabīyah al-Mahdūdah, նշվ. աշխ., էջ 67:

[11] Arabian Oil Company, http://www.aoc.co.jp/e/his/history.html.

[12] "Middle East Economic Digest", London, 1969, 13, N 50, p. 1536, Озолинг В., նշվ. աշխ., էջ 131:

[13] Кулямзин А., Страны Персидского залива, иммиграция и классовая структура, М., 1990, с. 38.

Աղյուսակ 1

«Արաբիեն օյլ»-ի նավթի արդյունահանման քանակը 1961-1974 թթ. (մլն բարել)			
1961 թ.	3.5	1968 թ.	51.8
1962 թ.	10.5	1969 թ.	65.61
1963 թ.	22.4	1970 թ.	63.7
1964 թ.	30.1	1971 թ.	92.4
1965 թ.	31.5	1972 թ.	105.7
1966 թ.	45.5	1973 թ	95.9
1967 թ.	47.6	1974 թ.	99.4
* Ներառում է նաև Սաուդյան Արաբիայի չափը (50%)			
Աղբյուրը՝ Middle East Economic Digest, London, 1969-1973; Бюллетень иностранной коммерческой информации, М., 1972-1973.			

1975 թ. Սաուդյան Արաբիայի և Ճապոնիայի միջև ստորագրվեց տեխնոլոգիական համագործակցության պայմանագիր՝ նավթաքիմիական ոլորտի զարգացման նպատակով միասնական ընկերություն ստեղծելու մասին: Արդյունքում ստեղծվեցին երկու միասնական ճապոնա-սաուդյան ընկերություններ՝ «ԱՐ-ՌԱԶԻ ՄԵԹԱՆ»-ը ("AR-RAZI METAN") (1979 թ.) և «ՇԱՐՔ»-ը ("SHARQ") (1981 թ.)[14]: «ԱՐ-ՌԱԶԻ ՄԵԹԱՆ» ընկերությունը սկսել է մեթան արդյունահանել 1983 թվականից, որն այժմ մեթանի արդյունահանման ամենամեծ ընկերությունն է աշխարհում: Ինչ վերաբերում է «ՇԱՐՔ» ընկերությանը, ապա այն ստեղծվել է ճապոնական «Միցուբիշի» ("Mitsubishi") և «Սաուդի բեյսիք ինդասթրիս կորպորեյշընն»՝ ՍԱԲԻԿ ("Saudi Basic Industries Corporation" (SABIC) ընկերությունների միասնական ջանքերի արդյունքում[15]: Ընկերությունն անվանվեց «Արևելյան նավթաքիմիական ընկերություն» ("Eastern Petrochemical Company"), սակայն հակիրճ այն հայտնի է

[14] Yamada M., Gulf-Asia Relations as "Post-Rentier" Diversification?: The Case of the Petrochemical Industry in Saudi Arabia, Journal of Arabian Studies, London, 2011, p. 110.

[15] Mitsubishi Corporation, Sharq, The Saudi Arabian Petrochemical Project: A Testament to Strong Japan-Saudi Ties, Endeavour, Volume 3, www.mitsubishicorp.com/jp/en/mclibrary/brojectstory.

© National Library of Armenia

«ՇԱՐՔ» անվամբ: Այն սկսեց առևտրով զբաղվել 1985 թվականից: Վերոնշյալ երկու ընկերությունները՝ «ԱՐ-ՌԱՋԻ ՄԵԹԱՆ»-ը և «ՇԱՐՔ»-ը, աջակցություն են ստանում Ճապոնիայի կառավարությունից, որը տեխնոլոգիաների տրամադրման դիմաց նավթ է ստանում:

1998 թ. հոկտեմբերին արքայազն Աբդուլա բին Աբդուլ Ազիզն այցելեց Ճապոնիա, որի արդյունքում ստորագրվեց Ճապոնիա-Սաուդյան Արաբիա համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը: Ըստ այդ համաձայնագրի՝ նախատեսվում էր 2003 թ. Ջիդդա քաղաքում կառուցել «Ավտոմեքենաների տեխնիկական վերապատրաստման» ինստիտուտ, որտեղ երիտասարդ սաուդցիները կարող են սովորել մեքենայի վերանորոգման հիմնական հմտությունները:

Սաուդյան Արաբիան շահագրգռված է իր երկրում ճապոնական ներդրումների մեծացման հարցով և ստեղծում է բարենպաստ պայմաններ, ինչը շահագրգռում է Ճապոնիային նոր ներդրումներ կատարելու հարցում: Այսպես՝ Սաուդյան Արաբիան հանել է մասնավոր եկամտահարկը, իսկ կորպորատիվ հարկը չի գերազանցում 20%-ը: Ավելին՝ սաուդյան արտարժույթը՝ ռիյալը, աշխարհի ամենակայուն արտարժույթներից մեկն է, որը նույնպես խթանիչ գործոն է ներդրում կատարող երկրների համար: Սաուդյան Արաբիան ներդրումների համար բարենպաստ պայմաններ է ստեղծել հատկապես առողջապահության, հեռուստահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում, որտեղ իր «խոսքը», անշուշտ, կարող է ասել Ճապոնիան՝ լինելով տեխնոլոգիապես զարգացած պետություն: Սաուդյան Արաբիան իր հերթին մեծապես գնահատում է ճապոնական բարձրորակ ապրանքատեսակները և շահագրգռված է Ճապոնիայի հետ փոխհամագործակցության հարցով:

2007 թ. Ճապոնիայի վարչապետ Սինձո Աբեն Սաուդյան Արաբիա կատարած իր այցելության ժամանակ հայտարարեց, որ Ճապոնիայի ներդրումների քանակը Սաուդյան Արաբիայում հետզհետե աճում է, և նախատեսվում է ներդրումները 2 մլրդ դոլարից հասցնել մինչև 20 մլրդ դոլարի: Հատկանշական է, որ 2006 թ. դրությամբ 3.5 մլրդ դոլարի ներդրումով Ճապոնիան դարձավ Սաուդյան Արաբիայի ամենամեծ ներդրողը: Այսպիսով, 2000-2005 թթ. ընթացքում Ճապոնիան դարձավ Սաուդյան Արաբիայի ամենախոշոր ներդրումներ կատարող պետությունը՝ 5 տարվա ընթացքում կատարելով 15 մլրդ դոլարի ներդրում և հետևում թողնելով նույնիսկ ԱՄՆ-ին՝ 6 մլրդ դոլար ներդրումով:

Ճապոնական ընկերություններն ակտիվ ներդրումներ են անում Սաուդյան Արաբիայի տնտեսության զանազան ոլորտներում, իսկ «Ջապան բանկ ֆոր ինթերնեյշընալ կոոպերեյշընի»-ը (ՋԲԻԿ) ("Japan Bank for International Cooperation" (JBIC) մի շարք նախագծերի գլխավոր ֆինանսավորողն է: Ծագող արևի երկիրն ակտիվորեն մասնակցում է նաև Սաուդյան Արաբիայի Ռաբիղ քաղաքում նավթաքիմիական գործարանի կառուցմանը, որն իրականացնում են ճապոնական «Սումիտոմո քեմիկալ կորպորեյշընի»-ը ("Sumimoto Chemical Corporation") և «Սաուդի Արաբիա օյլ կոմպանի»-ն ("Saudi Arabia Oil Company"): Այս նախագիծը ֆինանսավորում են «Միցուբիշի կորպորեյշընի»-ը և ՋԲԻԿ բանկը: Նախագծին աջակցում են նաև «Մարուբենի կորպորեյշընի», «Իտոչու» և «Ջափան գազոլին կորպորեյշընի» ("Japan Gasoline Corporation") ընկերությունները, որոնք կառուցում են ջուր մատակարարող մեծ գործարան՝ Ռաբիղ նավթաքիմիական գործարանին ջրով ապահովելու նպատակով[16]:

Ճապոնիայի վարչապետն իր Սաուդյան Արաբիա կատարած այցելության ժամանակ (2007 թ.) հայտարարեց նաև, որ Ճապոնիա – Սաուդյան Արաբիա հարաբերությունները չպետք է հիմնվեն միայն տնտեսական հարաբերությունների վրա, այլ պետք է դառնան բազմակողմանի՝ նշելով ռազմավարական հարաբերություններ կառուցելու անհրաժեշտության մասին: Ավելին՝ երկու կողմերը ողջունեցին ԾՀԽ-Ճապոնիա ազատ առևտրի պայմանագրի կնքումը, որտեղ մեծ տեղ է տրվում տնտեսության, ներդրումների, ավիացիայի, շրջակա միջավայրի, տեխնոլոգիայի, մշակույթի, կրթության և գիտության, սպորտի և երիտասարդության հարցերի շուրջ համագործակցությանը: Վարչապետը կարևորեց երկու կողմերի միասնական ջանքերը մերձավորարևելյան խնդիրներին խաղաղ ճանապարհով լուծում տալու հարցում: Այսպիսով, թե՛ Ճապոնիան, թե՛ Սաուդյան Արաբիան շահագրգռված են, որպեսզի մերձավորարևելյան պետությունները միանան «Միջուկային զենքի չտարածման վերաբերյալ» պայմանագրին, ինչը տարածաշրջանի անվտանգության պահպանման երաշխիք կհանդի-

[16] Petro Rabigh Petrochemical Complex, Saudi Arabia, http://www.chemicals-technology.com/projects/rabigh/.

© National Library of Armenia

սանա: Կողմերը համագործակցում են նաև անվտանգության, ծովային ուղիների հաղորդակցության, ծովահենների դեմ պայքարում[17]:

Ճապոնիան Սաուդյան Արաբիայում իրականացնում է նաև մի շարք շինարարական նախագծեր: Այսպես, ճապոնական «Սոիջիտս կորպորացիա»-ն 2004 թ. մայիսի 25-ին պայմանագիր կնքեց «Սաուդի էլեքթրիք» ("Saudi Electric") ընկերության հետ՝ Ջիդդա քաղաքում էլեկտրակայան կառուցելու վերաբերյալ: Նախագիծը ստացավ «Շոաիբա 2» անվանումը: Հատկանշական է, որ «Շոաիբա 1» էլեկտրակայանը կառուցվել էր դեռևս 1999 թ.: Վերոնշյալ էլեկտրակայանները պետք է ապահովեն էլեկտրաէներգիայով երկրի արևմտյան շրջաններին[18]:

Ճապոնիան ներգրավված է նաև էթիլեն-գլիցերինի գործարանի կառուցման գործընթացում: Ճապոնական «Տոյո էնջինիերինգ կորպորեյշընն» ("Toyo Engineering Corporation") ընկերությունը 402 մլն դոլար արժողությամբ պայմանագիր է կնքել ՍԱԲԻԿ-ի հետ՝ էթիլեն-գլիցերինի գործարան կառուցելու վերաբերյալ[19]: Գործարանը կառուցվում է Սաուդյան Արաբիայի արևմտյան մասում՝ Յանբու քաղաքում: Հատկանշական է, որ «Տոյո էնջինիերինգ կորպորեյշընն»-ն արդեն փորձ ունի Սաուդյան Արաբիայում էթիլեն-գլիցերինի գործարան կառուցելու հարցում: Նախկինում Սաուդյան Արաբիայում կառուցվել են ևս չորս նմանատիպ գործարաններ:

Ճապոնական «Սումիմոտո կորպորեյշընն»-ը կառուցում է Ռաս ալ Զուրում 6 մլրդ դոլար արժողությամբ ջրի մաքրազերծման գործարան, որն ունենալու է 850-1100 մեգավատտ հզորություն: Գործարանի բաժնետոմսերի 40%-ը պատկանում է Սաուդյան Արաբիայի կառավարությանը, 20%-ը՝ ճապոնական «Սումիտոմո» ընկերությանը, մնացածը՝ երկու մալայզիական ընկերությունների[20]:

[17] Joint Statement between the Kingdom of Saudi Arabia and Japan, http://www.mofa.go.jp/region/middle_e/ pmv0704/joint_saudi.html.

[18] Shoaiba Oil-Fired Power Plant, Saudi Arabia, http://www.power-technology.com/projects/shoaiba/.

[19] World's Largest EO/EG Plant in Saudi Arabia Awarded to TEC, 31.05.2002, http://www.toyo-eng.com/jp/en/company/news/?n=29.

[20] John Sfakianakis, Prudent overspending: Saudi state spending and signs of recovery, ArabNews, 28.10.2009, http://www.arabnews.com/node/329421#.

2005 թ. օգոստոսի 22-ին «Ջափան գազոլին կորպորեյշընն»-ը հայտարարեց, որ ճապոնական «Մարուբենի կորպորեյշընն»-ի և սաուդյան «Ալջոմայ հոլդինգ»-ի ("Aljomaih Holding") հետ կնքել է պայմանագիր Սաուդյան Արաբիայի նավթի և գազի համալիրներին էլեկտրաէներգիա մատակարարելու վերաբերյալ: Համալիրները տեղակայված են Սաուդյան Արաբիայի արևելյան մասում՝ Աբքաիք, Հավիյայ և Ռաս Տանուրա շրջաններում, և պատկանում են «Սաուդի Արամկո»-ին: Կառույցը, որը գնահատվում է 650 մլն դոլար, նախատեսվում է ավարտին հասցնել 2016 թ.[21]:

Ճապոնիան մասնակցում է նաև Սաուդյան Արաբիայի «Հյուսիս-հարավ» երկաթգծի կառուցման գործընթացին: Երկաթգիծն ունենալու է 1418 կմ երկարություն (ձգվում է Էր-Ռիյադից մինչև Հադիթա քաղաք): Այն նախատեսվում է դառնալ տարածաշրջանի ամենաերկար երկաթգիծը: Վերջինս կունենա տնտեսական մեծ նշանակություն, քանի որ զբաղվելու է ոչ միայն ուղևորափոխադրմամբ, այլև ապրանքափոխադրմամբ: Երկաթգծի կառուցման մեջ ներգրավված են նաև մի շարք օտարերկրյա ընկերություններ: Այսպես, Ազ Զաբիրայից դեպի Ռաս ալ-Խաիր ձգվող մասը, որը կազմում է 576 կմ, կառուցում է «Սաուդի բին Լադեն» խումբը երկու գերմանական ընկերությունների հետ միասին: Մյուս մասը, որը ձգվում է Ազ Զաբիրայից մինչև Ալ-Նաֆուդ անապատը՝ 440 կմ երկարությամբ, կառուցում են «Չայնա ռեյլվեյ էիթինթի բյուրոու» ("China Railway 18th Bureau") և «Ալ սուվաիկեթ կորպորեյշընն» ("Al Suwaiket Corporation") ընկերությունները: Ճապոնական «Միցուի» ընկերությունն ավստրիական «Բարքլեյ մուլեու» ("Berkeley Mouleu") և սաուդյան «Ալ Ռաշիդ թրեյդինգ ընդ քոնթրաքթինգ կորպորեյշընն»-ի ("Al Rashid Trading and Contracting Corporation") հետ միասին կառուցում են երկաթգծի 818 կմ հատվածը, որը ձգվում է հյուսիսից՝ Հադիթա և Ջալամիդ գյուղաքաղաքներից դեպի հարավ: Այս երկու գյուղաքաղաքներից դուրս եկող երկաթգծերը միանալու են Բոսայադայում և շարունակվելու են դեպի Նաֆուդ: Բոսայադայից ձգվող երկաթգծերից մեկը

[21] Saudi Arabia: Japan's JGC leads consortium to secure US$650 million contract to supply Aramco power and steam, 17.09.2013, http://energyasia.com/saudi-arabia-japans-jgc-leads-consortium-secure-us650-million-contract-supply-aramco-power-steam/.

© National Library of Armenia

կիասնի Էր-Ռիյադ, իսկ մյուսը՝ Ռաս ալ Զուր, որը գտնվում է Ծոցի ափին:

Բացի այդ, Ճապոնիան և Սաուդյան Արաբիան համագործակցում են ռազմական ոլորտում, որը տեղի է ունենում Սաուդյան Արաբիայի զորքերի և Ճապոնիայի ինքնապաշտպանական ուժերի միջև պարբերաբար փոխանակման ծրագրերի իրականացման միջոցով: Երկու կողմերը կարևորում են ՄԱԿ-ի դերը Մերձավոր Արևելքում խաղաղություն և կայունություն հաստատելու, մասնավորապես պաղեստինյան խնդրի շուտափույթ լուծման հարցում: Սաուդյան Արաբիան երախտապարտ է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում (ԱԽ) Պաղեստինին դիտորդի կարգավիճակ տալու հարցում Ճապոնիայի դրական դիրքորոշման համար: Այդ պատճառով Սաուդյան Արաբիան հետաքրքրված է և ամեն կերպ աջակցում է Ճապոնիային ՄԱԿ-ի ԱԽ-ում մշտական անդամ դառնալու հարցում:

Հատկանշական է, որ թեև 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո ԱՄՆ-Սաուդյան Արաբիա հարաբերությունները զգալիորեն վատթարացել էին, այնուամենայնիվ եռակողմ հանդիպումները մերձավորարևելյան խնդիրներին վերաբերող հարցերի շուրջ շարունակվում են: Այսպես, 2001 թ. նոյեմբերին Սաուդյան Արաբիան, Ճապոնիան և ԱՄՆ-ը հանդիպեցին քննարկելու Աֆղանստանին տրամադրվող օգնության հարցը: 2002 թ. հունվարին Տոկիոյում տեղի ունեցավ խորհրդաժողով, որտեղ Ճապոնիան պատրաստակամություն հայտնեց 5 տարի անընդմեջ 4.5 մլրդ դոլար տրամադրել Աֆղանստանին՝ վերականգնման նպատակով:

Ծագող արևի երկիրն աջակցում է Սաուդյան Արաբիային նաև այլընտրանքային էներգիայի զարգացման հարցում, որը կնպաստի Ճապոնիա արտահանվող նավթի քանակի մեծացմանը Էր-Ռիյադից: Այսպես, ճապոնական «Շովա շելլ սոլար փաուեր» ("Showa Shell Solar Power") ընկերությունը համաձայնություն է ձեռք բերել «Սաուդի Արամկո»-ի հետ Սաուդյան Արաբիայում արևային էներգիայի զարգացման հարցի շուրջ: Ճապոնիայի տնտեսության համար նավթի քանակի ավելացումը հատկապես կարևորվեց Ֆուկուսիմայի ատոմակայանի վթարից հետո, երբ Ճապոնիան ստիպված էր կանգնեցնել երկրում գործող բոլոր ԱԷԿ-ները: Սաուդյան Արաբիան պատրաստակամություն հայտնեց աջակցել Ճապոնիային այդ հարցում: Արդեն 2012 թ. Սաուդյան Արաբիայից ներկրվող նավթը

կազմեց Ճապոնիայի ներկրումների 31%-ը, որը 5%-ով ավելի էր նախորդ տարվա համեմատ, ինչը մեծ օգնություն էր Ճապոնիայի տնտեսության համար[22]:

Բացի այդ, Սաուդյան Արաբիան շահագրգռված է նաև Ճապոնիայի աջակցությամբ իր երկրում ատոմակայաններ կառուցելու հարցում, որոնց միջոցով կկարողանա ապահովել էներգիայի ներքին պահանջարկը:

Այսպիսով, ավելի քան 60 տարվա պատմություն ունեցող ճապոնա-սաուդյան հարաբերություններն աստիճանաբար ամրապնդվում և խորանում են: Երկկողմ հարաբերություններն ընդգրկում են համագործակցության զանազան ոլորտներ: Թե՛ Ճապոնիան, թե՛ Սաուդյան Արաբիան, լինելով միջազգային հարաբերությունների կարևոր գործոններ, համագործակցում են ոչ միայն առևտրատնտեսական ոլորտում, այլև տարածաշրջանային խնդիրների լուծման հարցերի շուրջ: Սաուդյան Արաբիայի նավթաքիմիական ոլորտի, այլընտրանքային էներգիայի զարգացման, էլեկտրակայանների և ԱԷԿ-ների, ինչպես նաև երկաթգծերի կառուցման, շինարարական խոշոր նախագծերի իրականացման մեջ Ճապոնիայի ակտիվ մասնակցությունը և ռազմական ոլորտում համագործակցությունը երկկողմ հարաբերություններին տալիս են բազմաբովանդակ և ռազմավարական նշանակություն:

[22] Abe to visit Saudi Arabia to secure stable oil supply, Japantoday, 10.03.2013, https://www.japantoday.com/category/politics/view/abe-to-visit-saudi-arabia-to-secure-stable-oil-supply.

© National Library of Armenia

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆ-ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՄԻՏՈՒՄՆԵՐ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

1991 թ. անկախություն ձեռք բերելուց հետո Ադրբեջանի արտաքին քաղաքականության արաբական ուղղությունը չնայած կարևորվում էր, սակայն չուներ այնպիսի առաջնահերթություն, ինչպես օրինակ ՆԱՏՕ-ի կամ Եվրամիության հետ համագործակցությունը: Ադրբեջանը թեև դիվանագիտական հարաբերություններ հաստատեց արաբական մի շարք երկրների հետ, սակայն արաբական ուղղությունը Ադրբեջանի անկախությունից ի վեր զարգանում էր ոչ սրընթաց: Հընթացս Ադրբեջանի արտաքին քաղաքականության մեջ առավել կարևորվեց իսլամական ուղղությունը, միջազգային իսլամական ընտանիքի անդամ դառնալը, որի ապացույցն Իսլամական համագործակցություն կազմակերպության (ԻՀԿ) հետ Ադրբեջանի սերտ շփումներն էին[1]: Հատկանշական է, որ աշխարհիկ հիմքեր ունեցող Ադրբեջանն իրեն անվերապահորեն համարեց իսլամական Ումմայի անդամ, որի մասին բազմիցս հայտարարել են երկրի բարձրաստիճան պաշտոնյաները[2]: Հատկանշական է, որ Հեյդար Ալիևը ձգտում էր Ադրբեջանում զարգացնել եվրոպական փորձը, մյուս կողմից՝ սերտացնել կապերն իսլամական աշխարհի հետ: Ադրբեջանը ներկայացվում էր մի երկիր, որը կարող էր կամրջի դեր խաղալ Արևմուտքի և Արևելքի միջև[3]:

[1] Ադրբեջանը ԻՀԿ-ին անդամագրվեց 1991 թ.՝ Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո: Այս հարցում էական դեր ունեցավ Թուրքիան, սակայն ոչ պակաս կարևոր էր նաև Սաուդյան Արաբիայի աջակցությունը: Մանրամասն տե՛ս Ա. Փաշայան, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ, Եր., 2003:

[2] Ա. Փաշայան, Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, Եր., 2014, էջ 135:

[3] Նույն տեղում, էջ 49:

Մյուս կողմից՝ իսլամական աշխարհի հետ համագործակցությունն Ադրբեջանը լավագույնս օգտագործեց Հայաստանի դեմ քարոզչության և Լեռնային Ղարաբաղի հարցում քաղաքական, ֆինանսական, ինչպես նաև միջազգային աջակցություն ձեռք բերելու հարցում[4]: Չնայած արաբական ուղղության ոչ առաջատար լինելու հանգամանքին՝ արաբական երկրների մեջ առանձնացան որոշ պետություններ, որոնք ի սկզբանե հայտնվեցին Ադրբեջանի արտաքին քաղաքականության ուշադրության կենտրոնում: Դրանք հիմնականում Ծոցի երկրներն էին, բայց և հատկապես Սաուդյան Արաբիայի Թագավորությունը (ՍԱԹ), որն աշխարհի ամենախոշոր նավթարդյունահանող երկրներից մեկն է:

Սաուդյան Արաբիան իսլամի հայրենիքն է և իրականացնում է մուսուլմանական աշխարհի ամենամյա ուխտագնացությունը դեպի սրբազան Մեքքա և Մադինա: Նշենք, որ վահաբականություն դավանող Սաուդյան Արաբիան այն պետությունն է, որը հանգուցային դերակատարում ունի թե՛ միջազգային, թե՛ մերձավորարևելյան քաղաքականության մեջ: Նրա դերը հանգուցային է ԻՀԿ-ում, Արաբական պետությունների լիգայում, Ծոցի երկրների համագործակցության խորհրդում, ՕՊԵԿ-ում և այլ կառույցներում: Սաուդյան Արաբիան առաջին պետություններից մեկն էր, որը ճանաչեց Ադրբեջանի անկախությունը: Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին 1992 թ. փետրվարի 24-ին: 1994 թ. ապրիլին Էռ-Ռիադում բացվեց Ադրբեջանի դեսպանատունը և միայն հինգ տարի անց՝ 1999 թ. հունիսին, Բաքվում՝ Սաուդյան Արաբիայի Թագավորության դեսպանատունը: 1994 թ. հուլիսին՝ իշխանության գալուց որոշ ժամանակ անց, երբ Հայաստանի հետ Ադրբեջանն արդեն կնքել էր զինադադարի մասին համաձայնագիր, Հեյդար Ալիևը պաշտոնական այցով մեկնեց Սաուդյան Արաբիա: Նրան ուղեկցում էին Ադրբեջանի կառավարության անդամներ, նաև՝ Ադրբեջանի հոգևոր առաջնորդ Ալլահ Շուքյուր Փաշազադեն: Հ.Ալիևը և նրան ուղեկցող պատվիրակությունը եղան նաև Մեքքայում՝ իրականացնելով փոքր ուխտագնացություն՝ ումրա[5]: Հեյդար Ալիևի այցը երկկողմ հարաբերությունների զարգացման նոր հեռանկարներ բացեց: Այ-

[4] Մանրամասն տե՛ս Ա. Փաշայան, Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, Եր., 2014:

[5] Նույն տեղում, էջ 45:

© National Library of Armenia

ցի շրջանակներում կնքվեց տնտեսության, առևտրի, ներդրումների, տեխնոլոգիաների, մշակույթի, երիտասարդության ու սպորտի ոլորտներում երկկողմ համագործակցության գլխավոր հուշագիրը: Ջիդդայում Հեյդար Ալիևը մամլո ասուլիսում սաուդյան Ֆահդ թագավորին անվանելով եղբայր և ընկեր՝ նշում էր, որ երկու պետությունները համագործակցության զարգացման նույն տեսլականներն ունեն[6]:

Սաուդյան Արաբիան առաջին երկրներից մեկն էր, որը 1994-1999 թթ. ընթացքում շարունակաբար մարդասիրական օգնություն ցուցաբերեց Ադրբեջանին՝ Հայաստանից տեղափոխված փախստականներին օժանդակելու նպատակով: Ղարաբաղաադրբեջանական պատերազմի հետևանքով վիրավորված Ադրբեջանի մի շարք քաղաքացիներ բուժման նպատակով մեկնեցին Սաուդյան Արաբիա[7]:

Երկկողմ պայմանավորվածությունների արդյունքում Ադրբեջանից սկսեցին ամեն տարի Սաուդյան Արաբիա մեկնել ավելի մեծ թվով ուխտավորներ: Եթե անկախությանը հաջորդած տարիներին դա փոքր թիվ էր՝ մի քանի տասնյակ մարդ, ապա հետագա տարիներին Սաուդյան Արաբիան Ադրբեջանին ուխտագնացության ավելի շատ քվոտաներ հատկացրեց[8]: Ի վերջո, 2016 թ. ձեռք բերված երկկողմ համաձայնության արդյունքում Ադրբեջանից Սաուդյան Արաբիա մեկնող ուխտավորների թիվը սահմանվեց 1600-ը[9]: Բացի այդ, Ադրբեջանից բազմաթիվ ուսանողներ մեկնեցին Սաուդյան Արաբիա՝ աստվածաբանության և այլ ոլորտներում կրթություն ստանալու նպատակով: Հեյդար Ալիևի իշխանության հատկապես վերջին տարիներին երկկողմ համագործակցությունը, կարելի է ասել, որոշակիորեն ընդլայնվել էր: Սաուդյան Արաբիայի իշխանու-

[6] Statement of the President of the Republic of Azerbaijan Heydar Aliev at a press conference in Jeddah, Saudi Arabia-July 11, 1994, http://lib.aliyev-heritage.org.

[7] Abdul Hannan Tago, Saudi-Azerbaijan ties touching new heights, 14 December 2012, http://www.arabnews.com/saudi-azerbaijan-ties-touching-new-heights

[8] 1998-1999 թթ. Ադրբեջանից Մեքքա և Մադինա մեկնած ուխտավորների թիվն օրինակ 250 էր, իսկ 2014 թ. ադրբեջանցի ուխտավորների թիվը հասավ 3200-ի: Տե՛ս Hajj pilgrimage quota filled in Azerbaijan, 25-04-2014, http://m.apa.az/en/azerbaijani-news/azerbaijan_religion_news/hajj-pilgrimage-quota-filled-in-azerbaijan.

[9] Azerbaijan reduces Hajj quota for 2016, 15,02,2016, http://kaspi.az/en/azerbaijan-reduces-hajj-quota-for-2016/.

թյունները շարունակում էին ֆինանսական օժանդակություն ցույց տալ Ադրբեջանին տարբեր ոլորտներում, այդ թվում՝ կրոնական և կրթական հաստատությունների զարգացման հարցում: 2002 թ. Բաքվում դպրոցներ կառուցելու ծրագրի շրջանակներում Զարգացման սաուդական հիմնադրամը 35.7 միլիոն ռիալ հատկացրեց Ադրբեջանի կառավարությանը: Իսկ մի քանի տարի անց՝ 2005 թ., ֆինանսական օգնություն տրամադրեց Բաքվին՝ մարդասիրական նպատակներով օգտագործելու համար[10]: Սաուդյան Արաբիայի օգնությամբ Ադրբեջանում մի շարք մզկիթներ վերանորոգվեցին, և նորերը կառուցվեցին:

2003 թ. իշխանության եկած Իլհամ Ալիևը հետամուտ եղավ երկկողմ հարաբերությունների ընդլայնված զարգացմանը միտված քաղաքականությանը: Իշխանության գալուց երկու տարի անց՝ 2005 թ., նա առաջին անգամ պաշտոնական այցով մեկնեց Էռ-Ռիադ[11]: Երկկողմ հարաբերությունները Իլհամ Ալիևի օրոք նոր դրսևորումներ ձեռք բերեցին: 2007 թ. նոյեմբերի 10-17-ը սկզբում Էռ-Ռիադում, իսկ հետո Ջիդդայում և Դամմամում անցկացվեցին Ադրբեջանի մշակութային օրեր: Դրան հետևեցին 2008 թ. հունիսի 17-21-ը սաուդական մշակութային օրերի անցկացումն Ադրբեջանում, որին մասնակցում էր ՍԱԹ-ի մշակույթի նախարարը, ով ղեկավարում էր Բաքու ժամանած մոտ հարյուրհոգանոց պատվիրակությունը[12]: Բավական սերտացան նաև միջպառլամենտական կապերը: 2010 թ. Բաքու այցելեց ՍԱԹ-ի Մաջլիս ալ-շուրայի նախագահ Աբալլահ բին Իբրահիմ Ալ Շեյխը: Դրան հաջորդեցին Ադրբեջանի խորհրդարանի՝ Միլլի մեջլիսի խոսնակ Օքթայ Ասադովի այցելությունը և համապատասխան պայմանագրերի ստորագրումը[13]:

Երկկողմ հարաբերություններին նոր որակ հաղորդեց 2012 թ. Էռ-Ռիադի այն հայտարարությունը, թե կովկասյան տարածաշրջանում իր հիմնական գործընկերն Ադրբեջանն է: Կասկածից վեր է, որ այս շրջանից ի վեր ՍԱԹ-ի հետ համագործակցությունն Ադրբեջանի համար վերաճեց առաջնահերթության: Հատկանշական է, որ 2012 թ. հունիսի 14-ին ադրբե-

[10] Abdul Hannan Tago, Saudi-Azerbaijan ties touching new heights, 14 December 2012, http://www.arabnews.com/saudi-azerbaijan-ties-touching-new-heights.

[11] Նույն տեղում:

[12] Նույն տեղում:

[13] Նույն տեղում:

© National Library of Armenia

ջանական Թրենդին տված հարցազրույցում Սաուդյան Արաբիայի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը նշում է, որ Ադրբեջանը խաղում և շարունակելու է խաղալ կարևոր դեր միջազգային ասպարեզում: Այն կամուրջ է Արևելքի և Արևմուտքի միջև, և որ Ադրբեջանի շարունակական զարգացումը գոհացուցիչ է ՍԱԹ-ի համար[14]:

Նույն՝ 2013 թ. դեկտեմբերին Սաուդյան Արաբիայի Ներդրումների գլխավոր հանձնախմբի (SAGIA) նախագահ Աբդուլ Լատիֆ Ալ-Օսմանը Բաքվում էր՝ Ադրբեջանի նավթաքիմիական ոլորտում սաուդական ներդրումների վերաբերյալ շուրջ տասներկու տնտեսական համաձայնագիր ստորագրելու համար[15]: Զուգահեռաբար Բաքուն ձեռնամուխ եղավ մշակույթի, կրթության և անվտանգության ոլորտներում ՍԱԹ-ի հետ համագործակցության սերտացմանը: Հատկանշական է, որ Սաուդյան Արաբիայի իշխանություններն արտոնեցին, որպեսզի դեկտեմբերի 31-ը այդ երկրում ևս նշվի որպես համայն ադրբեջանցիների համերաշխության օր:

2014 թ. Ադրբեջան այցելեց Սաուդյան Արաբիայի սահմանային ծառայության գերագույն ղեկավարը՝ քննարկելու անվտանգությանն առնչվող հարցեր: Նշենք, որ դրան նախորդել էր 2013 թ. վերջին երկու պետությունների միջև Արտահանձնման մասին պայմանագրի կնքումը, որն առնչվում էր հանցագործության և ահաբեկչության դեմ համատեղ պայքարին[16]:

2015 թ. մայիսին Ադրբեջանում տեղի ունեցավ ադրբեջանասաուդական գործարար հանդիպում, որը կազմակերպվել էր Ադրբեջանի տնտեսության և արդյունաբերության նախարարության կողմից, և որին մասնակցելու էր եկել Սաուդյան Արաբիայի առևտրի և արդյունաբերության նախարարի ղեկավարած պատվիրակությունը[17]: Երկկողմ համագործակցության շրջանակում աչքի է ընկնում 2015 թ. ապրիլին Իլհամ Ալիևի պաշտոնական այցը Սաուդյան Արաբիա: Ադրբեջան-սաուդական հարաբերությունների բարձր մակարդակի մասին

[14] Saudi Arabia FM: Azerbaijan is bridge between East and West, 14 June 2012, http://en.trend.az/azerbaijan/politics/2037309.html.

[15] Abdul Hannan Tago, Saudi-Azerbaijan ties touching new heights, 14 December 2012, http://www.arabnews.com/saudi-azerbaijan-ties-touching-new-heights.

[16] Նույն տեղում:

[17] Նույն տեղում:

էր խոսում այն փաստը, որ թագավոր Սալմանն անձամբ դիմավորեց Ալիևին Էռ-Ռիադի օդանավակայանում[18]: Վերահաստատվեցին համագործակցության հիմնական ուղենիշները: Նշենք, որ Իլհամ Ալիևի վերջին այցելությունը Սաուդյան Արաբիա տեղի էր ունեցել 10 տարի առաջ: Ադրբեջանի նախագահը Սաուդյան Արաբիայում նավթի գներին առնչվող խնդիրները քննարկեց նավթի և բնական ռեսուրսների նախարար Ալի Ալ-Նուայմիի հետ: Իսկ թագավորության առևտրի պալատի նախագահ Աբդուլ Ռահման Ալ-Զամիլի հետ քննարկվեցին քիմիական և նավթարդյունաբերական համատեղ հաստատություններ հիմնելու, նավթագազային, գյուղատնտեսական ապրանքներ արտադրելու, դրանց արտահանումը Սաուդյան Արաբիա և երրորդ երկրներ կազմակերպելու հարցեր: Ի. Ալիևը հանդիպեց նաև ԻՀԿ-ի շրջանակներում գործող Իսլամական զարգացման բանկի նախագահ Ահմադ Մուհամմադ Ալիի և ԻՀԿ-ի գլխավոր քարտուղար Իյադ բին Ամին Մադանիի հետ[19]: Քննարկվեցին համատեղ ծրագրեր իրականացնելու հարցերը: ԻՀԿ-ի գլխավոր քարտուղարը հատուկ շնորհակալություն հայտնեց Իլհամ Ալիևին պաղեստինցի ժողովրդին ցուցաբերած քաղաքական և նյութական աջակցության համար: Ալիևն այցելեց նաև Մադինա՝ Մուհամմադ մարգարեի մզկիթը[20]:

Երկկողմ հարաբերությունների հարցում կարևոր դեր ունի իսլամը, որը միավորիչ գործոն է քաղաքակրթական առումով: Հետաքրքրական է, որ կրոնապետություն համարվող Սաուդյան Արաբիան շահագրգռված է սուննի իսլամի, մասնավորապես սալաֆիականության սաուդական մեկնաբանության՝ վահաբականության արտահանմամբ, իսկ աշխարհիկ Ադրբեջանը դիտարկվում է որպես պարարտ հող[21]:

Ադրբեջան-Սաուդյան Արաբիա հարաբերություններում կարևոր գործոն է Իրանը: Իրանը, Ադրբեջանի հետ ունենալով կրոնական, մշակութային և այլևայլ ընդհանրություններ, 1991 թ.-ից ի վեր փորձում է այստեղ քաղաքական և կրոնական

[18] Royal welcome for Aliev in Saudi Arabia, 06 April 2015, http://commonspace.eu/index.php?m=23&news_id=3213.

[19] Azerbaijani President meets with OIC Secretary General, 6,04,2015, http://en.trend.az/azerbaijan/politics/2380778.html.

[20] President Aliyev visits prophet's mosque in Medina, 8 April 2015, http://www.azernews.az/nation/80135.html.

[21] Eldar Mamedov, Azerbaijan Interests Lie Closer to Iran than Saudi Arabia, February 4, 2016, http://muftah.org.

© National Library of Armenia

ազդեցություն ունենալ, որը սակայն հանդիպում է Բաքվի հակազդեցությանը: Իսկ Սաուդյան Արաբիան տարածաշրջանում Իրանի հետ մրցակցող հիմնական պետությունն է: Այս պարագայում Ադրբեջան-Իրան որոշակիորեն հակասական հարաբերություններում Ադրբեջան-Սաուդյան Արաբիա համագործակցությունը կարող է հավասարակշռող և հակազդող նշանակություն ունենալ:

ՍԱԹ-ի հետ Ադրբեջանի սերտ համագործակցության մյուս կարևոր պատճառը կապված է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ: Գաղտնիք չէ, որ տասնամյակներ շարունակ Ադրբեջանը Սաուդյան Արաբիայի միջոցով հայ-ադրբեջանական հակամարտության հարցում ձեռք է բերել ոչ միայն իսլամական աշխարհի աջակցությունը, այլև օգնություն միջազգային ասպարեզում՝ ՄԱԿ-ում և այլուր: Նշենք, որ Իսլամական համագործակցություն կազմակերպությունը խիստ կոշտ և միակողմանի դիրքորոշում ունի Հայաստանի նկատմամբ, որին համարում է «ագրեսոր» պետություն:

Կասկածից վեր է, որ ՍԱԹ-ը տարածաշրջանում կարևորում է հատկապես Ադրբեջանի հետ համագործակցությունը, առավել, քան Վրաստանի կամ մի այլ երկրի հետ: Ադրբեջանին ուղղված ժեստ է նաև այն, որ Սաուդյան Արաբիայի Թագավորությունը մինչ օրս հրաժարվում է դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ՝ պատճառ բերելով ղարաբաղաադրբեջանական հակամարտության կարգավորված չլինելը: ՍԱԹ-ում Ադրբեջանի դեսպան Ռասիմ Ռզաևի խոսքերով Ադրբեջանին և Սաուդյան Արաբիային միավորում է համակողմանի եղբայրությունը: «Մեր ժողովուրդները նույն մշակույթի և ավանդույթների, ինչպես նաև նույն կրոնի կրողներն են»[22]:

Հարկ է նկատել, որ Ադրբեջանը ցանկանում է խորացնել Սաուդյան Արաբիայի հետ համագործակցությունն էներգետիկ և տնտեսական ոլորտներում ևս: Իր հերթին Սաուդյան Արաբիան պատրաստ է սերտացնելու էներգետիկ համագործակցությունն Ադրբեջանի հետ[23]:

[22] Abdul Hannan Tago, նշվ.աշխ.:

[23] Azerbaijan, Saudi Arabia discuss prospects to expend energy dialogue, 06 April 2015, http://www.caspianenergy.net/en/oil-and-gas/21451-azerbaijan-saudi-arabia-discuss-prospects-to-expand-energy-dialogue.

Սաուդյան Արաբիան և Ադրբեջանը համագործակցում են նաև զբոսաշրջության ոլորտում: 2013 թ. երկու երկրների միջև կնքվեց զբոսաշրջության ոլորտում համագործակցության համաձայնագիր[24]: Արաբական մամուլում Բաքուն անգամ անվանում են Կովկասի Դուբայ: 2016 թ. ընթացքում Բաքվում գրանցվեց արաբ զբոսաշրջիկների աննախադեպ մեծ հոսք[25]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, Ադրբեջանն արաբական ուղղության մեջ էականորեն կարևորում է համագործակցությունը Սաուդյան Արաբիայի հետ: Վերջին շրջանում Ադրբեջանի և Սաուդյան Արաբիայի համագործակցության ակտիվացումը կարելի է դիտարկել երկկողմ շահերի տեսանկյունից՝ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական արդի իրողությունների համատեքստում: Բաքուն նպատակ ունի Սաուդյան Արաբիայի հետ ստեղծել քաղաքական և տնտեսական ոլորտներում համաչափ համագործակցության կայուն և շարունակական վիճակ:

Իր հերթին Սաուդյան Արաբիայի Թագավորությունն Ադրբեջանի հետ հարաբերություններում հետամուտ է իր շահերին, որոնցում ևս մեծ է Իրանի գործոնը: Գաղտնիք չէ, որ ՍԱԹ-ը ցանկանում է հակաշիայական և հակաիրանական դաշինքի մեջ ներգրավել աշխարհիկ Ադրբեջանին, որը շիայական մեծամասնության և շիայական ավանդույթների երկիր է: Ընդհանրապես Սաուդյան Արաբիայի քաղաքականությունը հստակորեն միտված է Մերձավոր Արևելքում և առհասարակ, միջազգային ասպարեզում, իսկ այս պարագայում՝ կովկասյան տարածաշրջանում, Իրանի դիրքերի թուլացմանը: Սա նշանակում է, որ երկու պետություններն Իրանի հարցում նույնանման հետաքրքրություններ ունեն:

Նկատի ունենալով նշված իրողությունները՝ կարելի է ենթադրել, որ Ադրբեջանն առաջիկայում ևս կշարունակի պահպանել քաղաքական, տնտեսական ու մշակութային համագործակցությունն արաբական և մուսուլմանական աշխարհի կարևորագույն պետություններից մեկի՝ ՍԱԹ-ի հետ: Թագավորության հետ համագործակցության միջոցով Ադրբեջանը

[24] Kingdom of Saudi Arabia and Azerbaijan sign cooperation agreement in the fields of tourism and heritage, 3/13/2013, https://www.scta.gov.sa/en/mediaCenter/News/MainNews/Pages/z-t-1-13-3-13.aspx.

[25] Azerbaijan became favorite destination for Arab tourists, 02 AUGUST 2016, http://www.today.az/news/business/153109.htm.

© National Library of Armenia

փաստորեն կփորձի հավասարակշռել հարաբերությունները ոչ միայն Իրանի, այլև Ռուսաստանի հետ, իսկ Թուրքիայի պարագայում ձեռք կբերի կարևոր այլընտրանք: Միևնույն ժամանակ հազիվ թե Բաքուն չի գիտակցում, որ Սաուդյան Արաբիայի հետ հարաբերությունների ակտիվացումը որոշակի ռիսկեր է պարունակում: Նախ՝ նշենք, որ նույն Սաուդյան Արաբիայի հետ բաց դռների քաղաքականությունը նպաստեց, որպեսզի 1990-ականներից սաուդական պաշտոնական և ոչ պաշտոնական խողովակներով Ադրբեջան ներթափանցի վահաբականությունը: Տարիների ընթացքում վահաբականների թիվն Ադրբեջանում ընդլայնվեց: Բաքվի համար լրջագույն խնդիր դարձավ սալաֆիական կրոնական և կրոնաքաղաքական ակտիվությունը: Չնայած Ադրբեջանի իշխանություններին հաջողվեց կանխել այդ շրջանակներից եկող վտանգները, սակայն կրոնական արմատականությունն ու ծայրահեղականությունն Ադրբեջանի ազգային անվտանգության համար միշտ էլ սպառնալիք են:

ՍԱԹ-ի հետ հարաբերությունների սերտացումը կարող է նպաստել Ադրբեջանի նկատմամբ Իրանի քաղաքականության կոշտացմանը, ինչը, հնարավոր է, արտահայտվի Ադրբեջանի համար ոչ շահեկան իրողություններով՝ Լեռնային Ղարաբաղի հարցում Իրանի դիրքորոշման փոփոխությամբ, Ադրբեջանում իրանամետ շիայական արմատական և չափավոր հոսանքների ակտիվացմամբ և այլն:

Սաուդյան Արաբիայի հետ հարաբերությունների հարաճուն ակտիվացումը բնականաբար չի գոհացնի նաև Ռուսաստանին, որը Սիրիայում պայքարում է Սաուդյան Արաբիայի դեմ: Ռուսաստանն Ադրբեջանի հետ հարաբերություններում նույնպես կարող է շահարկել Բաքվի համար ցավոտ հարցեր: Սաուդյան Արաբիայի հետ հարաբերությունների առավել սերտացումը բնականաբար դժգոհելու առիթ է տալու Թուրքիային: Չնայած մերձավորարևելյան հարցերում Անկարան համագործակցում է ՍԱԹ-ի հետ, սակայն վերջինիս հետ գտնվում է շարունակական մրցակցության մեջ: Չի բացառվում, որ վերը նշված իրողությունները ստիպեն Բաքվին Սաուդյան Արաբիայի Թագավորության հետ հարաբերություններում զգուշավորություն ցուցաբերել՝ դաշնակիցների հետ ավելորդ լարվածությունից խուսափելու համար:

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱԼԱՎԻԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Խնդրո առարկա ուսումնասիրությունը վերաբերում է Սիրիայի Արաբական Հանրապետությունում (ՍԱՀ) 2015 թ. սեպտեմբերի 30-ից Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) ռազմական ներկայությամբ պայմանավորված ալավիական համայնքի անվտանգության խնդիրներին[1]: Սիրիայում ՌԴ-ի ռազմական ներկայության իրավական հիմքը 2015 թ. օգոստոսի 26-ին ՌԴ-ի և ՍԱՀ-ի միջև ՌԴ-ի ռազմաօդային ուժերի ավիացիոն խմբի՝ Սիրիայում տեղակայման մասին համաձայնագիրն է: Համաձայնագրով սահմանվում է, որ ռուսական ռազմական ներկայությունը նպատակ է հետապնդում Սիրիայում պայքարելու ահաբեկչության և ծայրահեղական խմբավորումների դեմ[2]: Այս համաձայնագրով Ռուսաստանը, բացի սիրիական պետականության պահպանմանն ուղղված սիրիական իշխանությունների ջանքերին աջակցություն ցուցաբերելուց, հետապնդում է սեփական ռազմաքաղաքական և անվտանգության շահերը, քանի որ համաձայնագրում հստակ նշվում է, որ կողմերը համաձայնության են գալիս՝ ելնելով ՍԱՀ-ի և ՌԴ-ի ինքնիշխանության և անվտանգության պահպանման նկատառումներից:

2016 թ. հոկտեմբերի 14-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը ստորագրել է Սիրիայի տարածքում ՌԴ-ի օդատիեզերական ուժերի ավիացիոն խմբի տեղակայման մասին պաշտոնական Մոսկվայի և Դամասկոսի միջև համաձայնագրի վա-

[1] Markus K., Oliver T., Russia's Military Intervention in Syria, German Institute for International and Security Affairs, November 2015, p. 1.

[2] Соглашение между Российской Федерацией и Сирийской Арабской Республикой о размещении авиационной группы Вооруженных Сил Российской Федерации на территории Сирийской Арабской Республики от 26 августа 2015 года (временно применяется с 26 августа 2015 года), Официальный Интернет Портал Правовой Информации, http://publication.pravo.gov.ru/Document/View/0001201601140019?index=0&rangeSize=1.

© National Library of Armenia

վերացման մասին օրենքը: Դաշնային օրենքով վավերացվում է ՌԴ-ի զինված ուժերի ավիացիոն խմբի տեղակայման մասին ՌԴ-ի և ՍԱՀ-ի միջև 2015 թվականի օգոստոսի 26-ին Դամասկոսում ստորագրված համաձայնագիրը: Այս փաստաթուղթը կարգավորում է Սիրիայում ռուսական ներկայության բոլոր ոլորտները: Համաձայնագրում մասնավորապես նշված է, որ ավիախումբը տեղակայվել է Սիրիայում պաշտոնական Դամասկոսի խնդրանքով և գտնվում է Լաթաքիայի «Հմեյմիմ» ավիաբազայում, որն իր ենթակառուցվածքներով և անհրաժեշտ տարածքով կողմերի համաձայնությամբ անվճար հիմունքով տրամադրվում է Ռուսաստանին[3]: Փաստաթղթի կարևոր կետերից մեկով սահմանվում է, որ ռուսական զինվորական ներկայությունը Սիրիայում անորոշ ժամանակով է, այսինքն՝ պետք է ենթադրել, որ ռուսական կողմի համար Սիրիայում հակահաբեկչական պայքարը երկարաձգվում է, չնայած ՌԴ-ի տնտեսության վերաբերյալ բազմաթիվ բացասական գնահատականներին: Այդ գնահատականների համաձայն՝ ՌԴ-ն Սիրիայում երկարատև ռազմական գործողություններ իրականացնելու տնտեսական հնարավորություն չունի[4], չնայած 2016 թվականին ռազմական բյուջեն 0.8 %-ով ավելացել է[5]:

Ռուսական ներկայության ամրապնդման և սիրիական հակամարտության նոր փուլի մասին է վկայում նաև այն, որ նոր մարտական առաջադրանքի կատարման նպատակով ռուսական «Կուզնեցով» ավիակիր ռազմանավը Սիրիա ուղևորվեց և նոյեմբերի 8-ին տեղակայվեց Միջերկրական ծովի արևելյան ափերին[6]: Բրիտանական «Թելեգրաֆ» պարբերականի ռազմական լրագրող Բեն Ֆարմերը նշում է, որ ռուսական ավիակրի՝ Անգլիական նեղուցը հատելու առիթով թագավորական ռազմածովային ղեկավարությունն ու ՆԱՏՕ-ի դաշնակիցները ծրագրեր են մշակել ավիակիր ռազմանավին ու մյուս թվով ութ մարտական ապահովման աջակցման համար նախատեսված ռազմանավերին ուղեկցելու համար[7]: Ռազմանավը կրում էր ռուսական Միգ-29 և Սու-33 կործանիչներ: ՌԴ-ի պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն նոյեմբերի 15-ին ՌԴ-ի ՊՆ-ում կայացած ընդլայնված կոլեգիայի նիստի ժամանակ զեկուցեց նախագահ Վլադիմիր Պուտինին, որ Սու-33 կործանիչները սկսել են արդեն մարտական թռիչքներ կատարել Սիրիայում՝ թիրախավորելով Հոմսի և Իդլիբի շրջաններում «Իսլամական պետության»[8] և «Ջաբհաթ ֆաթահ աշ-Շամ»[9] ահաբեկչական կառույցների ռազմական տեխնիկայի պահեստներն ու ռազմական նշանակության ապրանքների արտադրական ենթակառուցվածքները[10]: Ռուսական ավիակրի

[3] Подписан закон о ратификации Соглашения между Россией и Сирией о размещении авиационной группы ВС России. http://kremlin.ru/events/president/news/53089.

[4] Lydia T., How Much Has The Syrian Civil War Cost Russia And The US? http://www.ibtimes.com/how-much-has-syrian-civil-war-cost-russia-us-2336199. Տարբեր գնահատականներով Սիրիայում ՌԴ-ի կողմից ռազմական գործողությունների օրական արժեքն է 3-4 մլն ԱՄՆ դոլար:

[5] Alexandra M., What Russia's Failing Economy Means for Putin's Legacy And Military Ambitions http://www.huffingtonpost.com/entry/sergey-aleksashenko-russia-economy interview_us_56c62e7be4b0928f5a6b4586.

[6] Russian Aircraft Carrier Admiral Kuznetsov Arrives in Syria, Haaretz, Middle East News, 13.11.2016. http://www.haaretz.com/middle-east-news/1.752719.

[7] Farmer Ben, Posturing Russians to Send Aircraft Carrier and Fleet along the English Channel, The Telegraph, 14.10.2016, http://www.telegraph.co.uk/news/2016/10/14/russian-aircraft-carrier-expected-in-english-channel/.

[8] Իսլամական պետությունը հիմնականում Իրաքի հյուսիսարևմտյան և Սիրիայի հյուսիսարևելյան շրջաններում գործող անդրազգային սուննիական զինված խմբավորում է: 2014 թ. հունիսին Իրաքում լայնածավալ տարածքներ, այդ թվում նաև՝ Մոսուլ քաղաքը, գրավելուց հետո խմբավորումը հայտարարեց Աբու Բաքր Ալ-Բաղդադիի առաջնորդությամբ իսլամական խալիֆայության ստեղծման մասին (տե՛ս Բրիտաննիկա հանրագիտարանի Իսլամական պետությունը Իրաքում և Լևանտում բաժինը https://www.britannica.com/topic/Islamic-State-in-Iraq-and-the-Levant).

[9] 2016 թ. հուլիսի 28-ին Ջաբհաթ ան-Նուսրայի ղեկավար Աբու Մուհամմադ Ալ-Ջուլանին արաբական ալ-Ջազիրա հեռուստատեսության եթերում հայտարարեց նոր կառույցի՝ Ջաբհաթ ֆաթահ աշ-Շամի ստեղծման մասին, որը պետք է փոխարիներ Ջաբհաթ ան-Նուսրային: Ալ-Ջուլանիի հայտարարության վերլուծությունը ցույց է տալիս, որ նոր կառույցի ստեղծումը համաձայնեցվել է ալ-Կաիդայի ղեկավար Այման Ազ-Զավահիրիի և նրա տեղակալ Ահմադ Հասան Աբու Ալ-Խեյրի հետ: Սա արտացոլվեց Ալ-Ջուլանիի տեքստում, երբ վերջինս գովասանքի խոսքեր էր նվիրում ալ-Կաիդայի ղեկավարությանը: Այս նոր կառույցի ստեղծումն ահաբեկչական կազմակերպության պիտակը մի կողմ դնելու նպատակ էր հետապնդում (տե՛ս The Establishment of the Fateh al-Sham Front in place of the Al-Nusra Front, Al Qaeda's branch in Syria: reasons and implications, Meir Amit Intelligence and Terrorism Information Center, Tel-Aviv, Gelilot, 04.08.2016).

[10] Russia's Admiral Kuznetsov Aircraft Carrier Begins Combat Operation in Syria, Sputnik News, Military and Intelligence, 12.11.2016, https://sputniknews.com/military/201611151047453340-admiral-kuznetsov-syria/.

© National Library of Armenia

տեղակայումը Սիրիայի միջերկրածովյան շրջանում Ռուսաստանի համար առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ այդպիսով Ֆրանսիայից ու ԱՄՆ-ից հետո ՌԴ-ն դառնում է երրորդ երկիրն աշխարհում, որը կարողանում է իրականացնել նման մասշտաբի ծովային ավիացիոն մարտական առաջադրանք[11]:

Ռուսական ռազմական ներկայության այսպիսի ուժեղացումը տարածաշրջանում, մասնավորապես Սիրիայի միջերկրածովյան ափերին, կարելի է բացատրել երկու գործոններով՝ ռազմական և քաղաքական: Ռազմական գործոնը պայմանավորված է հոկտեմբերի 17-ին Իսլամական պետությունից (այսուհետև՝ ԻՊ) Իրաքի Մոսուլ քաղաքի ազատագրման օպերացիայի մեկնարկով[12]: Ռուսական կողմը ենթադրում է, որ իրաքյան բանակի, քրդական ուժերի մասնակցությամբ և ամերիկյան կոալիցիոն ուժերի աջակցությամբ Մոսուլի հետգրավումից հետո Իսլամական պետություն ահաբեկչական կառույցի ռազմական ներկայությունը Սիրիայի տարածքում ավելանալու է: Իրաքյան ճակատում ձախողումը ստիպելու է Իսլամական պետության գրոհայիններին ամբողջ ուժերը կենտրոնացնել սիրիական թատերաբեմում: Ռուսական կողմը, հաշվի առնելով զարգացումների նման հավանական ընթացքը, ձեռնարկում է իր ռազմական հնարավորությունների լայնամասշտաբ կենտրոնացումը Սիրիայում: Բրիտանացի հետազոտող Ռոբերտ Ֆիսկն «Ինդեփենդենթ» պարբերականում անդրադառնում է այս խնդրին և նշում, որ սիրիական բանակը, Հիզբալլահի՝[13]

[11] Mcleary P., Can Putin's Aircraft Carrier stay Afloat on Its Syria Mission?, Foreign Policy, 23.09.2016.

[12] 2015 թ. վերջերից իրաքյան հատուկ ծառայություններն ու անվտանգության պատասխանատուները զբաղված են եղել դեպի հյուսիս՝ Մոսուլի ուղղությամբ, հարձակման նախապատրաստական, թիկունքային ապահովման աշխատանքներով: 2016 թ. հոկտեմբերի 13-ին Իրաքի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ Օսման Ալ-Ղանմին հայտարարեց, որ նախապատրաստական աշխատանքներն ավարտված են, իսկ Իրաքի վարչապետ Հայդար Ալ-Աբադին հրաման տվեց հոկտեմբերի 17-ին սկսել Մոսուլի վրա հարձակման գործողությունը: The Advance towards Mosul begins, Stratfor Analysis, 16.10.2016. https://www.stratfor.com/analysis/advance-toward-mosul-begins.

[13] Արաբերեն՝ «Ալլահի կուսակցություն», լիբանանյան շիայական կրոնաքաղաքական շարժում: Ստեղծվել է 1982 թ. Բեքաայի հովտում (Բաալբեկում) Իրանի գործուն միջամտությամբ Լիբանանում իսրայելական ագրեսիային

Սիրիայում գտնվող մարտական խմբերը պատրաստվում են Մոսուլի անկումից հետո Իսլամական պետություն ահաբեկչական կառույցի հազարավոր գրոհայինների դեմ պայքարին, որոնք ամենայն հավանականությամբ ներխուժելու են Սիրիա: Սիրիական բանակի հետախուզական տվյալների համաձայն՝ Սիրիայի հյուսիսային շրջանում կառավարական ուժերի վերահսկողության տակ գտնվող Հասաքե քաղաքից դեպի հարավ ընկած բնակավայրերում Իսլամական պետության պահանջով էլեկտրականության և ջրի ապահովման նոր ենթակառուցվածքներ են կառուցվում: Սպասվում է Մոսուլից դեպի Սիրիայի այդ շրջաններ Իսլամական պետության մարտիկների մեծ հոսք: Չի բացառվում, որ կկրկնվի այն, ինչ տեղի ունեցավ Իրաքի Ֆալուջա քաղաքն Իսլամական պետությունից իրաքյան բանակի վերահսկողության տակ անցնելուց հետո[14], այնտեղ մարտնչած գրոհայինների մեծաքանակ խմբերը տեղափոխվեցին Սիրիա: Այլ կերպ ասած Մոսուլի գրավումից հետո գրոհայինների հսկայական զանգվածներ ուղղորդվելու են ընդդեմ սիրիական բանակի և նրան աջակից ուժերի դեմ: Հիզբալլահի առաջնորդ Հասսան Նասրալլահը հետաքրքիր ակնարկ էր արել՝ նշելով, որ եթե իրաքյան բանակի կողմից Իսլամական պետությունը վերջնական պարտության չենթարկվի Մոսուլում, ապա Իրաքի շիա աշխարհազորայինները կպարտավորվեն շարժվել դեպի Արևելյան Սիրիա Ռակկայի ուղղությամբ շարժվող ահաբեկիչներին ոչնչացնելու համար[15]:

Երկրորդ գործոնը քաղաքական դրդապատճառ ունի: Պետք է ենթադրել, որ սիրիական բանակն ու նրան աջակից

դիմագրավելու նպատակով: Գլխավոր քարտուղարը շեյխ Սեյիդ Հասան Նասրալլահն է 1992թ.-ից: Տե՛ս Փաշայան Ա., Հիզբալլահ, Նորավանք հիմնադրամ, Տեղեկանք, 28.09.2006. http://www.noravank.am /arm/articles/detail.php?ELEMENT_ID=2473.

[14] 2016 թ. հունիսի 26-ին Ֆալուջայի օպերացիայի հակաահաբեկչական ուժերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Աբդուլ Վահաբ Ալ-Սաադին հայտարարեց, որ մայիսի 22-ին սկսված Ֆալուջայի ազատագրման ռազմական գործողությունն ավարտված է: Տե՛ս Sinan Salaheddin, Iraqi Commander: Fallujah Fully Liberated from ISIS, 26.06.2016, https://apnews.com/701e5c697003431bb8d82c83e9828e3d).

[15] Robert F., When Mosul Falls, ISIS will Flee to the Safety of Syria. But what then?, Independent, 18.10.2016, http://www.independent.co.uk/voices/mosul-offensive-isis-flee-iraq-syria-raqqa-bashar-al-assad-what-then-robert-fisk-a7365776.html.

© National Library of Armenia

ռուսական զինուժն ամեն գնով ցանկանում են մինչև Մոսուլի օպերացիայի ավարտն արագորեն իրենց վերահսկողության տակ վերցնել Հալեպը, որպեսզի արդեն կարողանան ուժերը վերադասավորել Սիրիայի արևելյան շրջաններում: Արևելյան Հալեպում հումանիտար ճգնաժամի վատթարացումը հանգեցրել է բարդությունների սիրիական խնդրի շուրջ ռուս-ամերիկյան բանակցություններում: Ռազմական գործողությունների դադարեցման մասին սեպտեմբերի 13-ին ձեռք բերված ռուս-ամերիկյան համաձայնագրի ձախողումը[16] սիրիական հակամարտությունը քաղաքական բանակցությունների միջոցով լուծելու գերտերությունների ջանքերն ապարդյուն է դարձնում: Հոկտեմբերի 15-ին Շվեյցարիայի Լոզան քաղաքում մեկնարկեց Սիրիայում կրակի դադարեցմանն ուղղված բանակցու-

[16] Syria ceasefire comes into effect under US-Russia deal, 13.09.2016. http://www.aljazeera.com/news/2016/09/syria-ceasefire-effect-russia-deal-160912125315496.html. Համաձայնագրի ձախողման մեջ կողմերը մեղադրում են միմյանց: ՄԱԿ-ում ՌԴ-ի մշտական ներկայացուցչի՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահին ուղղված Սիրիայում ապօրինի զինված խմբավորումների կողմից զինադադարի խախտումների վերաբերյալ 23.10.2016 թվակիր նամակում նշվում է՝ 2016 թ. սեպտեմբերի 17-ին ժամը 17:00-ին ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերի երկու ամերիկյան Ֆ 16 կործանիչները, երկու Ա-10 ռեակտիվ ինքնաթիռներն ու մեկ հարվածային անօդաչու թռչող սարքը հարվածներ են հասցրել Դեր-Զորի օդանավակայանից 6 կմ հարավ ընկած շրջանում դիրքավորված սիրիական կառավարական ուժերին: 17:50-ի սահմաններում ռուսական կողմի պահանջով հարվածները դադարել են: Միաժամանակ նշված շրջանում Իսլամական պետության գրոհայիններն անցել են հարձակման: Կատաղի մարտի արդյունքում ահաբեկչական խմբավորման առաջխաղացումը կասեցվել է: Ամերիկյան ավիահարվածների հետևանքով Սիրիայի կառավարական ուժերն ունեցել են մարտական կորուստներ՝ 62 զոհ, 98 վիրավոր, շարքից հանված 11 ռազմական տեխնիկա: Տե՛ս Письмо Постоянного представителя Российской Федерации при организации Объединенных наций от 21 сентября 2016 года на имя Председателя Совета Безопасности, 23.10.2016: Ի հակադրություն վերոնշյալի, արևմտյան աղբյուրները, մասնավորապես բրիտանական «Ջեյնս Դիֆենս Ուիկլի» շաբաթաթերթի հոդվածագիր Թիմ Ռիփլին, նշում են, որ կրակի դադարեցման մասին ռուս-ամերիկյան համաձայնագրի իրագործումը ձախողվեց այն ժամանակ, երբ Հալեպի ուղղությամբ սիրիական կառավարական ուժերը լայնածավալ հարձակում սկսեցին՝ թիրախավորելով նաև դեպի Հալեպ շարժվող հումանիտար օգնության ավտոշարասյունը: Տե՛ս Ripley Tim, Syrian Ceasefire Breaks Down, IHS Janes Defence Weekly, Volume 53, Issue No 39, 28.10.2016, p. 4.).

թյունների հերթական փուլը: Մասնակից պետությունների արտգործնախարարների ընդգծմամբ այս բանակցությունները նշանակալի արդյունք չեն տվել, չնայած կարևոր ու դրական մի հանգամանքի, այն է՝ տարածաշրջանի որոշիչ պետությունների՝ Հորդանանի, Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի, Իրաքի, Քաթարի, Թուրքիայի և Իրանի ներկայացվածությանը[17]: Լոզանյան բանակցությունների հիմնական արդյունքներից մեկն այն է, որ Ռուսաստանն ու ԱՄՆ-ը կարողացան հաղթահարել սեպտեմբերի 12-ի համաձայնագրի տապալումից հետո միմյանց նկատմամբ սուր քննադատական հռետորաբանությունը և կրկին նստեցին բանակցությունների սեղանի շուրջը: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամներ, երկու եվրոպական պետությունները՝ Միացյալ Թագավորությունն ու Ֆրանսիան չէին մասնակցում հանդիպմանը: Եվրոպական երկու պետությունների և ՌԴ-ի միջև հարաբերությունները լարվել էին այն բանից հետո, երբ նրանք Ռուսաստանին մեղադրել էին Սիրիայում ռազմական հանցագործությունների կատարման մեջ[18]: Լոզանի համաժողովը նպատակ ուներ բանակցություններ սկսելու Իրան-Ռուսաստան և Թուրքիա-Սաուդյան Արաբիա-Քաթար երկու տանդեմների միջև:

Հոկտեմբերի 17-ին ՄԱԿ-ում ՌԴ-ի մշտական ներկայացուցիչ Վիտալի Չուրկինը հայտարարեց, որ Լոզանում Թուրքիան, Քաթարն ու Սաուդյան Արաբիան համաձայնվել են ճնշումներ գործադրել սիրիական ապստամբների վրա՝ նրանց ստիպելու հստակ տարանջատվել ալ-Կաիդա ահաբեկչական կառույցի սիրիական ճյուղը համարվող Ջաբհաթ Ֆաթահ աշ-Շամից: Նա ընդգծել էր՝ եթե չափավոր ընդդիմության ներկայացուցիչներն իրենց տարանջատեն, ապա մենք Ջաբհաթ ան-Նուսրային երկու ընտրության հնարավորություն կտանք, կամ նրանք կլքեն քաղաքը, ինչպես դուք գիտեք, Ստեֆան Դե Միստուրան սրա վերաբերյալ հատուկ առաջարկությամբ էր հանդես եկել[19], որը դեռևս չի ընդունվել ան-Նուսրայի կողմից, կամ

[17] Laura Smith-Spark, Syria: US, Russia, Regional Powers Fail to Reach Breakthrough in Talks on Conflict, 16.10.2016. http://edition.cnn.com/2016/10/15/world/syria-talks-switzerland-us-russia/.

[18] Russia Scorns Boris Johnson's 'Hysteria' as Bombs Hammer Aleppo, The Guardian, 12.10.2016. https://www.theguardian.com/world/2016/oct/12/russia-boris-johnson-syria-aleppo-war-crime-russophobic-hysteria.

[19] ՄԱԿ-ում ՌԴ ներկայացուցիչը հղում է անում Սիրիայի հարցով ՄԱԿ-ի հատուկ բանագնաց Ստեֆան Դե Միստուրային և նշում, որ Ջաբհաթ

© National Library of Armenia

մենք նրանց պարտության կմատնենք: Ջաբհաթ Ֆաթահ աշ-Շամի գրոհայինների՝ Հալեպից դուրս գալու պարագայում միայն սիրիական կառավարական ուժերն ու չափավոր համարվող ընդդիմությունը կսկսեն ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ բանակցություններ, որը կկանխի հետագա արյունահեղությունը Հալեպի արևելյան շրջանում[20]: Արդեն հոկտեմբերի 18-ին ՌԴ-ի պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն ՀՈՒ ղեկավար կազմի հետ խորհրդակցության ժամանակ հայտարարեց. «Այսօր 10:00-ից ՌԴ-ի օդատիեզերական ուժերի և սիրիական ռազմաօդային ուժերի կողմից ավիահարվածները Հալեպի շրջանում դադարում են: Ավիահարվածների վաղաժամ դադարեցումն անհրաժեշտ է հոկտեմբերի 20-ին «հումանիտար դադար»-ի հաստատման համար: Սա հնարավորություն կտա երաշխավորելու խաղաղ բնակչության անվտանգ ելքը նախատեսված 6 միջանցքներով և նախապատրաստելու Հալեպի արևելյան շրջանից հիվանդների և վիրավորների էվակուացիան: Կոչ ենք անում Արևելյան Հալեպում գտնվող զինված խմբավորումների վրա ազդեցություն ունեցող պետությունների ղեկավարությանը համոզել այդ խմբավորումների հրամանատարներին դադարեցնել ռազմական գործողությունները և լքել քաղաքը»[21]: Սակայն «հումանիտար դադարը» Հալեպում տևեց մինչև հոկտեմբերի 26-ը[22]: Մեկ ամիս անց՝ նոյեմբերի 28-ին, սիրիական կառավարական ուժերն օդուժի ակտիվ աջակցությամբ իրենց վերահսկողության տակ առան Արևելյան Հալեպի տարածքի 40 տոկոսը 12 շրջաններով: Սիրիական ընդդիմության ներկայացուցիչ Ջորջ Սաբրան, սակայն, այս հետընթացն ապստամբների համար վերջնական պարտություն չհամարեց՝ ընդգծելով, որ Սիրիայում այլ շրջաններ կան, որտեղ դեռ պետք է երկար պայքար մղվի կառավարական ուժերի դեմ[23]:

Ռուսաստանի ռազմական ներկայությունը Սիրիայում և սիրիական հարցում վարած քաղաքականությունը թույլ են տալիս ենթադրելու, որ այն նպատակադրվել է հետճգնաժամյա Սիրիայում ծանրակշիռ ռազմաքաղաքական ազդեցություն ունենալ այդ երկրում: Այս նպատակի իրագործման համար ռազմավարական նշանակություն ունեն սիրիական հասարակության ազդեցիկ զանգվածների հետ փոխհարաբերությունների հաստատումն ու խորացումը: Այս համատեքստում ՌԴ-ն առանձնահատուկ նշանակություն է տալիս շուրջ կես դար Սիրիայում ռազմաքաղաքական իշխանության ղեկին գտնվող ալավիական համայնքի ներկայացուցիչների հետ հարաբերություններին: ՌԴ-ի կողմից Սիրիայում իրականացվող ռազմական գործողությունները ոչ միանշանակ ազդեցություն են ունեցել ալավիական համայնքի անվտանգության ապահովման խնդրի վրա: Հակաալավիական ելույթները տարբեր սուննի ծայրահեղական խմբավորումների կողմից մերթընդմերթ հնչել են սիրիական ճգնաժամի հենց սկզբից[24]: Երբ վերլուծում ենք

Ֆաթահ աշ-Շամի գրոհայինների թիվն Արևելյան Հալեպում շուրջ 900 է, իսկ ընդդիմության մյուս մարտիկների թիվը հասնում է 12 հազարի: Դե Միստուրան ավելի վաղ առաջարկել էր անձամբ կազմակերպել Արևելյան Հալեպից ապստամբների դուրսբերման գործողությունը, որպեսզի կանխվեն ավերածությունները Հալեպում: Տե՛ս http://www.middleeasteye.net/news/turkey-qatar-saudis-agreed-put-pressure-syrian-rebels-russia-1384393368.

[20] Al-Nusra Must Either Leave Aleppo or Be Defeated – Russia's UN Envoy, 18.10.2016, https://www.rt.com/news/363108-aleppo-syria-un-churkin-nusra/.

[21] Министр обороны России генерал армии Сергей Шойгу провел селекторное совещание с руководящим составом Вооруженных сил, Департамент информации и массовых коммуникаций министерства обороны РФ, 18.10.2019, http://function.mil.ru/news_page/country/more.htm?id=12100053@egNews.

[22] Сводка контртеррористических операций Сирийской армии за 26 октября, 26.10.2016, http://sana.sy/ru/?p=89086.

[23] Syria Conflict: Aleppo Defeat 'Not the End for Rebels', BBC News, Middle East, 29.11.2016 http://www.bbc.com/news/world-middle-east-38139759.

[24] «Ալավիներն՝ իրենց գերեզմանները, քրիստոնյաները՝ Լիբանան» կարգախոսն առաջիններից էր, երբ Սիրիայի տարբեր քաղաքներում միտինգների ժամանակ հնչեցնում էին սիրիացի հակահիշխանական ելույթների մասնակիցները: Ghafour Hamida, Syrian President Bashar Assad: Will He Fight or Flee, 08.12.2012, https://www.thestar.com/news/world/2012/12/08/syrian_president_bashar_assad_will_he_fight_or_flee.html. 2012 թ. հունիսի 17-ին համացանցում շրջանառության մեջ դրվեց դեռևս 2011 թ. հունիսի 26-ին նկարահանված մի տեսանյութ, որտեղ Սիրիայի Ջաբլա քաղաքում հակահիշխանական միտինգի մասնակիցները վանկարկում էին. «Ո՛չ շիաներին, ո՛չ Հիզբալլահին», Համայում ցույց է տրվում, թե ինչպես են վանկարկում. «Մենք ալավիներին չենք ուզում տեսնել», նրանք կոչով դիմում էին ոմն Արուրի և նշում, թե տե՛ս, Արո՛ւր, քո թիկունքին ինչքան մարդ է կանգնած: Տեսանյութի վերջում սիրիական ծագմամբ սուննի կրոնավոր Ադնան Ալ-Արուրը սաուդական «ալ-Ուիսալ» հեռուստաընկերության ուղիղ եթերում հակաալավիական կոշտ հայտարարությամբ հանդես եկավ՝ նշելով. «Ես դիմում եմ հատկապես ալավիներին, այն

© National Library of Armenia

սուննի ծայրահեղական «Ջաբհաթ Ֆաթահ աշ-Շամ» խմբավորման ղեկավար Աբու Մուհամմադ Ալ-Ջուլանիի՝ ալավիների վերաբերյալ տարբեր առիթներով արած հայտարարությունները, ապա պարզվում է, որ մինչև ՌԴ-ի կողմից Սիրիայում ռազմական գործողություններ սկսելն այդ հայտարարություններն ալավիներին այլընտրանք թողնում էին, որոնցով կոչ էր արվում նրանց հետ մնալ Ասադի վարչակարգին աջակցելուց: Այսպես, 2015 թվականի մայիսի 27-ին «Ալ-Ջազիրա» հեռուստատեսությանը տված հարցազրույցի ժամանակ «Ջաբհաթ Ֆաթահ աշ-Շամ» ահաբեկչական կառույցի ղեկավար Աբու Մուհամմադ Ալ-Ջուլանին, անդրադառնալով ալավիներին, նշում է. «Ալավիները կարող են հանձնվել «Ջաբհաթ ան-Նուսրային», և քանի դեռ նրանք ապաշխարում են, նրանք չեն սպանվի, նույնիսկ եթե նրանք սպանել են հազարավորներ մեզանից: Ալավիները մարդիկ են, որոնք հեռացել են իսլամից, և նրանք պետք է վերջ դնեն Ասադի համար պայքարին, նրանք պետք է մերժեն նաև իրենց դավանանքում առկա ոչ իսլամական տարրերը»[25]: Իսկ արդեն ռուսական ավիացիոն առաջին հարվածներից հետո՝ 2015 թ. հոկտեմբերի 13-ին, Ջաբհաթ Ֆաթահ աշ-Շամի ղեկավար Ալ-Ջուլանին կոչ արեց լայնածավալ հարձակումներ սկսել ալավիական համայնքի բնակավայրերի վրա ի պատաս-

ալավիները, ովքեր չեզոք դիրք կպահեն, մեր կողմից չեն թիրախավորվի, սակայն նրանք, ովքեր այդպես չեն վարվի, Աստված վկա, մեր թշնամիներն են, և մենք նրանց մսաղացի բաժին կդարձնենք»: Տե՛ս տեսանյութը - https://www.youtube.com/watch?v=f6zGwjj0IDc.: Սա ճգնաժամի ընթացքում առաջին հակաալավիական կոչն էր, որն արվեց սուննի կրոնական գործչի կողմից: Հակաալավիական ելույթները սուննի կրոնական հեղինակությունների կողմից հետագայում շարունակվեցին, որոնցից արժանահիշատակ է 2013 թ. հունիսի 2-ին քաթարաբնակ Յուսուֆ Ալ-Կարդաուիի հայտարարությունը, որում վերջինս նշում է. «Շիայական Իրանը փորձում է «ուտել» սուննի մուսուլմաններին, որոնք մեծամասնություն են կազմում իսլամական աշխարհում: Նուսայրիները (այդպես ալավիներին անվանում էին մինչև Սիրիայում ֆրանսիական մանդատի հաստատումը՝ 1923 թվականը – Գ.Վ.) ամենավատ անհավատներն են, նրանք ավելի վատն են, քան քրիստոնյաներն ու հրեաները»: Տե՛ս Richard Spencer, Muslim Brotherhood Cleric Calls for Sunni Jihad in Syria, The Telegraph, 02.06.2013, http://www.telegraph.co.uk/news/worldnews/middleeast/syria/ 10094590.

[25] Aron L., Abu Mohammad al-Golani's Aljazeera Interview, http://www.joshualandis.com/blog/abu-mohammed-al-golanis-aljazeera-interview-by-aron-lund/ 29.05.2016.

խան ռուսական ավիահարվածների հետևանքով սուննի մուսուլման բնակչության անխնա սպանությունների: Ալ-Ջուլանին իր կոչում մասնավորապես նշել էր . «Ռուսական ռազմական ներխուժման նպատակը Բաշար Ալ-Ասադի իշխանության կործանումը կանխելն է, սակայն այն ձախողվելու է: Այլընտրանք չկա, բացի Լաթաքիայի ալավիաբնակ գյուղերն ու քաղաքները հազարավոր հրթիռներով ամենօրյա հարվածներով ոչնչացնելուց»[26]: Շարունակելով իր կոչը՝ վերջինս ռուսական ռազմական գործողությունները համարեց նոր Խաչակրաց արշավանք՝ ընդգծելով հետևյալը. «Պատերազմը Շամում (Սիրիա) կմոռացնի ռուսներին Աֆղանստանի սարսափները: Ռուսական ներխուժումը Սիրիա մուսուլմանների թշնամիների վերջին նետն է»[27]: Ալ-Ջուլանին իր այս հայտարարության մեջ ռուսական «ներխուժումը» նոր Խաչակրաց արշավանքների հետ նույնացնելու ընդգծմամբ, ամենայն հավանականությամբ, նպատակ ուներ իր հետևորդների շրջանում խորացնելու սիրիական իշխանությունների դեմ պայքարի կրոնական ոգին՝ դրան տալով սրբազան պատերազմ վարելու հիմնավորում: Պետք է ենթադրել, որ ռուսական ռազմական գործողություններին հետևած սուննի ծայրահեղական խմբավորման կողմից ալավիներից վրեժխնդիր լինելու վերաբերյալ խստաշունչ հայտարարությունները ստիպեցին ալավիների որոշ շրջանակների՝ համայնքի վերաբերյալ սուննի ծայրահեղականների վերաբերմունքի փոփոխման նպատակադրմամբ և ելնելով անվտանգության նկատառումներից, գնալ համայնքի ինքնության գաղափարական փոփոխությունների: Սա է վկայում 2016 թ. ապրիլին տարբեր միջազգային աղբյուրների կողմից շրջանառության մեջ դրված «Ինքնության բարեփոխման հռչակագիր»[28] խորագրով փաստաթուղթը: Քննության առնելով այս 7 գլուխներից բաղկացած, անանուն հեղինակների կողմից ներկայացված փաստաթուղթը՝ առանձնացնում ենք որոշ կետեր, որոնք կամրացնեն մեր վերոբերյալ պնդումները: Հռչակագրի նախա-

[26] Al-Khalidi S., Nusra Front Urges Attacks on Syria's Alawites to Avenge Russian Bombings, Reuters, 12.10.2015, http://www.reuters.com/article/us-mideast-crisis-nusra-idUSKCN0S625220151013.

[27] Նույն տեղում:

[28] Caroline W., Syrian Alawites Distance Themselves from Assad, 03.04.2016, http://www.bbc.com/news/world-middle-east-35941679, տե՛ս «Declaration of Identity Reform», http://www.dw.com/en/reports-syrias-alawites-distance-themselves-from-assad/a-19161450.

© National Library of Armenia

բանում նշվում է, որ ալավիական համայնքի գլխավոր նպատակը սիրիական հասարակության մյուս խմբերի հետ խաղաղ համակեցությունն է: Հռչակագրի անանուն հեղինակները նշում են, որ այս հռչակագիրը ոչ մի պարագայում չի նշանակում ալավիների դավանանքային համակարգի բարեփոխում: Ընդհանուր տեքստը վերլուծելուց հետո հանգում ենք այն եզրակացության, որ հռչակագրի հեղինակները նպատակադրվել են համայնքը հեռու պահել Սիրիայում և նրա շուրջը տեղի ունեցող իրադարձությունների ֆոնին տարբեր պիտակավորումներից, հիմնավորապես մերժել սիրիական հակամարտության մեջ ներգրավված, հատկապես շիայական Հիզբալլահի և Իրանի կողմից աջակցություն ստացող կառավարամետ կողմերի հետ ալավիների առնչությունները: Մասնավորապես հռչակագրի ներկայացման գլխավոր նպատակներից մեկը շիայական ուղղության հետ չնույնացվելը և այդպիսով սուննի ծայրահեղականների կողմից չթիրախավորվելն է: Հռչակագրի 1-ին գլխի 3-րդ կետով հեղինակները պնդում են. «Հարգելով շիայականության հետ մեզ միավորող ամեն բան, սակայն, պետք է հաշվի առնենք, որ իսլամի շիայական ու ալավիական ուղղությունների միջև հսկայական տարբերություններ կան, այդպիսով մենք մերժում ենք յուրաքանչյուր ֆեթվա, որը կձգտի ալավիականությունը շիայականության անքակտելի մաս կամ ճյուղ համարել»: 7-րդ գլխի 28-րդ և 29-րդ կետերում նշված է, որ ալավիականության և շիայականության հռչակագրով տարբերակումը ոչ թե հեռացումն է շիայականությունից, այլ հարգանքը՝ ուղղված դեպի իսկական ճշմարտությունը: Այն, որ ալավիականությունն ու շիայականությունը կիսում են որոշ կրոնական ավանդույթներ, դեռ չի նշանակում, որ առաջինը երկրորդի ճյուղավորումն է[29]: Պակաս կարևոր չեն հռչակագրում առկա այն կետերը, որոնք վերաբերում են սուննի-ալավիական հարաբերությունների նոր տեսլականին: Նրբանկատորեն անդրադառնալով սուննիների հետ հարաբերություններին՝ հռչակագրի հեղինակները հայտնում են. «Սիրիացի սուննիներն արդարացվելու են և հավաքական պատասխանատվության չեն ենթարկվելու հակամարտության ընթացքում ալավիների նկատմամբ իրենց որոշ հավատակիցների իրագործած վայրագությունների համար: Պատմական իրադարձությունների մեր ընկալումը ցույց է տալիս, որ ալավիների

[29] Նույն տեղում, էջ 2,7:

հանդեպ նյութական կամ բարոյական խտրականություն են ցուցաբերել տարբեր պատմական ժամանակաշրջաններում սիրիական հայրենիքը զավթած սուննիական աղանդավորական ուժերը, որոնք ոչ մի առնչություն չունեն սիրիացի սուննիների հետ»[30]: Այս տարանջատմամբ ալավի հեղինակները ցույց են տալիս, որ իրենք հստակ տարբերակում են Սիրիայի սուննիներին մյուս սուննիներից, ինչը նպատակ է հետապնդում Սիրիայի սուննի բնակչության շրջանում մեղմացնելու հակաալավիական տրամադրությունները: Վերջապես, 6-րդ գլխի 26-րդ կետով հեղինակներն անդրադառնում են Սիրիայում իշխող վարչակարգին ու նրա գործունեությանը: Տրվում է հռչակագրի ամենակարևոր ազդակը. « Քաղաքական իշխանությունը, ով էլ որ այն մարմնավորում է, մեզ չի ներկայացնում, այն չի ձևավորում մեր ինքնությունը կամ պահպանում մեր անվտանգությունն ու հեղինակությունը: Մենք՝ ալավիներս, չենք գեներացնում ու ձևավորում նրա հզորությունը: Վարչակարգի օրինակարգությունը պետք է միայն ընդունվի հիմնարար ազատությունների և ժողովրդավարության չափորոշիչներով: Քաղաքական իշխանությունը ոչ մի պարագայում չպետք է իշխանությունը կորցնելու վտանգից վախեցած ճնշում գործադրի: Իսկ ընդդիմությունն իշխանության հասնելու համար պետք է օգտագործի բոլոր միջոցները, բացի զինված ապստամբությունից»: Մի շարք հետազոտողներ, անդրադառնալով հռչակագրի բովանդակությանն ու ենթատեքստին, ընդգծում են, որ փաստաթղթի հեղինակներն այսպիսով փորձել են ալավիական համայնքը հեռու պահել Սիրիայում իշխանության ղեկին գտնվող Ասադների ալավիական ընտանիքի հետ նույնացվելուց[31], որպեսզի ապագայում սուննիական շրջանակների կողմից չթիրախավորվեն: Ծանոթ լինելով հռչակագրի վերաբերյալ ալավի շեյխերից Ահմադ Բիլալի բացասական դիրքորոշմանը, որը պնդում է, որ այս հռչակագիրը և բովանդակությունը հերթական հակասիրիական գործողությունն են[32]

[30] Նույն տեղում:

[31] Goldsmith L., Syria - The Alawite 'Identity Reform, 27.09.2016, http://lecourrierdumaghrebetdelorient.info/syria/syria-the-alawite-identity-reform/, Caroline Wyatt, Syrian Alawites Distance Themselves from Assad, 03.04.2016, http://www.bbc.com/news/world-middle-east-35941679.

[32] Alawite Clergy Denies Western Media Reports of Syrian Sect Distancing itself form Assad, 07.04.2016, https://www.rt.com/news/338848-syria-assad-alawites-sect/.

© National Library of Armenia

Սիրիայի թշնամիների կողմից, այնուամենայնիվ ընդունում ենք, որ փաստաթղթի վավերականության ու իսկության հարցը կարևոր գիտական հետազոտության խնդիր է, քանի որ այն անանուն հեղինակների կողմից է ներկայացվել: Չնայած հռչակագրի նախաբանում նշված է, որ տեքստի բովանդակությունն ընդունվել է ալավիական բոլոր «տների» կողմից, և տեքստի էջերը հաստատված են «Ալավիների նախաձեռնության խումբ» (Մաջմուաթ ալ-Իբթիդար ալ-Ալաուի) գրությամբ կլոր կնիքով, սակայն այդ կնիքի իրավական ուժ ունենալու և ալավիական համայնքի կողմից ընդունելի լինելու հանգամանքը նույնպես ենթակա է գիտական քննության: Այս երկու խնդիրներին կանդրադառնանք մեր ապագա հետազոտություններում:

Չնայած հռչակագրի հրապարակմանը, որով համայնքի որոշ ներկայացուցիչներ ազգային միասնության և սիրիական հասարակության բոլոր բաղադրիչների միջև խաղաղ գոյակցության կոչ էին անում, այնուամենայնիվ հակաալավիական հիրադարձությունները Սիրիայում շարունակվեցին: 2016 թ-ի մայիսի 12-ին «Ահրար աշ-Շամ» և «Ջաբհաթ Ֆաթահ աշ-Շամ» ահաբեկչական խմբավորումները հարձակվել էին Համայից 35 կմ հարավ դեպի Հոմս տանող գլխավոր ավտոճանապարհի վրա ընկած ալ-Զառա ալավիաբնակ գյուղի վրա՝ սպանելով 19 ալավի բնակիչների[33]: 2016 թ. մայիսի 23-ին Իսլամական պետության ներկայացուցիչներն ալավիաբնակ Տարտուս և Ջաբլա քաղաքներում իրականացրին մի քանի ահաբեկչական գործողություն, որի հետևանքով 154 մարդ զոհվեց, 300-ը վիրավորվեց[34]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. ՌԴ-ի ռազմական ներկայությունը Սիրիայում մեծապես նպաստել է երկրի դե յուրե գործող սահմաններում պետության ինքնիշխանության և ամբողջական վերահսկողության վերականգնմանն ուղղված Սիրիայի իշխանությունների կողմից իրականացվող ռազմական գործողություններին և միջազգային ու ռազմաքաղաքական առումով բարելավել իշխող վարչակարգի դիրքերը երկրի ներսում, եթե հաշվի ենք առնում, որ ՍԱՀ-ի նախագահ Բաշար Ալ-Ասադի՝ 2015 թ. հոկտեմբերի 15-ի Մոսկվա կատարած այցը միակ արտասահմանյան պաշտոնական այցն էր ճգնաժամը սկսվելու օրվանից:
2. Չնայած տարաբնույթ գնահատականներին, որ ռուսական ռազմական ներկայությունը նպատակ ունի ապահովելու ալավիական համայնքի և բասական վարչակարգի անվտանգությունը Սիրիայում, այնուամենայնիվ պետք է փաստել, որ ՌԴ-ի կողմից սիրիական ազգային բանակին ու իշխանություններին ցուցաբերվող աջակցությունը սուննի ծայրահեղական խմբավորումների շրջանում հակաալավիական տրամադրությունների գրգռման պատճառ է հանդիսացել: Սուննի ծայրահեղական խմբավորումներն ալավիների նկատմամբ բացասական առումով խտացել են՝ դրդելով ալավիական համայնքի որոշ ներկայացուցիչների հանդես գալ խաղաղ գոյակցության վերաբերյալ առաջարկությամբ, որն արտահայտվել էր «Ինքնության բարեփոխման հռչակագրի» հրապարակմամբ:
3. Իսլամական պետության ահաբեկիչների կողմից Տարտուսի և Ջաբլայի ահաբեկչությունների իրականացումը, Սիրիայի ալավիներից վրեժխնդիր լինելու հերթական փորձից բացի, ազդանշան էր՝ ուղղված պաշտոնական Մոսկվային և ռուսական ռազմական ներկայությանը, քանի որ այդ բնակավայրերում, հատկապես Տարտուսում է տեղակայված ռուսական ռազմածովային բազան, իսկ «Հմեյմիմ» ռազմական օդանավակայանը, որտեղից ռուսական ինքնաթիռները ռազմական թռիչքներ են իրականացնում, գտնվում է Ջաբլայի մոտակայքում: Այս գործողություններով ահաբեկիչները ցանկանում են նաև բարձրացնել ռուսական ռազմական ներկայության գինը Սիրիայում, որը տալիս է սիրիացի ժողովուրդը:
4. Ամենևին չբացառելով, որ ռուսական ռազմավարության ծրագրողները մինչև Սիրիա ներխուժումը կանխատեսել են նաև ալավիական համայնքի անվտանգության վրա իրենց գործողությունների բացասական ազդեցությունը, պետք է ենթադրել, որ այդ ազդեցությունը գնահատվել է

[33] Lisa B., and Tom P., Insurgents Seize Syrian Alawite Village, Killing 19: Observatory, Reuters, 13.05.2016, http://www.reuters.com/article/us-mideast-crisis-syria-village-idUSKCN0Y41ME.

[34] Fabriche B., The Islamic State is Targeting Syria's Alawite Heartland and Russia, The Washington Institute for Near East Policy, 24.05.2016, http://www.washingtoninstitute.org/policy-analysis/view/the-islamic-state-is-targeting-syrias-alawite-heartland-and-russia.

© National Library of Armenia

որպես կողմնակի և հետագայում հաղթահարելի խոչընդոտ:

5. Սիրիական ճգնաժամի հանգուցալուծման պարագայում հետճգնաժամյա Սիրիայում տարբեր համայնքների՝ համակեցության հարցի շրջանակներում առաջնահերթ պետք է լուծվի ալավի-սուննիական հարաբերությունների համերաշխության խնդիրը, քանի որ հենց այդ երկու համայնքների միջև հարաբերությունների հավասարակշռված և փոխհամաձայնեցված բնույթով է պայմանավորվելու երկարատև ու ամուր խաղաղությունը ՍԱՀ-ում:

ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2012Թ. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ» ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԵՎ ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՐՇԱՎԸ

2011 թ. հունվարին սկսված զանգվածային հուժկու բողոքները Եգիպտոսի համար դարձան հասարակական-քաղաքական իրավիճակի ձևավորման որակապես նոր խթանիչ 2011 թ. փետրվարի 11-ին ներքաղաքական ճգնաժամի և գործող իշխանությանն արտաքին աջակցության դադարեցման արդյունքում, մասնավորապես Վաշինգտոնի կողմից հնչեցված «հորդորներից» հետո[1], Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը հայտարարեց իր պաշտոնանկության մասին[2]: Փետրվարի 13-ին Եգիպտոսում իշխանությունն անցավ Զինված ուժերի բարձրագույն խորհրդին՝ գեներալ Հուսեյն Տանտաուիի գլխավորությամբ[3]: Մարտի 3-ին պաշտոնաթող եղավ նաև

[1] ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման, անդրադառնալով Եգիպտոսում տիրող իրավիճակին, նշեց, որ նախագահ Մուբարաքը պետք է ենթարկվի ժողովրդի կամքին, այսինքն՝ հրաժարական տա: Մուբարաքը նախագահի պաշտոնը զբաղեցնում էր սկսած 1981թ.:

[2] Hosni Mubarak regins as president: Egyptian president stands down and hands over power to the Supreme Council for the Armed Forces, 11.02.2011. http://www.aljazeera.com/news/middleeast/2011/02/201121125158705862.html, Զինված ուժերի բարձրագույն խորհուրդը թյուններ անցկացնելու մասին պահանջը, որի հիման վրա պետք է ձևավորվեր նոր ժողովրդավարական իշխանական համակարգ, որի հիման վրա էլ կանցկացվեին նոր ժողովրդավարական ընտրություններ: Կառավարության աշխատակազմի ղեկավար Քամալ Ահմեդ Ալ-Գանզուրիին հանձնարարվեց մինչև 2011 թ. նոյեմբերի 27-ը նոր կառավարություն ձևավորել:

[3] Hussein Tantawi, Head of Egypt's Higher Military Council, https:// www.alarabiya.net/articles/2011/02/11/137247.html, Հարկ է նշել, որ Տանտաուին առանձնապես մեծ ժողովրդականություն չէր վայելում Եգիպտոսում և ժողովրդի շրջանում ստացել է «Մուբարաքի պուդել» անունը: Sh. Joshi,

© National Library of Armenia

երկրի վարչապետ Ահմեդ Շաֆիքը, որին փոխարինեց տրանսպորտի նախկին նախարար Էսամ Շարաֆը[4]: Երկրում սկսվեց երկար և ներքաղաքական ճգնաժամով հագեցած անցումային շրջան:

2011 թ. փետրվար-2012 թ. մայիս-հունիս ժամանակահատվածը Եգիպտոսի համար դարձավ նոր փորձությունների շրջան: Սոցիալական հարաբերական արդարության և քաղաքական ազատության օբյեկտիվորեն հասունացած հեղափոխական հենքի վրա սկսված «արաբական գարունը» շատերի, այդ թվում նաև՝ Արևմուտքի համար, ստեղծեց աննախադեպ իրադրություն: Հասկանալի դարձավ, որ «արաբական փողոցի» զգալի հատվածը՝ սկսված «ըմբոստության» գլխավոր դերում, եգիպտական լիբերալ-ժողովրդավարական հայացքներ ունեցող ուժերի փոխարեն, նախընտրեց տեսնել իսլամիստներին[5]: Նման նախընտրության պարագայում ոչ պակաս կարևոր դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ արաբական մի շարք երկրներում, մասնավորապես նաև Եգիպտոսում, տևական ժամանակ առկա ազգայնական գաղափարների ճգնաժամը[6] ստեղծեց ազատ, այլընտրանքային ընտրություն կատարելու բացառիկ հնարավորություն՝ հօգուտ իսլամիստա-

Viewpoint: Too early to celebrate in Egypt?, http://www.bbc.co.uk/news/world-middle-east-12438007, 12.02.2011.

[4] Egypt's Prime Minister Ahmed Shafiq Resigns, http://www.bbc.com/news/world-middle-east-12634117, 03.03.2011.

[5] Իսլամիստական շարժումներից առավել հայտնի եգիպտական «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությունը հայտարարեց, որ հրաժարվում է ծայրահեղ դրսևորումներից՝ հռչակելով իրենց այսպես կոչված «չափավոր»: Возникло новое политическое понятие – умеренный исламизм. Все воспринимают его как меньшее из зол, «http://www.centrasia.ru/newsA.php?st=1326658560, 16.01.2012г. Միևնույն ժամանակ դասական քաղաքական տեսության դպրոցների տեսանկյունից դժվար է որևէ ծայրահեղական շարժման թև դիտարկել նաև «չափավորականության հարթակում»: Օրինակ՝ ֆաշիստական-նացիստական ուժերի «չափավոր թև» ձևակերպումը և այլն: Ելնելով նշվածից և Եգիպտոսում ընթացող ներկա զարգացումներից՝ կարելի է փաստել, որ «չափավոր իսլամիզմը» ընդամենը հռետորականություն է:

[6] Առհասարակ արաբական ազգայնականության ճգնաժամի մասին քննարկումներն ավելի վաղ են սկսվել, իսկ «Արաբական գարունը» այն հստակեցրեց: Տե՛ս Dawisha A., Requiem for Arab Nationalism, Middle East Quarterly, տե՛ս http://www.meforum.org/518/requiem-for-arab-nationalism, winter 2003, Volume 10, N1, pp. 25-41.

կան շարժումների[7]: Օրինակ, երբեմնի գաղափարական շարժիչ ուժը «նասերականությունը», արդեն տևական ժամանակ էր, ինչ կորցրել էր իր արդյունավետությունը, իսկ նրա վերապրուկները չէին կարող այլևս իշխանության և ժողովրդի միջև համախմբման գործոն հանդիսանալ:

Այդ պարագայում, անտարակույս «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությունը XX դարի սկզբից ծավալած իր ընդդիմադիր գործունեությամբ և աշխարհընկալմամբ կարողացավ ոչ միայն զբաղեցնել պետության մեջ առկա գաղափարական բացվածքը, այլև յուրովի հասունացրեց եգիպտական հասարակությանը «ցասման» օրվան, միևնույն ժամանակ նաև «քաղաքացիական զարթոնքի» մտման գործոն հանդիսացավ[8]:

Առհասարակ հատկանշական է, որ «Արաբական գարնան» գործընթացների բնորոշ կողմերից մեկը դարձավ հենց իսլամական գործոնի ակտիվացումը և իսլամամետ կուսակցությունների ու շարժումների ակտիվությունը: Վերջիններս, այդ թվում և «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությունը Եգիպտոսում, տասնամյակների ընթացքում ենթարկվելով որոշակի փորձությունների ու վերափոխումների, սկսեցին նոր թափ ստանալ: Ավելին, Եգիպտոսի պարագայում վերը նշված ուժերն առաջ քաշեցին պետության կառավարման նոր մոդելի ընտրության հարցը: Ակտիվորեն սկսեց քննարկվել այսպես կոչված թուրքական մոդելի ներդրման հնարավորու-

[7] Տևական ժամանակ արաբական մի շարք երկրներում կրոնաքաղաքական ուժերը եղել են աշխարհիկ վարչակարգերի հիմնական գործուն ընդդիմախոսները, իսկ քաղաքական իսլամը՝ այլախոհության գաղափարական հիմնական աղբյուրներից մեկը: Որոշ երկրներում նրանք գործել են ընդհատակում և դաժանորեն հետապնդվել իշխանությունների կողմից: Ամենևին էլ պատահական չէ, որ «Արաբական գարնան» համատեքստում իսլամիզմը կարողացավ լցնել գաղափարախոսական այն «տորիչելյան դատարկությունը», որն արաբական երկրներում առաջացել էր բավական երկարատև ժամանակի ընթացքում՝ սոցիալական «երջանկության և արդարության» նոր հույսեր որոնելիս: «Արաբական գարնան» անմիջական արդյունքներից կարելի է համարել Հյուսիսային Աֆրիկայի ու Մերձավոր և Միջին Արևելքի որոշ երկրներում հասարակական-քաղաքական զարգացումների վրա իսլամական գործոնի բացահայտ ազդեցությունը:

[8] Over 37.500 Egyptians to Take Part on January 25th Uprising, տե՛ս http://www.ikhwanweb.com/article.php?id=27870, 19.01.2011.

© National Library of Armenia

թյունը, ինչը նշանակում էր արաբական երկրներում, և մասնավորապես Եգիպտոսում, այսպես կոչված չափավոր իսլամամետների իշխանության գալու նոր հնարավորությունը:

Ասվածի շրջանակներում հետաքրքրականն այն է, որ «եգիպտական հեղափոխությանը» ըստ էության իսլամամետներն արձագանքեցին ավելի ուշ՝ նախապես հայտարարելով, որ չեն ձգտելու իշխանության: Սակայն արդեն 2011 թ. ապրիլի 30-ին «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությունը ստեղծեց իր քաղաքական թևը «Ազատություն և արդարություն» կուսակցությունը (ԱԱԿ): ԱԱԿ-ը հայտարարեց չափավոր իսլամիստական գաղափարներին հետևելու իր ուղեգիծը՝ ընդգծելով, որ կողմ է ժողովրդավարությանը, սոցիալական կյանքում պահպանողականությանը, կանանց՝ քաղաքականության մեջ ներգրավելուն, սատարում է ազատ շուկայական հարաբերություններին և գտնում է, որ զբոսաշրջությունը Եգիպտոսի ազգային եկամտի հիմնական աղբյուրն է[9]: Այսինքն՝ չափավոր իսլամականների առաջ քաշած այս դրույթները Եգիպտոսը պետք է դարձնեին քաղաքականապես ավելի ազատ, զբոսաշրջության համար գրավիչ և ներդրումների համար չափազանց բարենպաստ երկիր: Սակայն Եգիպտոսում ընթացող բուռն զարգացումները շուտով պետք է բյուրեղացնեին իրավիճակը՝ ի ցույց դնելով իսլամականների և այսպես կոչված «չափավորների» միջև տարբերությունների բացակայության հանգամանքը:

Եգիպտոսում «ժողովրդավարական մոդելի» ԱՄՆ-ի տեսլականը

Չափազանց կարևոր է ընդգծել, որ սկսված «արաբական գարունը» օտարերկրյա մի շարք ուժերի, մասնավորապես ԱՄՆ-ի համար, վերջին 40-50 տարիների ընթացքում ստեղծված առավել նպաստավոր իրադրությունն էր տարածաշրջանում իրենց նկրտումներն իրագործելու հարցում[10]: XX դարի վերջին քաղաքական համակարգերի «արդիականացումը» և ժողովրդավարացումը ԱՄՆ-ի համար դարձել էին նեոգաղութացման մահակ, որի միջոցով կարելի էր փորձել միջազգային

[9] Egypt's Islamists announce own political party, http://www.dawn.com/news/625028/egypts-islamists-announce-own-political-party, 30.04.2011.

[10] Зинин Ю.Н., "Арабская весна" в повестке дня экспертного сообщества России, http://ehd.mgimo.ru/IORManagerMgimo/file?id=CA29F12F-D299-0793-09BA-2DFA63B78EB7

հանրությանը համոզել այս կամ այն պետության ղեկավարության հանցավոր լինելը, ինչպես դա եղավ օրինակ Իրաքի պարագայում:

Արաբական աշխարհի «արդիականացման և կերպափոխման խնդիրը» տևական ժամանակ քննարկման առարկա է եղել ԱՄՆ-ում, իսկ հետո նաև արևմտաեվրոպական մի շարք երկրներում[11]: Ասվածի շրջանակներում դեռ 2007 թ. ԱՄՆ-ի ազգային զինվորական ակադեմիայի նախկին փոխգնդապետ Ռալֆ Փեթերսի "Armed Forces Journal" ամսագրում հրապարակված «Արյունոտ սահմանները» վերնագրով հոդվածում քննարկվում էր այսպես կոչված «Մեծ Մերձավոր Արևելքի» ազգային պետությունների հավանական սահմանների հարցը[12]: Համաձայն այդ տեսության՝ ամերիկյան մոտեցման մեջ առկա է տվյալ տարածաշրջանի ազգային հարստությունները հսկելու ձգտումը, առաջին հերթին էներգակիրները, որի իրականացման համար անհրաժեշտ էր ստեղծել ոչ կենսունակ, գաճաճ պետությունների շղթա՝ այսպես ասած «սոմալականացնել» Մերձավոր Արևելքը[13]: Փեթերսը նշում էր, որ հարկավոր է տարածաշրջանում ստեղծել անկայունության, քաոսի և բռնության ալիք, որը կսկսվի Լիբանանից՝ ներառելով Պաղեստինը, Սիրիան, Իրաքը, Ծոցի արաբական երկրները, Իրանը և կհասնի մինչև Աֆղանստան, որտեղ բաշխված են ՆԱՏՕ-ի զորքերը[14]: Վերլուծելով Փեթերսի կողմից առաջարկը

[11] Shireen T. Hunter, Modernization and Democratization in the Muslim World, http://www.gees.org/documentos/Documen-089.pdf

[12] Peters R., Blood borders. How a better Middle East would look, http://www.armedforcesjournal.com/2006/06/1833899, 01.06.2006.

[13] Сологубовский Н., Ливия: "сомализация" плюс "катаризация"? http://trueinform.ru/modules.php?name=News&file=article&sid=3671, 08.03.2012, Արևմտյան մասնագետների մի մասը կարծում է, որ Մերձավոր Արևելքի այսպես կոչված միավորումը պետք է լինի սահուն և ընդգրկում, այլ ոչ տարերայնորեն, քանի որ նշված տարածաշրջանի երկրներում քաղաքական և տնտեսական իրավիճակը տարբեր է: Հարկավոր է հաշվի առնել նաև այդ երկրներում սոցիալական, մշակութային և կրթական աստիճանը:

[14] Փեթերսի տեսության համաձայն՝ պետք է ձևավորվի բարոյալքված ազգային ոգի, որն էլ քայքայում է պետությունը և ազգային-մշակութային ավանդույթները, որոնց փոխարեն ակտիվանում են տարբեր կրոնաքաղաքական ծայրահեղական շարժումներ: Ապագաղափարայնացումը, գաղափարական պլյուրալիզմը, ազգային արժեքների

© National Library of Armenia

դրված տեսությունը՝ կարելի է եզրակացնել, որ այն Մերձավոր Արևելքում անգլո-ամերիկյան-իսրայելական յուրահատուկ ռազմական գործողությունների բնույթի «ճանապարհային քարտեզ է»[15]:

Հետևաբար, ԱՄՆ-ի համար արաբական աշխարհի «սոմալականացումը» կամ ջլատումն ավելի շատ հնարավոր կդառնար այն դեպքում, երբ արաբական որոշակի երկրներում իշխանության գային իսլամականները, քանի որ տվյալ պարագայում կհռչակվեին աստվածապետական կարգեր կամ ավելին՝ խալիֆայություններ, որոնք էլ XXI դարի սկզբին կապահովեին այդ երկրների զարգացման հետընթացը, նրանց դանդաղ գահավիժումը դեպի միջնադար[16]:

առագաստի այրումը, նյութական արժեքների կարիքի կտրուկ բարձրացումը առաջին հերթին «արաբական փողոցի» կողմից, տնտեսության կառավարման լծակների կորուստը, «ժողովրդավարության գաղափարական ահաբեկչությունը և այլասերումը, որը հաճախ ազգային-դավանաբանական երանգ է ստանում» գիտականորեն մշակված և փորձագետների կողմից մատուցվածն է, որն էլ «կառավարելի քաոսի հիմքն է»: Այս ամենը ծառայում է գոյություն ունեցող արդի ազգային պետությունների, ավանդույթային մշակույթների և քաղաքակրթությունների ապամոնտաժման գործին: Համաձայն համաշխարհայնացման կողմնակիցների նրանց փոխարեն պետք է գա հանրություն, որը չի ունենա հիշողություն, ինչն իր հերթին ձեռք է բերվում հատուկ տեխնոլոգիաների միջոցով, որոնք վերաբերում են ՁԼՄ-ներին և կրթական ոլորտին: Այսպիսով, կառավարելի քաոսի տեխնոլոգիաները նոր, ներկայումս զանգվածային ոչնչացման զենքի տեսակներ են՝ համաշխարհային տիրապետություն հաստատելու այն պետության համար, որն այն կիրառում է: Peters R., Blood borders, How a better Middle East would look, նշվ. աշխ.: Տե՛ս նաև՝ Nazemroava M.D., Plans for Redrawing the Middle East: The Project for a «New Middle East», http://www.globalresearch.ca/plans-for-redrawing-the-middle-east-the-project-for-a-new-middle-east/3882, 18.11.2006.

[15] Peters R., Blood borders, How a better Middle East would look, նշվ. աշխ.:

[16] Հարցի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Փաշայան Ա., Ամեն դար ունի իր միջնադարը. Խալիֆայություն 21-րդ դարում, http://168.am/2014/07/13/387020.html, 13.07.2014., օրինակ, «արաբական գարնանը» հաջորդած զարգացումները և մասնավորապես, սիրիական ճգնաժամն աչքի է ընկնում սոսկալի ու անմարդկային դաժանություններով ու բռնություններով, որի հետևում միայն «Իսլամական պետությունը»

Արաբական երկրներում և մասնավորապես Եգիպտոսում ընթացող որակապես նոր քաղաքական զարգացումների նկատմամբ ԱՄՆ-ի դրական դիրքորոշման մասին է վկայում նաև աննախադեպ թափանցիկ և անաչառ խորհրդարանական ընտրություններին հաջորդած այլընտրանքային նախագահական ընտրությունների արդյունքների հավանությունը: Առհասարակ Արևմուտքը և մասնավորապես ԱՄՆ-ը սառը պատերազմի ավարտից հետո պարբերաբար արծարծում էին Մերձավոր Արևելքի որոշ երկրների հասարակական-քաղաքական համակարգերի արդիականացման անհրաժեշտության մասին:

Արդարացի լինելու համար պետք է նշել, որ սկսած XX դ. 80-90-ական թվականներից՝ համաշխարհայնացման գործընթացների համատեքստում արաբական մի շարք երկրների կողմից քաղաքական համակարգի արդիականացման քայլեր էին նախաձեռնվում, մասնավորապես ստեղծվում էին մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեներ, աշխատանքային խմբեր, նույնիսկ նախարարություններ էին ստեղծվում, որոնք, սակայն, սոսկ ձևական բնույթ էին կրում: Մեծ հաշվով արաբական այդ երկրների կողմից կատարված նմանատիպ քայլերը միտված էին իրենց իսկ քաղաքական կարգավիճակն ամրապնդելուն և վերարտադրելուն:

Հանրապետական Եգիպտոսի պատմության մեջ առաջին այլընտրանքային նախագահական ընտրությունները կայացան 2005 թ. սեպտեմբերի 7-ին, որոնց ընթացքում հաղթանակ տարավ դարձյալ 1981 թ. իշխանության գլուխ կանգնած Հոսնի Մուբարաքը[17]: Նշված ընտրությունները հնարավոր եղավ անցկացնել 2005 թ. մայիսի 25-ին Եգիպտոսի սահմանադրության մեջ փոփոխություններ անելուց հետո, ինչը հնարավորություն էր ընձեռում գործող կուսակցություններին նախագահի թեկնածուներ առաջադրելու: Համաձայն սահմանադրական փոփոխությունների՝ սկսած 2011 թ. նախագահական ընտրություններին թեկնածուներ առաջադրելու իրավունք կունենա միայն այն կուսակցությունը, որն առնվազն հինգ տարվա ընթացքում

չէր, այլ մոլեկրոն ու ծայրահեղական անդրազգային սալաֆիական-վահաբական բազմաթիվ ռազմաքաղաքական խմբավորումներ:

[17] Sharp J. M., Egypt: 2005 Presidential and Parliamentary Elections, տե՛ս http://fpc.state.gov/documents/organization/54274.pdf, 21.09.2005.

© National Library of Armenia

եգիպտական խորհրդարանի ստորին և վերին պալատներում կապահովի պատգամավորական մանդատների 5%[18]:

«Միանգամյա ժողովրդավարության» հաղթանակը, կամ մեկ մարդ, մեկ ձայն, մեկ անգամ սկզբունքի կիրարկումը[19]

Մուբարաքի պաշտոնանկությունից հետո երկրի ղեկավարման լծակները վերցրած Զինված ուժերի բարձրագույն խորհուրդը, նպատակ ունենալով հստակեցնելու պետության կառավարման համակարգը, ինչպես նաև, որոշ առումով տեղի տալով «արաբական փողոցի» ճնշումներին, նախաձեռնեց խորհրդարանական և նախագահական ընտրությունների կազմակերպման և կայացման գործընթացը:

Պետք է նշել, որ Զինվորականների բարձրագույն խորհուրդը ըստ էության 1,5 տարվա ընթացքում կազմակերպեց Սահմանադրական հռչակագրի հանրաքվե, սակայն մինչև խորհրդարանական և նախագահական ընտրություններ այդպես էլ չկարողացան հստակեցնել Եգիպտոսի սահմանադրությունը:

Խորհրդարանական ընտրությունները Եգիպտոսում կայացան 2011-2012 թթ. և անցան երեք փուլով[20]: Խորհրդարանական ընտրությունները պետք է հանգուցալուծեին երկրում ձևավորված իրավիճակը, համաձայն որի ուժերի երեք հիմնական բևեռ կար՝ իսլամիստներ, ազատական-ժողովրդավարներ և Զինված ուժերի բարձրագույն խորհրդի որոշ գործիչներ, որոնց հարում էին նաև Մուբարաքի իշխանության վերապրուկներ համարվող մի շարք նախկին պետական այրեր:

2011 թ. նոյեմբերի 21-ին Զինված ուժերի բարձրագույն խորհուրդն ընդունեց քաղաքական մեկուսացման մասին օրենքը, որը միտված էր չթույլատրել նախկին իշխող կուսակցության անդամներին մասնակցել ընտրություններին[21]: Խորհրդարանական ընտրությունների երեք փուլերի արդյունքում առաջին տեղը զբաղեցրեց «չափավոր իսլամիստական» «Ժողովրդավարական այլանս հանուն Եգիպտոսի» միությունը՝ ստորին պալատում հավաքելով ընտրաձայների 37,5%[22]-ը, իսկ վերին պալատում՝ Շուրայում՝ ընտրաձայների 45,04%[23]-ը: «Ժողովրդավարական այլանս հանուն Եգիպտոսի» միությունը գտնվում էր ԱԱԿ-ի անմիջական հսկողության ներքո: Երկրորդ տեղը զբաղեցրեց դարձյալ պրոիսլամիստական՝ «Իսլամիստական բլոկ»-ը՝ «ալ-Նուր»[24] սալաֆիական կուսակցության առաջնորդությամբ հավաքելով ստորին պալատում ընտրաձայների 27,8%-ը, իսկ Շուրայում՝ 28,63%-ը, ամփոփելով իսլամիստական բոլոր ուժերի ամբողջական և հաստատուն հաղթանակը[25]: Լիբերալ-ժողովրդավարական և աշխարհիկ հայացքներ ունեցող մյուս ուժերը զբաղեցրին չափազանց թույլ դիրքեր, մասնավորապես ազգային-լիբերալ «Նոր Վաֆդ» կուսակցությունը, որը զբաղեցրեց երրորդ տեղը՝ ստորին պալատում հավաքելով

---

[18] Mariz Tadros, Egypt's Election All About Image, Almost, Middle East Report Online, տե՛ս http://www.merip.org/mero/mero090605, 06.09.2005.

[19] Այլընտրանքային նախագահական ընտրություններն ապահովեցին Եգիպտոսում իսլամականների անսպասելի հաղթանակը:

[20] Խորհրդարանական ընտրությունների առաջին փուլը Եգիպտոսում կայացավ 2011թ. նոյեմբերի 28-29-ին և դեկտեմբերի 5-6-ին, երկրորդ փուլը՝ դեկտեմբերի 14-15-ին և 21-22-ին, իսկ երրորդ փուլը՝ 2012թ. հունվարի 3-4-ին և 10-11-ին:

[21] Elections in Egypt: Implications of Recent Court Decisions on the Electoral Framework, http://www.ifes.org/sites/default/files/egypt_ scc_decisions_august 9.pdf, 09.08.2012.

[22] Egypt's Islamist Parties Win Elections to Parliament, http://www.bbc.com/news/world-middle-east-16665748, 21.01.2012.

[23] Եգիպտոսի ստորին պալատը բաղկացած է 508 պատգամավորական տեղից, որոնցից 10-ը նշանակվում են պետության նախագահի կողմից, կամ տվյալ դեպքում Զինված ուժերի բարձրագույն խորհրդի կողմից: Վերին պալատը կամ Մաջլիս աշ-Շուրան բաղկացած է 270 պատգամավորական տեղից, որոնցից 90-ին նշանակում է պետության նախագահը կամ տվյալ դեպքում Զինված ուժերի բարձրագույն խորհուրդը:

[24] Ուլտրապահպանողական «ալ-Նուր» կուսակցությունը գործունեության լիազորագիրը ստացավ 2011թ. հունիսի 13-ին, ինչն էլ ըստ էության համարվում է կուսակցության ստեղծման տարեթիվը: Կուսակցությունը միավորեց եգիպտական սալաֆիական շարժումները: Սալաֆիական շարժումը Եգիպտոսում, որն ավելի շատ հայտնի է «ալ-Դաուա» անվամբ, սկսվել է 1970-ականներին Ալեքսանդրիայի համալսարանում և արդեն 1980-ականներին ամրապնդել իր դիրքերը: Նախկինում սալաֆիականները չէին ցանկանում մասնակցել քաղաքական զարգացումներին և չմիացան «Մուսուլման եղբայրներին»: Նրանք չմասնակցեցին նաև հակիշխանական բողոքներին, միայն Մուբարաքի պաշտոնանկությունից հետո հայտարարեցին, որ զբաղվելու են նաև քաղաքականությամբ:

[25] 2012 Egyptian Parliamentary Elections, տե՛ս http://carnegieendowment.org/2015/01/22/2012-egyptian-parliamentary-elections-pub-58800, 22.01.2015.

© National Library of Armenia

ընտրաձայների ընդամենը 9,2%-ը, իսկ վերին պալատում՝ 8,45%[26]-ը:

Արդարացի լինելու համար հարկավոր է նշել, որ դեռ 2005 թ. «Մուսուլման եղբայրներ»-ի ներկայացուցիչներն Ազգային ժողովի ընտրություններում, հանդես գալով որպես անկախ թեկնածուներ, կարողացան հավաքել ընտրողների ձայների 20%-ը՝ ձևավորելով եգիպտական Ազգային ժողովի ամենախոշոր խմբակցություններից մեկը[27]:

Այդպիսով, ըստ էության խորհրդարանական ընտրությունները Եգիպտոսում քաղաքական առումով դարձան որակապես նոր իրադրության ձևավորման նախերգանքը: Սա հանրապետական Եգիպտոսի քաղաքական պատմության դեռ նախադեպը չունեցող մի իրավիճակ էր, երբ իսլամականները թափանցիկ և այսպես ասած ժողովրդավարական ընտրությունների միջոցով կարողացան հրապարակավ մոտենալ պետության կառավարման լծակներին[28]:

Իրականում «եգիպտական հեղափոխության» ակունքներում կանգնած ազատական ուժերը, ինչու ոչ նաև աշխարհիկ հայացքներ ունեցող Զինվորականների բարձրագույն խորհուրդը, չէին ակնկալում իրադրության նման զարգացումը: Խորհրդարանական ընտրությունների անցկացման կարգից և արդյունքներից դրական արձագանք ստացվեց նաև պաշտոնական Վաշինգտոնից:

Այս իմաստով չափազանց հետաքրքրական են Եգիպտոսում կայացած նախագահական ընտրությունները, որոնց արդյունքներն ըստ էության նոր՝ իսլամիստական Եգիպտոս կառուցելու փորձ դարձան: Միևնույն ժամանակ հարկ է փաստել, որ նախագահական այս ընտրությունները, ի տարբերություն զանգվածային ընտրակեղծիքների պայմաններում անցկացված նախորդ բոլոր ընտրությունների, աննախադեպ էին թե՛ թափանցիկությամբ, թե՛ արդարությամբ: Զինված ուժերի բարձրագույն խորհուրդը նախաձեռնել էր աննախադեպ քայլեր ընտրությունները անաչառ և ժողովրդավարական չափորոշիչներին համապատասխան անցկացնելու համար:

[26] Muslim Brotherhood Tops Egyptian Poll Result, Տե՛ս http://www.aljazeera.com /news/middleeast/2012/01/2012121125958580264.html, 22.01.2012.

[27] Конституция с поправкой на сына, Коммерсант 217, М., 21.11.2006.

[28] Նախորդ բոլոր ընտրությունները Եգիպտոսում անցել էին զանգվածային ընտրակեղծիքների պայմաններում:

Ընտրությունների օրը Եգիպտոսում միաժամանակ բացվեցին շուրջ 14.000 ընտրատեղամասեր, որոնցից յուրաքանչյուրում պետք է ներկա գտնվեր երկրի դատական համակարգից մեկ դատավոր, որն էլ պետք է գլխավորապես վերահսկեր ընտրակարգը[29]: Բացի դատավորներից, ընտրատարածքներում ներկա գտնվեցին եգիպտական և օտարերկրյա լրատվամիջոցների ներկայացուցիչներ, իսկ դրսում կարգը պաշտպանեցին ոստիկանները և զինվորականներ[30]: Ընտրությունների վերաբերյալ միջազգային հանրությանը ստույգ տեղեկատվություն փոխանցելու նպատակով հրավիրվեցին նաև շուրջ 50 երկրներից ժամանած դիտորդներ: Դիտորդներ հրավիրվեցին նաև Արաբական պետությունների լիգայից և Աֆրիկյան դաշինքից[31]:

Բավականին հետաքրքիր մոտեցում էր սահմանվել նիքաբա կրող ընտրող կանանց համար: Նրանք պարտավոր էին իրենց դեմքը ցույց տալ հանձնաժողովի անդամներից մեկին, այլապես չէին թույլատրի մասնակցել ընտրություններին: Այդ նպատակով իշխանություններն ընտրատարածքներ ուղղորդեցին դատական համակարգում աշխատող կանանց[32]:

Փոխվել էր նաև քվեաթերթիկի ձևը, մասնավորապես յուրաքանչյուր քվեաթերթիկ ուներ անվտանգության մի քանի աստիճան: Յուրաքանչյուր քվեաթերթիկ ուներ դաջվածքով կնիք, ինչպես նաև հատուկ նշագրում, որը կարելի էր կարդալ միայն հատուկ սարքի միջոցով: Ընտրատուփերը պետք է փակվածի լինեին հատուկ կողպեքներով, իսկ անգրագետ ընտրողների համար քվեաթերթիկներում թեկնածուի անվան առջև դրվում էր հատուկ նշան, որի կողքին փակցված էր վերջինիս նկարը: Այս ամենից բացի, քվեարկողը քվեարկությունից առաջ մատը պետք է ընկղմեր թանաքամանի մեջ, որը մատի վրա

[29] Egypt's historic election, 23 May 2012, տե՛ս https://www.theguardian.com/world/middle-east-live/2012/may/23/egypt-presidential-elections-live, 23.05.2012.

[30] Egyptian Presidential Elections, տե՛ս http://english.dohainstitute.org /release/15e8d489-373a-445c-827d-16d085ffb413, 28.08.2012.

[31] В Египте завершилась подготовка к первым президентским выборам, տե՛ս https://ria.ru/arab_eg/20120521/654450032.html, 21.05.2012.

[32] Египет впервые за десятилетия выбирает президента: страну может возглавить исламист, տե՛ս http://palm.newsru.com/world/23may2012/egypt1.html, 23.05.2012.

© National Library of Armenia

պահպանվում էր 48 ժամ, ինչը պետք է բացառեր կրկնակի քվեարկությունը[33]:

Ընտրարշավը Եգիպտոսում տևեց երեք շաբաթ և պետության համար դարձավ վերջին տասնամյակների ամենավառ իրադարձություններից մեկը: Նախագահի թեկնածուները ծախսեցին 100-ավոր մլն դոլարներ իրենց գովազդի և քարոզարշավի վրա: Երկրի պատմության մեջ առաջին անգամ առավել հայտնի թեկնածուների մասնակցությամբ կայացան հեռուստաբանավեճեր:

Եգիպտոսում նախագահական ընտրություններին մասնակցելու համար հայտ էին ներկայացրել ընդամենը 23 թեկնածու, սակայն Բարձրագույն ընտրական հանձնաժողովը թույլատրեց միայն 13-ին: Համաձայն հասարակական հարցման՝ 13 թեկնածուներից առավել մեծ հեղինակություն էին վայելում 5-ը, որոնցից յուրաքանչյուրն ըստ էության կարող էր 2-րդ փուլ անցնել:

Օրինակ, առաջին տեղը զբաղեցնում էր ԱՊԼ-ի նախկին գլխավոր քարտուղար 75-ամյա Ամր Մուսան, երկրորդ տեղում էր Եգիպտոսի նախկին վարչապետ Ահմեդ Շաֆիքը, երրորդ տեղում՝ անկախ թեկնածու իսլամիստ Աբդ Ալ-Մոնեյմ Աբու-Ալ Ֆութուհը, չորրորդ տեղում՝ «Մուսուլման եղբայրների» ներկայացուցիչ Մուհամմադ Մուրսին և վերջապես հինգերորդ տեղում՝ սոցիալիստ Համդին Սաբահին:

Կարծում ենք՝ չափազանց հետաքրքրական կլինի համառոտ ներկայացնել հավանական 5 թեկնածուների տեղն ու դերը եգիպտական հասարակության մեջ և քարոզարշավում արված հիմնական շեշտադրումները: Այսպես, ԱՊԼ-ի նախկին գլխավոր քարտուղար, ինչպես նաև Եգիպտոսի Արտաքին գործերի նախարար 75-ամյա Ամր Մուսան օգտագործում էր այն կռվանը, որ ինքը Մուբարաքի իշխանության տարիներին միշտ ընդդիմադիր է եղել և ամենակարևորը, որ երբեք չի եղել իշխող կուսակցության անդամ: Ամր Մուսան նաև Իսրայելին պարբերաբար դատապարտող գործչի համբավ ուներ: Նրան հիմնականում սատարում էին կայունության և պետության ժառանգորդության կողմնակիցները, քանի որ վերջինս պնդում է, որ օգտագործելով իր հեղինակությունը միջազգային ասպարեզում՝ կկարողանա վերականգնել Եգիպտոսի խարխլված

[33] Նույն տեղում:

դիրքերը[34]: Ամր Մուսան նաև Թուրքիայի և Իրանի հետ հարաբերությունները զարգացնելու կոչ էր անում: Ամր Մուսան ծավալուն քարոզարշավ իրականացրեց գյուղական բնակավայրերում՝ խոստանալով միջին ունեցվածքի տեր մարդկանց մեղմ բարեփոխումներ իրականացնել երկրում իր նախագահ ընտրվելու պարագայում[35]:

Ահմեդ Շաֆիքը՝ Եգիպտոսի Ռազմաօդային ուժերի նախկին հրամանատարը և նախկին վարչապետը, սուր քննադատության էր ենթարկվում իսլամականների կողմից, քանի որ նա եղել էր իշխանությունից հեռացված նախագահ Մուբարաքի թիմից: Շաֆիքը քարոզարշավի ընթացքում ձեռք բերեց բավականին կողմնակիցներ, քանի որ խոստանում էր ընտրվելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, երկրում հաստատել կայունություն, իսկ փողոցներում՝ անվտանգություն: Շաֆիքի ընդդիմախոսները պնդում էին, որ նա նաև զինվորականների թեկնածուն է[36]:

ԱԱԿ նախագահ 60-ամյա Մուհամմադ Մուրսին[37] սկզբնական շրջանում առաջադրվեց իբրև պահեստային թեկնածու և առաջին պլան դուրս եկավ միայն այն բանից հետո, երբ նախագահի թեկնածուների ցուցակից կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից դուրս հանվեց «Մուսուլման եղբայրների» հիմնական թեկնածուն՝ Խայրաթ Ալ-Շատիրը, որը կազմակերպության գլխավոր քարտուղարի տեղակալն էր: Արդյունքում «Մուսուլման եղբայրները» սատարեցին Մուրսիին[38]:

[34] Amr Mussa's campaign "in good spirits" one week before the big day, տե՛ս http://english.ahram.org.eg/NewsContent/36/122/41850/Presidential-elections-/Presidential-elections-news/Amr-Moussas-campaign-in-good-spirits-one-week-befo.aspx, 17.05.2012.

[35] Նույն տեղում:

[36] Egypt's former PM Ahmed Shafiq banned from presidential race, տե՛ս https://www.alarabiya.net/articles/2012/04/24/210046.html, 24.04.2012.

[37] Մուրսին մասնագիտությամբ ինժեներ է, կրթությունը ստացել է ԱՄՆ-ում: Ունի խորհրդարանական աշխատանքի փորձ, Մուբարաքի իշխանության շրջանում մի քանի անգամ ընտրվել է իբրև անկախ թեկնածու: Դիտորդների կարծիքով դուրս մնացած Շատիրն ավելի շատ վստահություն էր ներշնչում հասարակությանը, քան Մուրսին: Վերջինս խոստանում էր վերացնել իշխանության կոռումպացված ինստիտուտները, դնել երկիրը իսլամական հենքին, լայնորեն տարածել շարիաթի նորմերը պետության կառավարման մեջ: Տե՛ս Named Egypt's Winner, Islamist Makes History, http://www.nytimes.com/2012/06/25/world/middleeast/ mohamed-morsi-of-muslim-brotherhood-declared-as-egypts-president.html, 24.06.2012.

[38] Տե՛ս Named Egypt's Winner, Islamist Makes History, նշվ. կայք:

© National Library of Armenia

Աբդ Ալ-Ֆութուհը չափավոր իսլամական է՝ լիբերալ հայացքներով: 2011 թ. նա հեռացվեց «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունից, երբ հայտարարեց, որ նախագահ դառնալու նկրտումներ ունի[39]: «Մուսուլման եղբայրները» միայն նրա արտաքսումից հետո հայտարարեցին, որ կմասնակցեն նախագահական ընտրություններին: 60-ամյա գործիչը խոստանում էր մասշտաբային ժողովրդավարական բարեփոխումներ: Նրա լիբերալ հայացքների հիմքում դրված են իսլամական բազան և ազնիվ, սկզբունքային մարդու կերպարը: Վերջինիս կողմնակիցների հիմնական զանգվածը արտասահմանում բնակվող եգիպտացիներն էին[40]:

Համդին Սաբահին նախկին թղթակից է, համարվում է եգիպտական ընդդիմության վետերանը: Սաբահին համարվում է Նասերի գաղափարների հետևորդը, անմիջական մասնակցություն է ունեցել 2011 թ. հակահիշխանական ցույցերին: Նրան սատարում են երիտասարդական տարբեր շարժումները և արհմիությունները, քանի որ նրա գաղափարական հայեցակարգում կան նաև սոցիալիստական հայացքներ: Նրա կողմնակիցները պաստառներին ներկայացնում էին Սաբահին իբրև իրենցից մեկը՝ այսպես կոչված ժողովրդի տղան[41]:

Նախագահական ընտրություններն անցան 2 փուլով, քանի որ առաջին փուլում կողմերից և ոչ մեկը չկարողացավ հաղթահարել ընտրածայների 50% շեմը: Ընտրությունների առաջին փուլը կայացավ 2012 թ. մայիսի 23-24-ին, իսկ երկրորդը՝ հունիսի 16-17-ին[42]:

Ընտրությունների ցուցանիշները հստակ հասկանալու համար ստորև ներկայացնում ենք քվեարկության արդյունքները.

[39] Egypt candidate: Moderate Islamist, Abdul Moneim Aboul Fotouh, http://www.bbc.com/news/world-middle-east-17356253, 13.04.2012.

[40] Նույն տեղում:

[41] Egypt's surprise candidate: Hamdeen Sabahi, տե՛ս http://www.aljazeera.com/blogs/middleeast/2012/05/2313.html, 04.06.2012., նաև՝ Hamdeen Sabbahi, http://english.ahram.org.eg/NewsContent/36/124/36856/Presidential-elections-/Meet-the-candidates/Hamdeen-Sabbahi.aspx, 02.04. 2012.

[42] Եգիպտոսի 83 մլն բնակչության միայն շուրջ 50,5մլնն է օգտվում ընտրական իրավունքից:

2012 թ. Եգիպտոսի նախագահական ընտրությունների առաջին փուլ (2012 թ. մայիսի 23-24)

	Թեկնածու	Թեկնածուի քաղաքական պատկանելություն	Ընտրությունների արդյունքները ըստ տոկոսների	Ընտրությունների արդյունքները ըստ ընտրածայների
1.	Մուհամմադ Մուրսի	«Ազատություն և արդարություն» կուսակցության 1-ին քարտուղար (2011-2012 թթ.)	24,78	5.764.952
2.	Ահմեդ Շաֆիք	Եգիպտոսի 58-րդ վարչապետը (01.2011-02.2011 թթ.), անցումային կառավարության 1-ին քարտուղար (02.2011-03.2011 թթ.), Եգիպտոսի քաղավիացիայի նախարար (2002-2011 թթ.)	23,66	5.505.327
3.	Համդին Սաբահի	«Արժանապատվության կուսակցություն», լրագրող, Մուբարաքի իշխանության ակտիվ ընդդիմադիր, «Քիֆայա» շարժման հիմնադիր:	20,72	4.820.273
4.	Աբդ Ալ-Մոնեյմ Աբու Ալ-Ֆութուհ	Անկախ թեկնածու, «Մուսուլման եղբայրների» ոչ ֆորմալ առաջնորդներից մեկն է	17.47	4.065.239

© National Library of Armenia

5.	Ամր Մուսա	Անկախ թեկնածու, Եգիպտոսի արտաքին գործերի նախարար (1991-2001 թթ.), ԱՊԼ գլխավոր քարտուղար (2001-2011 թթ.)	11,13	2.588.850
6.	Մոհամմադ Սալիմ Ալ-Աուա	Անկախ թեկնածու, «Մշակույթի և երկխոսության եգիպտական ասոցիացիայի» ղեկավար	1,01	235.374
7.	Խալեդ Ալի	Անկախ թեկնածու, իրավապաշտպան փաստաբան, «Տնտեսական և սոցիալական իրավունքների» եգիպտական կենտրոնի ղեկավար	0.58	134.056
8.	Աբու Ալ-Իզ Ալ- Հարի-րի	«Սոցիալիստական ժողովրդական ալյանս»-ի ղեկավար, Ալեքսանդրիայի խորհրդարանի անդամ	0,17	40.090
9.	Հիշամ Բաստավիսի	Ազգային-առաջա-դիմական երիտասար-դական կուսակցության նախագահ, Եգիպտոսի Սահմանադրական դատարանի Փոխնախագահ	0,13	29,189
10.	Մահմուդ Հուսամ	«Սկիզբ» կուսակցու-թյուն, ոստիկանության նախկին սպա	0,10	23.992
11.	Մուհամմադ Ֆաուզի Իսա	«Սերնդի ժողովրդա-կան» կուսակցություն, նախկին ոստիկան	0,10	23.889
12.	Հուսամ Հեյրուլլա	«Խաղաղության ժողովրդավարական», կուսակցություն, նախ-	0,09	22.036

		կին հետախույզ, Եգիպ-տոսի տեղեկատվության և վիճակագրության վարչության ղեկավար		
13.	Աբդալլա Ալ-Աշալ	«Իսկություն» կուսակցու-թյուն, դիվանագետ, մի-ջազգային իրավունքի մասնագետ:	0,05	12.249

Նախագահական ընտրությունների երկրորդ փուլն ամ-բողջականացնում է ընտրողների մեծ մասի համակրանքն իսլամիստների նկատմամբ:

2012 թ. Եգիպտոսի նախագահական ընտրությունների երկրորդ փուլ (2012 թ. հունիսի 16-17)				
	Թեկ-նածու	**Թեկնածուի քաղաքական պատկանելություն**	**Ընտրություն-ների արդյունք-ները ըստ տոկոսների**	**Ընտրություն-ների արդյունքները ըստ ընտրա-ձայների**
1.	Մուհամ-մադ Մուրսի	«Ազատություն և արդարություն» կուսակցության 1-ին քարտուղար (2011-2012 թթ.)	51,73	13.230.131
2.	Ահմեդ Շաֆիք	Եգիպտոսի 58-րդ վարչապետը (01.2011-02.2011 թթ.), անցումային կառավարության 1-ին քարտուղար (02.2011-03.2011 թթ.), Եգիպտոսի քաղավիացիայի նախարար (2002-2011 թթ.)	48,27	12.347.380

Ներկայացված աղյուսակում տեսանելի է նաև ընտրող-ների ներկայության ցածր տոկոսը՝ առաջին փուլում 46,42% և երկրորդում՝ 51.85%: Այս հանգամանքը կարող է բացատրվել ոչ միայն «ժողովրդավարական ընտրություն» գաղափարի ավան-դույթի բացակայության, այլև բնակչության ստվար զանգվածի

© National Library of Armenia

5.	Ամր Մուսա	Անկախ թեկնածու, Եգիպտոսի արտաքին գործերի նախարար (1991-2001 թթ.), ԱՊԼ գլխավոր քարտուղար (2001-2011 թթ.)	11,13	2.588.850
6.	Մոհամմադ Սալիմ Ալ-Աուա	Անկախ թեկնածու, «Մշակույթի և երկխոսության եգիպտական ասոցիացիայի» ղեկավար	1,01	235.374
7.	Խալեդ Ալի	Անկախ թեկնածու, իրավապաշտպան փաստաբան, «Տնտեսական և սոցիալական իրավունքների» եգիպտական կենտրոնի ղեկավար	0.58	134.056
8.	Աբու Ալ-Իզ Ալ- Հարի-րի	«Սոցիալիստական ժողովրդական ալյանս»-ի ղեկավար, Ալեքսանդրիայի խորհրդարանի անդամ	0,17	40.090
9.	Հիշամ Բաստավիսի	Ազգային-առաջա-դիմական երիտասար-դական կուսակցության նախագահ, Եգիպտոսի Սահմանադրական դատարանի Փոխնախագահ	0,13	29,189
10.	Մահմուդ Հուսամ	«Սկիզբ» կուսակցու-թյուն, ոստիկանության նախկին սպա	0,10	23.992
11.	Մուհամմադ Ֆաուզի Իսա	«Սերնդի ժողովրդա-կան» կուսակցություն, նախկին ոստիկան	0,10	23.889
12.	Հուսամ Հեյրուլլա	«Խաղաղության ժողովրդավարական», կուսակցություն, նախ-	0,09	22.036

		կին հետախույզ, Եգիպ-տոսի տեղեկատվության և վիճակագրության վարչության ղեկավար		
13.	Աբդալլա Ալ-Աշալ	«Իսկություն» կուսակցու-թյուն, դիվանագետ, մի-ջազգային իրավունքի մասնագետ:	0,05	12.249

Նախագահական ընտրությունների երկրորդ փուլն ամ-բողջականացնում է ընտրողների մեծ մասի համակրանքն իսլամիստների նկատմամբ:

2012 թ. Եգիպտոսի նախագահական ընտրությունների երկրորդ փուլ (2012 թ. հունիսի 16-17)

	Թեկ-նածու	Թեկնածուի քաղաքական պատկանելություն	Ընտրություն-ների արդյունք-ները ըստ տոկոսների	Ընտրություն-ների արդյունքները ըստ ընտրա-ձայների
1.	Մուհամ-մադ Մուրսի	«Ազատություն և արդարություն» կուսակցության 1-ին քարտուղար (2011-2012 թթ.)	51,73	13.230.131
2.	Ահմեդ Շաֆիք	Եգիպտոսի 58-րդ վարչապետը (01.2011-02.2011 թթ.), անցումային կառավարության 1-ին քարտուղար (02.2011-03.2011 թթ.), Եգիպտոսի քաղավիացիայի նախարար (2002-2011 թթ.)	48,27	12.347.380

Ներկայացված աղյուսակում տեսանելի է նաև ընտրող-ների ներկայության ցածր տոկոսը՝ առաջին փուլում 46,42% և երկրորդում՝ 51.85%: Այս հանգամանքը կարող է բացատրվել ոչ միայն «ժողովրդավարական ընտրություն» գաղափարի ավան-դույթի բացակայության, այլև բնակչության ստվար զանգվածի

© National Library of Armenia

ապաքաղաքականացված լինելու հանգամանքով: Հարկ է նշել նաև, որ տևական ժամանակ Եգիպտոսի բնակչությունը զրկված է եղել պետության քաղաքական կյանքին իրական միջամտելու կարողությունից, ինչը թե՛ դեգրադացրել է և թե՛ ստեղծել անկումային իրավիճակ ներկայի և ապագայի նկատմամբ: Քաղաքական կյանքի նկատմամբ ցածր հետաքրքրությունը հաստատվում է նաև տարբեր լրատվամիջոցների կողմից կատարված հետազոտության արդյունքներով, որոնց համաձայն՝ հարցումներին մասնակցած Եգիպտոսի բնակչության մոտ 78,5%-ը համոզված է, որ երկրում անցկացվող ընտրությունները ոչինչ չեն փոխի[43]:

Այս ամենի արդյունքում հաղթեց Մուհամմադ Մուրսին: Հետաքրքրական է այն, որ Մուրսիի թեկնածության մասնակցությունն ընտրություններում հաստատվեց միայն Բարձրագույն ընտրական հանձնաժողովի կողմից «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության ներկայացուցիչ Խայրաթ Ալ-Շատերի թեկնածությունը մերժելուց հետո: Այսինքն՝ ստացվում է, որ ընտրություններին իրական նշանակություն ունեցավ ոչ թե թեկնածուի անձը, այլ տվյալ դեպքում կուսակցության դիրքորոշումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Խորհրդարանական և նախագահական ընտրությունները Եգիպտոսում ի ցույց դրեցին այն, որ երկրում առկա են իրարամերժ երկու հիմնական բևեռներ՝ ազգայնական գաղափարներով առաջնորդվող զինվորականները և աստվածապետություն կառուցելու ջատագովները՝ իսլամիստները: Լիբերալ-ժողովրդավարական հայացքներ ունեցող ուժերը թեպետև կանգնած էին եգիպտական հեղափոխության ակունքներում, այդուամենայնիվ հետհեղափոխական երկու հիմնական իրադարձություններում՝ խորհրդարանական և նախագահական ընտրություններում, պարտվեցին:
2. Եգիպտական հասարակությունը մրցակցային ժողովրդավարության պայմաններում գիտակցական ընտրություն կատարեց, որը բյուրեղացրեց վերջինիս կողմնորոշումը դեպի ավանդական դավանական արժեքների պահպանումը՝ աշխարհիկ պետություն ունենալու փոխարեն: Միևնույն ժամանակ անտարակույս է, որ իշխանության իսլամականացումը նշանակում էր հրաժարում հեղափոխության ձեռքբերումներից, որին ի դեպ մասնակցեց եգիպտական հասարակության առավել կրթված և ազատական հատվածը:
3. Իսլամիստական հավաքական ուժերը՝ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության գլխավորությամբ, տասնամյակներ շարունակվող պայքարի ընթացքում ստացան ընդամենը մեկ օրինական հնարավորություն մասնակցելու երկրի իշխանության ձևավորման գործընթացին և կարողացան հաղթանակ ամրագրել: Իսլամականներին հաջողվեց օգտագործել գյուղական բնակավայրերի ընտրաձայները, որոնք տոկոսային տեսակարար կշռի իմաստով ավելի մեծաքանակ էին:
4. Նախագահական ընտրությունները փաստեցին, որ եգիպտական հասարակության՝ ընտրելու իրավունքից օգտվող ստվար զանգվածը գերադասում է իշխանության լծակների մոտ տեսնել իսլամականներին, եթե անգամ չի փոխվում պետության բռնապետական հենքը:
5. Եգիպտացիները քվեարկեցին թվացյալ արդիականացման օգտին, այսինքն՝ հանուն քաղաքական նոր վերնախավի, որը կապված չէր նախկին վարչակարգի հետ: Սա էր պատճառը, որ նախապատվությունը տրվեց չնչին տարբերությամբ ոչ թե ավելի հայտնի Ահմադ Շաֆիքին, այլ Մուհամմադ Մուրսիին:
6. Չնայած այն հանգամանքին, որ 2012 թ. նախագահական ընտրությունները Եգիպտոսում աննախադեպ էին իրենց թափանցիկության և արդարության իմաստով, այնուամենայնիվ իսլամականների իշխանության գալը ամենևին էլ չէր վստահեցնում երկրում ժողովրդավարական սկզբունքների հաստատման և քաղաքացիական հասարակության կառուցման մասին:
7. Նախագահական ընտրությունների արդյունքները գոհացրին ԱՄՆ-ին. Վաշինգտոնը քաջ գիտակցում էր, որ իսլամիստական խաղադրույքը նաև Եգիպտոսում կբերի սպասված նպատակի: Սա էր պատճառը, որ ԱՄՆ-ը պնդեց նախագահական ընտրությունների արդյունքների շուտափույթ հրապարակում:

[43] Грабельников А.А., Тамух Мохаммед Анасс, СМИ и президентские выборы в Египте после революции, file:///C:/Users/GG/Downloads/smi-i-prezidentskie-vybory-v-egipte-posle-revolyutsii%20(2).pdf.

© National Library of Armenia

8. Իշխանության մոտ գտնվող եգիպտական «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունն անցել է քաղաքական-գաղափարախոսական «արդիականացման» երկար ճանապարհ և որդեգրել է «սալաֆիական շարժումներից և գաղափարախոսություններից» տարանջատվելու դիրքորոշումը՝ ներկայանալով որպես «չափավոր իսլամիստական» ուղղություն, որն առաջ քաշեց Եգիպտոսում պետական կառուցվածքի «թուրքական մոդելի» ներդրման հնարավորությունը:
9. Միևնույն ժամանակ Եգիպտոսում իշխանության մոտ գտնվող «չափավոր իսլամականները» ձգտում են ստեղծել ազգային միասնության պետություն, թեպետև անհասկանալի է, թե ինչպես են իշխանությունները դա իրագործելու, մանավանդ, երբ երկրում առկա է 8-10 մլն ղպտիական համայնքը, որի նկատմամբ միշտ վերապահումով է մոտենում «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը:
10. Երկրում նկատվում է գաղափարական նոր միտում՝ կապված «ավտորիտարիզմի ուժը բանակում չէ, այլ քաղաքացիական հասարակության առկայության»:
11. Այդ իմաստով տեղին է հիշեցնել ԱՄՆ-ի գործադրած ջանքերի մասին՝ տարածաշրջանում «չափավոր իսլամիզմի» բազային հենքի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին, ի հակակշիռ իսլամի սալաֆիական ուղղության զարգացման:

ՄՈՒՇԵՂ ՂԱՀՐԻՅԱՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՆԱՎԹԱՅԻՆ ՎԵՃԵՐԸ ԲԱՂԴԱԴԻ ԵՎ ԷՐԲԻԼԻ ՄԻՋԵՎ (2003-2015 ԹԹ.)

2003 թ. մարտին ԱՄՆ-ի գլխավորած կոալիցիան ներխուժեց Իրաք՝ գրավելով երկրի տարածքը և տապալելով նախագահ Սադդամ Հուսեյնի իշխանությունը: Ռազմական գործողություններին կոալիցիայի կողմից ակտիվորեն մասնակցեց նաև քրդական փեշմերգան: Քրդերը, օգտվելով հնարավորությունից, դեպի հարավ ընդարձակեցին իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքները: Սադդամ Հուսեյնի իշխանության տապալումից հետո Իրաքում կառավարման նոր համակարգ, պետական նոր մարմիններ ստեղծվեցին, ընդունվեց նոր սահմանադրություն: Քրդերն իրենց ինքնավարությունն ամրապնդելուց բացի մեծ ներկայացվածություն ունեցան նաև կենտրոնական իշխանությունում: 2005 թ. ընդունվեց Իրաքի սահմանադրությունը, որով քրդական ինքնավարությունը պաշտոնական կարգավիճակ ստացավ լայն լիազորություններով, քրդերի համար երաշխավորվեց Իրաքի նավթային եկամուտների մի մասը: Այնուամենայնիվ, նոր սահմանադրությունը չկարգավորեց կենտրոնական իշխանության և Իրաքյան Քրդստանի միջև տարածքային, ռեսուրսային, կառավարման լծակների հետ կապված վեճերը: Հոդվածի նպատակն է ներկայացնել և վերլուծել քրդերի և իրաքյան իշխանությունների միջև գոյություն ունեցող խնդիրները 2003 թվականից հետո ստեղծված իրողությունների լույսի ներքո:

Իրաքում տարածքային վեճերը կապված են օրենքով քրդերի տնօրինության տակ գտնվող տարածքների և նրանց հավակնությունների հետ, որոնք ամենևին չեն համընկնում: 2003 թ. պատերազմից հետո տարածքային վեճերը, կառավարման լծակների և նավթի արդյունահանման ու դրանից ստացված եկամուտների վերաբաշխման խնդիրները դարձան կենտրոնական իշխանության և Քրդստանի շրջանային կառավարության հակասությունների ու առճակատման առանցքը:

Նախքան 2003 թ. պատերազմը քրդական ինքնավարության և Իրաքի մյուս տարածքների սահմանը «Կանաչ գիծն»

© National Library of Armenia

8. Իշխանության մոտ գտնվող եգիպտական «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունն անցել է քաղաքական-գաղափարախոսական «արդիականացման» երկար ճանապարհ և որդեգրել է «սալաֆիական շարժումներից և գաղափարախոսություններից» տարանջատվելու դիրքորոշումը՝ ներկայանալով որպես «չափավոր իսլամիստական» ուղղություն, որն առաջ քաշեց Եգիպտոսում պետական կառուցվածքի «թուրքական մոդելի» ներդրման հնարավորությունը:
9. Միևնույն ժամանակ Եգիպտոսում իշխանության մոտ գտնվող «չափավոր իսլամականները» ձգտում են ստեղծել ազգային միասնության պետություն, թեպետև անհասկանալի է, թե ինչպես են իշխանությունները դա իրագործելու, մանավանդ, երբ երկրում առկա է 8-10 մլն ղպտիական համայնքը, որի նկատմամբ միշտ վերապահումով է մոտենում «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը:
10. Երկրում նկատվում է գաղափարական նոր միտում՝ կապված «ավտորիտարիզմի ուժը բանակում չէ, այլ քաղաքացիական հասարակության առկայության»:
11. Այդ իմաստով տեղին է հիշեցնել ԱՄՆ-ի գործադրած ջանքերի մասին՝ տարածաշրջանում «չափավոր իսլամիզմի» բազային հենքի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին, ի հակակշիռ իսլամի սալաֆիական ուղղության զարգացման:

ՄՈՒՇԵՂ ՂԱՀՐԻՅԱՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՆԱՎԹԱՅԻՆ ՎԵՃԵՐԸ ԲԱՂԴԱԴԻ ԵՎ ԷՐԲԻԼԻ ՄԻՋԵՎ (2003-2015 ԹԹ.)

2003 թ. մարտին ԱՄՆ-ի գլխավորած կոալիցիան ներխուժեց Իրաք՝ գրավելով երկրի տարածքը և տապալելով նախագահ Սադդամ Հուսեյնի իշխանությունը: Ռազմական գործողություններին կոալիցիայի կողմից ակտիվորեն մասնակցեց նաև քրդական փեշմերգան: Քրդերը, օգտվելով հնարավորությունից, դեպի հարավ ընդարձակեցին իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքները: Սադդամ Հուսեյնի իշխանության տապալումից հետո Իրաքում կառավարման նոր համակարգ, պետական նոր մարմիններ ստեղծվեցին, ընդունվեց նոր սահմանադրություն: Քրդերն իրենց ինքնավարությունն ամրապնդելուց բացի մեծ ներկայացվածություն ունեցան նաև կենտրոնական իշխանությունում: 2005 թ. ընդունվեց Իրաքի սահմանադրությունը, որով քրդական ինքնավարությունը պաշտոնական կարգավիճակ ստացավ լայն լիազորություններով, քրդերի համար երաշխավորվեց Իրաքի նավթային եկամուտների մի մասը: Այնուամենայնիվ, նոր սահմանադրությունը չկարգավորեց կենտրոնական իշխանության և Իրաքյան Քրդստանի միջև տարածքային, ռեսուրսային, կառավարման լծակների հետ կապված վեճերը: Հոդվածի նպատակն է ներկայացնել և վերլուծել քրդերի և իրաքյան իշխանությունների միջև գոյություն ունեցող խնդիրները 2003 թվականից հետո ստեղծված իրողությունների լույսի ներքո:

Իրաքում տարածքային վեճերը կապված են օրենքով քրդերի տնօրինության տակ գտնվող տարածքների և նրանց հավակնությունների հետ, որոնք ամենևին չեն համընկնում: 2003 թ. պատերազմից հետո տարածքային վեճերը, կառավարման լծակների և նավթի արդյունահանման ու դրանից ստացված եկամուտների վերաբաշխման խնդիրները դարձան կենտրոնական իշխանության և Քրդստանի շրջանային կառավարության հակասությունների ու առճակատման առանցքը:

Նախքան 2003 թ. պատերազմը քրդական ինքնավարության և Իրաքի մյուս տարածքների սահմանը «Կանաչ գիծն»

© National Library of Armenia

էր, որը հաստատվել էր 1991 թ. քրդական ապստամբության ճնշումից հետո: Քրդերի վերահսկողության տակ գտնվող տարածքներն էին Էրբիլի, Սուլեյմանիեի և Դոհուկի մուհաֆազաները և որոշ տարածքներ Քիրքուքի (Թամիմ), Դիյալայի, Սալահ ադ-Դինի և Նինևայի մուհաֆազաներից: 2003 թ. պատերազմի ժամանակ քրդական զինված ուժերը դեպի հարավ ընդլայնեցին իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքները՝ ներառյալ Քիրքուք, Մախմուր, Խանեկին քաղաքները: Քիրքուք քաղաքը և համանուն նահանգը քրդերի համար կրկնակի կարևորություն ունեն: Առաջին հերթին նրանք քաղաքը պատմականորեն համարում են իրենցը, որը ժամանակի ընթացքում իշխանությունների վարած քաղաքականության հետևանքով զգալիորեն զրկվել է իր բնիկ բնակչությունից: Էրբիլը դեռ ամերիկյան ներխուժումից առաջ առաջարկում էր, որ քաղաքն ընդգրկվի քրդական ինքնավարության տարածք՝ դա համարելով պատմական արդարության վերականգնում: Ջալալ Թալաբանին, լինելով Իրաքի նախագահ, հայտարարեց, որ Քիրքուքը քրդերի Երուսաղեմն է[1]՝ դրանով կարծես շեշտելով, որ այն սրբազան նշանակություն ունի իրենց համար, հետևաբար զիջման չեն գնալու այս հարցում: Քիրքուքի կարևոր նշանակության վկայությունն է նաև այն, որ 1992 թ. ներկայացված Քրդստանի շրջանի սահմանադրության նախագծում Քիրքուքը նշված է որպես մայրաքաղաք[2]: 2009 թ. Քրդստանի շրջանի սահմանադրության նախագծում ուղղակի հիշատակություն չկա Քիրքուքի՝ մայրաքաղաք լինելու մասին, սակայն 10-րդ հոդվածով խորհրդարանին իրավունք է տրվում Էրբիլի փոխարեն այլ մայրաքաղաք ընտրելու[3]:

Քիրքուքի երկրորդ նշանակությունը ռեսուրսային է՝ հաշվի առնելով, որ վաճառքից Քիրքուքի նավթի պաշարների տնօրինումը ռազմավարական կարևորություն ունի: Քիրքուքում

[1] نواب عراقيون يعتبرون تصريحات طالباني حول كركوك «مستفزة» ويدعون لاستجوابه برلمانيا, الشرق الأوسط, 14 مارس, 2011

Նուաբ ալ-իրակիյուն յաաթաբարուն թասրիհաթ Տալաբանի հաուլա Քիրքուք «մուսթաֆիզա» վա յադաուն լիհսթիջաուաբա բառլամանիյա, Աշ-Շարկ –Ալ-Աուսատ, http://archive. aawsat.com/details.asp?section=4&article=612370&issueno=11794#.VsLIHvmLTIU, (Մատչելի էր 01.04.2016).

[2] O'Leary B., How to Get Out of Iraq with Integrity, Philadelphia, 2009, p. 153.

[3] Տե՛ս Իրաքյան Քուրդիստանի՝ 2009 թ. սահմանադրության նախագծի 10-րդ հոդված, http://www.presidency.krd/docs/KRConstitution-ar.pdf (մատչելի էր 12.05.2016).

նավթը հայտնաբերվել է դեռ 1927 թ., իսկ Իրաքի նավթային ընկերությունն արդյունահանումն սկսել է 1934 թ.: "Oil & Gas Journal"-ի տվյալների համաձայն՝ Իրաքը 140 միլիարդ բարել նավթային պաշարներ ունի, որը հավասար է Մերձավոր Արևելքի ընդհանուր պաշարների 18%-ին և համաշխարհային պաշարների 9%-ին[4]: Իրաքյան նավթի 17%-ը Քիրքուքի, Մոսուլի, Խանեկինի շրջակայքում է գտնվում, որոնք գիտական գրականությունում ընդունված է վիճելի տարածքներ անվանել[5]: Միջազգային էներգետիկ գործակալության տվյալների համաձայն՝ Իրաքյան Քրդստանի նավթային պաշարները կազմում են 4 միլիարդ բարել[6]: Մինչդեռ Քիրքուքում պաշարները հասնում են 10 միլիարդ բարելի: Նախքան պատերազմը Քիրքուքից օրական 680,000 բարել նավթ էր արդյունահանվում, սակայն պատերազմի հետևանքով այն իջավ մինչև 200,000 բարելի[7]: Քիրքուք քաղաքը նավթային կենտրոն լինելուց բացի՝ ավելի քան 800.000 բնակչությամբ Իրաքի՝ մեծությամբ 4-րդ քաղաքն է, որտեղ բնակվում են արաբներ, քրդեր, թուրքմաններ, քրիստոնյա տարբեր համայնքներ, որոնք մրցակցում են տարածքի և կառավարման լծակների համար[8]: Նախկինում գավառական քաղաք Քիրքուքը նավթի պաշարների հայտնաբերումից հետո Իրաքի տնտեսության համար կարևորագույն նշանակություն ձեռք բերեց: Աճող նավթարդյունաբերության շնորհիվ քաղաքի բնակչությունը համալրվեց այլ վայրերից աշխատելու եկած մարդկանցով: Մյուս կողմից պետությունը պետք է ապահովագրեր նավթաբեր շրջանները տարածաշրջանային ու ներքին սպառնալիքներից: Քիրքուքում Իրաքի իշխանությունների իրականացրած արաբականացման քաղա-

[4] Oil & Gas Journal, Worldwide Look at Reserves and Production, PenWell Corporation, Tulsa, 6 Jan. 2014, p. 62.

[5] International Energy Agency, World Energy Outlook Special Report: Iraq Energy Outlook, (October 2012), p. 52, http://www.worldenergyoutlook.org/media/weowebsite/2012/iraqenergyoutlook/fullreport.pdf (մատչելի էր 01.04.2016).

[6] Նույն տեղում, էջ 53:

[7] US Government, Energy Information Administration, Country Analysis Briefs – Iraq, August 2007. http://www.eia.doe.gov/ (մատչելի էր 12.05.2016).

[8] Iraq and the Kurds: The Brewing Battle over Kirkuk, International Crisis Group, Middle East Report No. 56, Brussels, 18 July 2006, pp. 2-3.

© National Library of Armenia

քականության նպատակը հենց ապահովագրումն էր սպառնալիքներից[9]:

Տեղահանումների առաջին զանգվածային ալիքն սկսվեց 1974 թ. Բաղդադի կողմից Քրդստանի ինքնավար շրջանի միակողմանի հռչակումից հետո, որը ներառում էր Էրբիլի, Սուլեյմանիեի և Դոհուկի նահանգները: 1975 թ. քրդական ապստամբության պարտությունից հետո բարձրաստիճան հազարավոր անդամներ նույնպես բռնությամբ արտաքսվեցին իրենց բնակավայրերից: 1970-ականների վերջերին Իրաքի կառավարությունն Իրանի և Թուրքիայի սահմանակից տարածքներից հասցրել էր տեղահանել առնվազն քառորդ միլիոն քրդի: Քրդերի բնակավայրերը մասամբ ոչնչացվում էին՝ սահմանային հատվածներում «սանիտարական գոտի» ստեղծելու համար, իսկ տեղահանվածները բնակեցվում էին մայրուղիների մոտակա տարածքներում, որտեղ իրաքյան բանակն ուժեղ վերահսկողություն ուներ[10]:

Քրդերին տեղահանելուց հետո Իրաքի իշխանություններն ազատված տարածքներն արաբ ընտանիքներով բնակեցնելու ծրագիր սկսեցին: Մոսուլից հարավ-արևմուտք ընկած ալ-Ջազիրա անապատում բնակվում էին վարչակարգին հավատարիմ բազմաթիվ ցեղեր: Նրանց առաջարկեցին ազատ, ոռոգվող հողատարածություններ, իսկ շեյխերը խրախուսում էին տեղափոխությունը[11]:

1991 թ. ապստամբությունների պարտությունից հետո արաբականացման քաղաքականության գլխավոր թիրախը դարձան Քիրքուքը և հարևան շրջանները: Հազարավոր քրդերի, թուրքմանների ու ասորիների պարտադրում էին պաշտոնական փաստաթղթերում որպես ազգություն նշել «արաբ»: Պահանջը մերժող քրդերին ստիպում էին լքել իրենց տները և տեղափոխվել քրդական շրջաններ: 1991-2000 թթ. Քիրքուք նահանգի տարածքից ավելի քան 120.000 մարդ է տեղահանվել[12]:

[9] Stansfield G., Anderson L.m Crisis in Kirkuk, The Ethnopolitics of Conflict and Compromise, Philadelphia, , 2009, p 51.

[10] Human Rights Watch, Iraq's Crime of Genocide: The Anfal Campaign Against the Kurds, New Haven, 1995, p. 6.

[11] Bouckaert P., Human Rights Watch, Claims in Conflict, Reversing Ethnic Cleansing in Northern Iraq, Vol. 16, No. 4(E), New York, August 2004, p 2:

[12] Human Rights Watch, Iraq: Forcible Expulsion of Ethnic Minorities, Vol. 15, No. 3(E), New York, 2003, p. 2.

Սադդամ Հուսեյնի իշխանության տապալումից հետո քրդական ուժերը մտան Քիրքուք և սկիզբ դրեցին հակառակ գործընթացին՝ քաղաքի և նահանգի քրդականացմանն ու արաբների հեռանալուն, որն իրականացվում էր արաբ ընտանիքներին հեռանալու դիմաց փոխհատուցում առաջարկելով, քրդերի զանգվածային վերաբնակեցմամբ: Արաբները և թուրքմանները քրդերի վերադարձը դիտում էին որպես ապագա հանրաքվեի արդյունքների վրա ազդելու փորձ քրդական ուժերի կողմից, մինչդեռ քրդերն արաբների դժգոհությունը որակում էին որպես արաբականացման քաղաքականության շարունակություն[13]:

2003 թ. բաասական վարչակարգի տապալումից հետո մոտ 200,000 ներքին տեղահանվածներ վերադարձան Քիրքուք, որոնց մեծ մասը քրդեր էին: ՔՇԿ-ի ղեկավարությունը խրախուսում էր քրդերի վերադարձը, սակայն շատերը, որոնք արդեն հասցրել էին իրենց կյանքը կարգավորել ինքնավարության տարածքում, չէին ցանկանում վերադառնալ Քիրքուք, որտեղ նրանց անորոշությունն էր սպասում: Շատ քրդեր համարում էին, որ իրենց անվտանգությունը կարող է ապահովվել, եթե Քիրքուքը քրդական ինքնավարության մաս լինի: Թուրքմանները, ընդհակառակը, կարծում էին, որ իրենց շահերն ավելի լավ պաշտպանված կլինեին ոչ թե ինքնավար շրջանի տարածքում, այլ Բաղդադի ենթակայության տակ: Արաբներն էլ մտավախություններ ունեին, որ Քիրքուքի նավթից ստացված եկամուտները կարող էին օգտագործվել շրջանն Իրաքից անջատելու համար[14]:

Քիրքուքի վերաբերյալ գիտական գրականության մեջ խնդիրը հաճախ գերազանցապես դիտվում է նավթային եկամուտների տեսանկյունից: Քիրքուք բառին մշտապես ուղեկցում է «նավթով հարուստ» բառակապակցությունը՝ երկրորդ պլան մղելով էթնիկ բաղադրիչը: Մինչդեռ, մեր կարծիքով, խնդրի բարդությունը և լուծման բացակայությունն առաջին հերթին էթնիկ բաղադրիչի հետ են կապված: Տասնամյակներ շարունակ Քիրքուքում քրդերը և մյուս ժողովուրդները սեփականազրկվել են, տեղահանվել, ենթարկվել զտումների, նվաս-

[13] Wolff S., Governing (in) Kirkuk: resolving the status of a disputed territory in post-American Iraq, International Affairs, Royal Institute of International Affairs 1944-, 86.6, Hoboken, 2010, p. 1370.

[14] Նույն տեղում:

© National Library of Armenia

տացրել են նրանց արժանապատվությունը: Իրաքի իշխանությունների արաբականացման քաղաքականության մեջ ռեսուրսային խնդիրների լուծումը միակ գլխավորը չէր: Քիրքուքն իր աշխարհագրական դիրքով առանցքային նշանակություն ունի երկրի հյուսիսում կենտրոնական իշխանության ներկայության համար: Քիրքուքում անհրաժեշտ էր վստահելի բնակչության առկայություն՝ ապագայում Իրանից և Թուրքիայից թիկունքն ամրապնդելու համար:

2004 թ. ընդունված Իրաքի Անցումային վարչական օրենքի 58-րդ հոդվածը վերաբերում է Քիրքուքի և վեճի առարկա մյուս տարածքների խնդրին: Հոդվածում նշվում է, որ Իրաքի անցումային կառավարությունը պետք է միջոցներ ձեռնարկի որոշակի շրջաններում, այդ թվում՝ Քիրքուքում նախորդ վարչակարգերի՝ ժողովրդագրական վիճակը փոփոխելու քաղաքականության հետևանքով ստեղծված անարդարությունը շտկելու համար: 58-րդ հոդվածի հիման վրա սահմանադրություն ընդգրկվեց 140-րդ հոդվածը, որի 1-ին կետում նշված է, որ գործադիր իշխանությունը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկի Անցումային վարչական օրենքի 58-րդ հոդվածի բոլոր ենթակետերի պահանջներն իրագործելու համար: Հոդվածի երկրորդ կետի համաձայն՝ Անցումային վարչական օրենքի 58-րդ հոդվածով Իրաքի անցումային կառավարության գործադիր ճյուղի վրա դրված պատասխանատվությունը տարածվելու է սահմանադրությանը համապատասխան ընտրված գործադիր իշխանության վրա, որը պետք է ամբողջությամբ իրագործվի (կարգավորում, մարդահամար և Քիրքուքում ու մյուս վիճարկելի տարածքներում հանրաքվեի անցկացում՝ քաղաքացիների կամքն արտահայտելու համար) մինչև 2007 թվականի դեկտեմբերի 31-ը[15]:

Այս հոդվածը շատ անորոշ է և չի սահմանում, թե որ տարածքներն են վիճելի, ովքեր պետք է մասնակցեն հանրաքվեին: Եթե այն անցկացվեր բոլոր նահանգներում, որտեղ վիճելի տարածքներ կան, ապա քրդերը մեծամասնություն էին միայն Քիրքուքում և հանրաքվեի արդյունքում ստիպված էին լինելու հրաժարվել հավակնությունների մեծ մասից: Քրդական կուսակցություններն առաջարկում էին հանրաքվեն անցկացնել Քիրքուքի նահանգում՝ ամբողջությամբ և մյուս նահանգներում՝

[15] Իրաքի սահմանադրության 140-րդ հոդվածի «ա» և «բ» կետեր:

շրջան առ շրջան[16]: Բաղդադը, բնականաբար, այս տարբերակը չընդունեց: Իրաքում քաղաքական անկայունության պայմաններում հանրաքվեն իշխանությունների համար թիվ մեկ խնդիրը չէր: Հաշվի առնելով այս հանգամանքը և խնդրի խճճվածությունը՝ որևէ քայլ չձեռնարկվեց 140-րդ հոդվածի 2-րդ կետի իրականացման համար: Սահմանված վերջնաժամկետը լրացավ 2007 թ. դեկտեմբերի 31-ին՝ հարցը դուրս բերելով սահմանադրության միջոցով լուծման շրջանակից:

Վիճելի տարածքներում փեշմերգայի և Իրաքի անվտանգության ուժերի առկայությունը մշտապես լարվածության պատճառ է, որը պարբերաբար վերաճում է բախումների: Այդպիսի բախում տեղի ունեցավ Խանեկին քաղաքում: 2008 թ. հուլիսին Իրաքի անվտանգության ուժերը հատուկ գործողություն իրականացրին Դիյալայում ընդդեմ «ալ-Կաիդայի»: Քրդերը, սակայն, այս գործողության մեջ իրենց՝ վիճելի տարածքներից դուրս մղելու մտադրություն տեսան: Խանեկինում հազարավոր քրդեր բողոքի ցույցեր սկսեցին՝ ընդդեմ քրդական ուժերի դուրսբերման պահանջի[17]: Իրաքի անվտանգության ուժերը քրդերին վերջնագիր ներկայացրին՝ պահանջելով դուրս գալ քաղաքից 24 ժամվա ընթացքում: Երբ քրդերը մերժեցին վերջնագիրը, իրաքյան ուժերը փորձեցին ուժով դուրս բերել նրանց, սակայն ձախողվեցին: Ի վերջո, Իրաքյան Քրդստանի նախագահ Բարզանին մեկնեց Բաղդադ և հանդիպեց Իրաքի վարչապետ Նուրի Ալ-Մալիքիին՝ հակամարտությանը վերջ դնելու համար: Բաղդադում համաձայնություն ձեռք բերվեց առ այն, որ քրդական և իրաքյան ուժերը պետք է քաղաքից հետ քաշվեն 25 կմ հեռավորության վրա[18]: Արդյունքում կառավարական ուժերը զբաղեցրին Խանեկինից հարավ ընկած արաբական բնակավայրերը, իսկ քրդական փեշմերգան՝ քաղաքից հյուսիս ընկած բնակավայրերը: Իրավիճակն էական փոփոխության ենթարկվեց 2014 թվականի հունիսին,

[16] Kane S., Iraqs Oil Politics, Where Agreement Might Be Found, Peaceworks No. 64. Washington, 2010, p. 13.

[17] Raouf S., Standoff over Iraqi Town Stokes Tension with Kurds, Reuters, August 31, 2008, http://www.reuters.com/article/idUSLV159246._CH_.2400 (մատչելի էր 01.04.2016).

[18] Stansfield G., Anderson L., Kurds in Iraq: the Struggle between Baghdad and Erbil, Middle East Policy 15, 1 (Spring 2009), p. 2, http://mepc.org/journal/middle-east-policy-archives/kurds-iraq-struggle-between-baghdad-and-erbil (մատչելի էր 01.04.2016).

© National Library of Armenia

երբ «Իրաքի և Լևանտի իսլամական պետություն» կոչվող խմբավորումը մեծ տարածքներ գրավեց Իրաքի հյուսիսում և կենտրոնում: 2014 թ. հունիսին, երբ կառավարական զորքերը նահանջում էին Քիրքուքից, քրդական փեշմերգան արագորեն զբաղեցրեց այն:

Բաղդադի և Էրբիլի հարաբերությունների սրումը համընկավ վարչապետ Նուրի Ալ-Մալիքիի դիրքերի ամրապնդման ժամանակաշրջանի հետ: Ալ-Մալիքին, որն ուներ Իրանի և ԱՄՆ-ի աջակցությունը, կենտրոնամետ քաղաքականություն էր վարում՝ միաժամանակ իր ձեռքում հավաքելով իշխանական լծակները: Մինչև 2008 թ. քրդական կուսակցությունները դաշնակցում էին շիայական ուժերի՝ Ալ-Մալիքիի «Դաուա» կուսակցության[19] և Աբդ Ալ-Ազիզ Ալ-Հաքիմի գլխավորած Իրաքի իսլամական գերագույն խորհրդի հետ: Ալ-Մալիքին օգտագործում էր քրդերի աջակցությունը՝ սուննի արաբական ուժերի և շիա ազդեցիկ հոգևորական Մուքթադա Ալ-Սադրի գլխավորած շրջանակների ընդդիմությանը դիմագրավելու համար: Քրդերը 2008 թ. մարտին աջակցեցին Ալ-Մալիքիին Ալ-Սադրի կողմնակիցների դեմ առճակատման ժամանակ[20]:

Ալ-Մալիքիի և քրդերի հարաբերությունները սկսեցին լարվել 2008 թ. սկսած: Բարզանիի և վարչապետի միջև հեռակա վեճ սկսվեց. Բարզանին Ալ-Մալիքիին մեղադրեց իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու մեջ ի պատասխան վարչապետի ելույթի, ով քրդերին մեղադրել էր հակասահմանադրական քաղաքականություն վարելու մեջ՝ ինչպես փեշմերգան ՔՇԿ-ի տարածքից դուրս տեղակայումը և օտար երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների բացումը ՔՇԿ տարածքում[21]: Բասրայում Ալ-Սադրի և Խանեկինում քրդերի դեմ ունեցած հաջողություններից ոգեշնչված՝ վարչապետ Նուրի Ալ-Մալիքին 2008 թ. սեպտեմբերի 17-ի ելույթում խոսեց ուժեղ կենտրոնական պետության առավելությունների մասին՝ միաժամանակ նշելով, որ դա չի հակասում ֆեդերալիզմի սկզբունքին: «Սա չի նշանակում հրաժարում ֆեդերալիզմից:

[19] Կուսակցության անվանումն է «Իսլամական կոչի կուսակցություն», որ հաճախ համառոտ նշվում է «Դաուա» (արաբերենից թարգմանաբար՝ կոչ):

[20] Katzman K., Kurds in Post-Saddam Iraq, Congressional Research Service report for Congress, Washington, 1 Sep. 2009, p. 6:

[21] Full text of KRG response to Iraqi Prime Minister's accusations, 1 Dec 2008, KRG website, http://cabinet.gov.krd/a/d.aspx?l=12&s=02010100&r=223&a=26811&s=010000 (մատչելի էր 12.05.2016):

Այո՛, մենք ֆեդերալիզմ ենք կառուցելու: Սակայն պետք է նշենք, որ կենտրոնական կառավարությունն ավելի ուժեղ է, քան դաշնային միավորները, և դաշնային միավորներն ավելի ուժեղ չեն, քան կենտրոնական կառավարությունը, ինչպես ոմանք են մտածում, որ կենտրոնական կառավարությունը միայն հավաքում ու բաշխում է եկամուտները: Ահա ինչպես են ոմանք պատկերացնում կենտրոնական կառավարությունը, որ այն պետք է այդ աստիճանի թույլ լինի: Սա հակասում է ուժեղ պետություն կառուցելու նպատակին, որն ունակ կլինի պաշտպանելու ինքն իրեն»[22], - նշում էր Ալ-Մալիքին: Հասկանալի է, որ այս ելույթն ուղղված էր Էրբիլին:

Մի քանի շաբաթ անց Ալ-Մալիքին ավելի հեռուն գնաց՝ քննադատելով սահմանադրության «հապշտապ ընդունումը», այն դեպքում, երբ Իրաքն անցումային շրջանում էր: Վարչապետը նշեց, որ սահմանադրությունը պետք է փոխվի՝ կառավարության և նահանգների միջև իշխանության բաժանումը հստակեցնելու համար: 2009 թ. հունվարի 21-ին Իրաքի վարչապետը կրկնեց, որ սահմանադրությունն ու օրենքները պետք է փոխվեն՝ երկրի միասնությունը պահպանելու համար[23]: Ալ-Մալիքին քննադատության ենթարկեց նաև մուհասասան՝ պաշտոնների բաշխման չգրված պայմանավորվածությունը, ըստ որի՝ նախագահը պետք է լինի քուրդ, վարչապետը՝ շիա, խորհրդարանի խոսնակը՝ սուննի[24]:

2010 թ. Իրաքում խորհրդարանական ընտրություններ անցկացվեցին: Վարչապետ Ալ-Մալիքիի գլխավորած «Օրենքի պետություն» կոալիցիան ստացավ 89 մանդատ՝ ընդամենը 2 մանդատով զիջելով Իյադ Իլավիի «Իրաքի ազգային շարժմանը»: 2010 թ. խորհրդարանական ընտրություններին Քրդըստանի դաշինքը կոչ արեց մասնակցել միասնական ցուցակով՝ հրավիրելով նաև իսլամական կուսակցություններին և ընդդիմությանը:

[22] International Crisis Group, Working to Prevent Conflict Worldwide, Iraq and the Kurds: Trouble Along the Trigger Line, Middle East Report N88, Brussels, 8 July 2009, p. 6.

[23] المالكي: تغيير الدستور ضروري لحماية وحدة العراق, Ալ-Մալիքի. Թաղիր ալ-դասթուր դարուրի լիհիմայա ուահդաթուլ Իրակ: 21 Jan. 2009, http://middle-east-online.com/?id=72829 (մատչելի էր 01.04.2016).

[24] المالكي: المحاصصة الطائفية والحزبية دمرت العراق, Ալ-Մալիքի. Ալ-մուհասասա ալ-տաիֆիյա ու ալ-հիզբիյա դամարաթ ալ-Իրակ 21 Jan 2009, http://www.lebanese-forces.com/2009/01/21/32305/ (մատչելի էր 01.04.2016):

© National Library of Armenia

մադիր «Գորան» շարժմանը, որը մեկ տարի առաջ Իրաքյան Քրդստանի օրենսդիր մարմնի ընտրություններում ստացել էր պատգամավորական մանդատների 25%-ը: «Գորանը», սակայն, հրաժարվեց հանդես գալ միասնական ցուցակով՝ մեղադրելով ՔԴԿ-ին ու ՔՀՄ-ին իշխանության մենաշնորհացման փորձի մեջ: Այն նախընտրեց առանձին մասնակցել համաիրաքյան ընտրություններին, որպեսզի Բաղդադում ապահովեր իր ներկայությունը: Մարտյան ընտրություններին Քրդստանի դաշինքը հավաքեց ձայների մոտ 15%-ը, որը հավասար էր 43 մանդատի: Նախորդ գումարման խորհրդարանի համեմատ (2005 թ. դեկտեմբերյան ընտրություններ) Քրդական դաշինքը կորցրեց 10 տեղ: «Գորանը» ստացավ 8 մանդատ, իսկ քրդական իսլամական ուժերը՝ 6 մանդատ[25]: Խորհրդարանում չունենալով մեծամասնություն՝ վարչապետը սկսեց ուժեղացնել գործադիրի դիրքերն ու ազդեցությունը՝ ի հաշիվ խորհրդարանի և տեղական իշխանությունների: Նուրի Ալ-Մալիքին փորձում էր ռազմական ուժերը, դատարանները, նախարարությունները ենթարկեցնել իրեն: Այն բանից հետո, երբ Միացյալ Նահանգների Հատուկ ուժերը պետական ինստիտուտները փոխանցեցին Իրաքի իշխանություններին, վարչապետ Ալ-Մալիքին բանակի ներսում մի քանի բրիգադ ձևավորեց որպես հակաահաբեկչական ուժեր, որոնց դուրս բերեց Պաշտպանության նախարարության ենթակայությունից և դրեց իր անմիջական հրամանատարության տակ: Այնուհետև նա մեկ կառույցի մեջ միավորեց ոստիկանությունն ու բանակը: Ալ-Մալիքիի անմիջական ենթակայության տակ մոտ 4200 հոգուց բաղկացած հատուկ ստորաբաժանում կար[26]: Նա իր անմիջական վերահսկողությունը սահմանեց Գերագույն դաշնային դատարանի վրա, վերացրեց ամերիկյան օկուպացիայի ժամանակ բացված մի շարք գործակալությունների անկախությունը, որոնք պետք է վերահսկեին ընտրությունները, հետևեին մարդու իրավունքների պաշտպանությանը և պայքարեին կոռուպցիայի դեմ: Նուրի Ալ-Մալիքին համոզված էր, որ իշխանության կիսումը և շրջանների ինքնավարության աստիճանի մեծացումը չեն լուծում Իրաքի առջև ծառացած խնդիրները[27]: Ալ-Մալիքիի և քրդերի դիմակայությունն ավարտվեց 2014 թ., երբ օգոստոսին երկրում ստեղծված քաոսային վիճակի պատճառով վարչապետը ստիպված էր հրաժարական տալ՝ տեղը զիջելով իրաքյան տարբեր խմբակցությունների համար առավել ընդունելի Հեյդար Ալ-Աբադիին:

Տարածքային վեճերից ու կառավարման լծակների բաշխման խնդիրներից բացի՝ Բաղդադի և Էրբիլի հարաբերություններում լուրջ փորձաքար էր նավթի արդյունահանման և եկամուտների բաշխման խնդիրը: Պատերազմի հետևանքով զգալիորեն նվազած նավթարդյունահանման ծավալներն անհրաժեշտ էր վերականգնել՝ երկրի կարիքները հոգալու համար: Նավթն Իրաքից արտահանվող հիմնական ապրանքն ու եկամտի գլխավոր աղբյուրն է: Թե՛ Բաղդադի, թե՛ Էրբիլի համար նավթի արդյունահանման ու արտահանման վրա վերահսկողությունը ռազմավարական նշանակություն ուներ:

Սահմանադրությամբ Իրաքյան Քրդստանը ստացավ երկրի նավթային եկամուտների 17%-ը, քանի որ, ըստ 112-րդ հոդվածի, արդյունահանված նավթն ու գազը, եկամուտները պետք է բաշխվեին երկրի բոլոր հատվածներում բնակչության թվաքանակին համապատասխան: Եկամուտների բաշխումը կատարվում էր հետևյալ կերպ. երկրի ամբողջ տարածքից արդյունահանված ու վաճառված նավթի եկամուտները կենտրոնանում էին Բաղդադում, վերջինս էլ իրականացնում էր բաշխումը: Ոլորտը կարգավորելու հարցով շահագրգռված էր ԱՄՆ-ը, որը կառավարության վրա ճնշում էր գործադրում համապատասխան օրենսդրություն ընդունելու համար:

Իրաքի վարչապետ Նուրի Ալ-Մալիքին բարդ վիճակում էր հայտնվել ածխաջրածինների մասին օրենքի քննարկման ժամանակ: Ամերիկյան վարչակազմը Ալ-Մալիքիին աջակցությունը շարունակելու համար նախապայման էր դրել այդ օրենքի ընդունումը: Օրենքի ընդունումը, որը պետք է նպաստեր ներդրումների ավելացմանը, նշանակում էր, որ Ալ-Մալիքին պետք է ընդունի քրդերի պահանջները նավթային պայմանագրերի կնքումն ապակենտրոնացնելու վերաբերյալ: Էրբիլի պահանջների կատարումը ոչ միայն կուժեղացներ վերջինիս դիրքերը, այլև կարող էր նաև խթան հանդիսանալ, որ նավթով հարուստ մյուս շրջանները ևս ինքնուրույնություն պահանջեն նավթային

[25] Iraq's new parliament seat distribution, 29 Mar., 2010, http://ekurd.net/mismas/articles/misc2010/3/govt1674.htm (մատչելի էր 01.04.2016):

[26] Yaphe J., Maliki's maneuvering in Iraq, 6 Jun. 2012, http://foreignpolicy.com/2012/06/06/malikis-manuevering-in-iraq/ (մատչելի էր 01.04.2016):

[27] Նույն տեղում:

© National Library of Armenia

մադիր «Գորան» շարժմանը, որը մեկ տարի առաջ Իրաքյան Քրդստանի օրենսդիր մարմնի ընտրություններում ստացել էր պատգամավորական մանդատների 25%-ը: «Գորանը», սակայն, հրաժարվեց հանդես գալ միասնական ցուցակով՝ մեղադրելով ՔԴԿ-ին ու ՔՀՄ-ին իշխանության մենաշնորհացման փորձի մեջ: Այն նախընտրեց առանձին մասնակցել համաիրաքյան ընտրություններին, որպեսզի Բաղդադում ապահովեր իր ներկայությունը: Մարտյան ընտրություններին Քրդստանի դաշինքը հավաքեց ձայների մոտ 15%-ը, որը հավասար էր 43 մանդատի: Նախորդ գումարման խորհրդարանի համեմատ (2005 թ. դեկտեմբերյան ընտրություններ) Քրդական դաշինքը կորցրեց 10 տեղ: «Գորանը» ստացավ 8 մանդատ, իսկ քրդական իսլամական ուժերը՝ 6 մանդատ[25]: Խորհրդարանում չունենալով մեծամասնություն՝ վարչապետը սկսեց ուժեղացնել գործադիրի դիրքերն ու ազդեցությունը՝ ի հաշիվ խորհրդարանի և տեղական իշխանությունների: Նուրի Ալ-Մալիքին փորձում էր ռազմական ուժերը, դատարանները, նախարարությունները ենթարկեցնել իրեն: Այն բանից հետո, երբ Միացյալ Նահանգների Հատուկ ուժերը պետական ինստիտուտները փոխանցեցին Իրաքի իշխանություններին, վարչապետ Ալ-Մալիքին բանակի ներսում մի քանի բրիգադ ձևավորեց որպես հակաահաբեկչական ուժեր, որոնց դուրս բերեց Պաշտպանության նախարարության ենթակայությունից և դրեց իր անմիջական հրամանատարության տակ: Այնուհետև նա մեկ կառույցի մեջ միավորեց ոստիկանությունն ու բանակը: Ալ-Մալիքիի անմիջական ենթակայության տակ մոտ 4200 հոգուց բաղկացած հատուկ ստորաբաժանում կար[26]: Նա իր անմիջական վերահսկողությունը սահմանեց Գերագույն դաշնային դատարանի վրա, վերացրեց ամերիկյան օկուպացիայի ժամանակ բացված մի շարք գործակալությունների անկախությունը, որոնք պետք է վերահսկեին ընտրությունները, հետևեին մարդու իրավունքների պաշտպանությանը և պայքարեին կոռուպցիայի դեմ: Նուրի Ալ-Մալիքին համոզված էր, որ իշխանության կիսումը և շրջանների ինքնավարության աստիճանի մեծացումը չեն լուծում Իրաքի առջև ծառացած խնդիրները[27]: Ալ-Մալիքիի և քրդերի դիմակայությունն ավարտվեց 2014 թ., երբ օգոստոսին երկրում ստեղծված քաոսային վիճակի պատճառով վարչապետը ստիպված էր հրաժարական տալ՝ տեղը զիջելով իրաքյան տարբեր խմբակցությունների համար առավել ընդունելի Հեյդար Ալ-Աբադիին:

Տարածքային վեճերից ու կառավարման լծակների բաշխման խնդիրներից բացի՝ Բաղդադի և Էրբիլի հարաբերություններում լուրջ փորձաքար էր նավթի արդյունահանման և եկամուտների բաշխման խնդիրը: Պատերազմի հետևանքով զգալիորեն նվազած նավթարդյունահանման ծավալներն անհրաժեշտ էր վերականգնել՝ երկրի կարիքները հոգալու համար: Նավթն Իրաքից արտահանվող հիմնական ապրանքն ու եկամտի գլխավոր աղբյուրն է: Թե՛ Բաղդադի, թե՛ Էրբիլի համար նավթի արդյունահանման ու արտահանման վրա վերահսկողությունը ռազմավարական նշանակություն ուներ:

Սահմանադրությամբ Իրաքյան Քրդստանը ստացավ երկրի նավթային եկամուտների 17%-ը, քանի որ, ըստ 112-րդ հոդվածի, արդյունահանված նավթն ու գազը, եկամուտները պետք է բաշխվեին երկրի բոլոր հատվածներում բնակչության թվաքանակին համապատասխան: Եկամուտների բաշխումը կատարվում էր հետևյալ կերպ. երկրի ամբողջ տարածքից արդյունահանված ու վաճառված նավթի եկամուտները կենտրոնանում էին Բաղդադում, վերջինս էլ իրականացնում էր բաշխումը: Ոլորտը կարգավորելու հարցով շահագրգռված էր ԱՄՆ-ը, որը կառավարության վրա ճնշում էր գործադրում համապատասխան օրենսդրություն ընդունելու համար:

Իրաքի վարչապետ Նուրի Ալ-Մալիքին բարդ վիճակում էր հայտնվել ածխաջրածինների մասին օրենքի քննարկման ժամանակ: Ամերիկյան վարչակազմը Ալ-Մալիքիին աջակցությունը շարունակելու համար նախապայման էր դրել այդ օրենքի ընդունումը: Օրենքի ընդունումը, որը պետք է նպաստեր ներդրումների ավելացմանը, նշանակում էր, որ Ալ-Մալիքին պետք է ընդունի քրդերի պահանջները նավթային պայմանագրերի կնքումն ապակենտրոնացնելու վերաբերյալ: Էրբիլի պահանջների կատարումը ոչ միայն կուժեղացներ վերջինիս դիրքերը, այլև կարող էր նաև խթան հանդիսանալ, որ նավթով հարուստ մյուս շրջանները ևս ինքնուրույնություն պահանջեն նավթային

[25] Iraq's new parliament seat distribution, 29 Mar., 2010, http://ekurd.net/mismas/articles/misc2010/3/govt1674.htm (մատչելի էր 01.04.2016):

[26] Yaphe J., Maliki's maneuvering in Iraq, 6 Jun. 2012, http://foreignpolicy.com/2012/06/06/malikis-manuevering-in-iraq/ (մատչելի էր 01.04.2016):

[27] Նույն տեղում:

© National Library of Armenia

պայմանագրեր ստորագրելու հարցում[28]: Նշենք, որ 2004-2009 թթ. շիաներով բնակեցված հարավում տեղական իշխանությունները մեծամասամբ Ալ-Մալիքիի «Դաուայի» մրցակից Իրաքի իսլամական գերագույն խորհրդի վերահսկողության տակ էին: Այն կողմ էր շիայական շրջանի ստեղծմանը, որը կվերահսկեր Իրաքի հարավում գտնվող նավթի պաշարները[29]:

Ջորջ Բուշ Կրտսերի վարչակազմի աջակցությամբ, ինչպես նաև ճնշմամբ 2007 թ. քննարկման դրվեց նավթագազային ռեսուրսների մասին օրենքը, որը փոխզիջում էր ենթադրում սուննիների, շիաների և քրդերի միջև: Հունվարին ամերիկացիներին ուղղված Բուշի ուղերձում նշված էր, որ «Իրաքի յուրաքանչյուր քաղաքացու երկրի տնտեսությունից մասնաբաժին տալու համար Իրաքը կընդունի օրենք՝ նավթային եկամուտները բոլոր իրաքցիների միջև բաշխելու համար»[30]:

Իրաքի կառավարությունն ածխաջրածինների վերաբերյալ օրենքին հավանություն տվեց 2007 թ. փետրվարի 27-ին: Օրենքով Նավթի և գազի դաշնային խորհուրդը, որի անդամ են նաև շրջանների ներկայացուցիչները, պատասխանատվություն պետք է կրեր նավթային քաղաքականության, նավթահանքերի շահագործման համար և իրավունք ուներ փոփոխություններ կատարելու նավթային ծրագրերում ու քաղաքականությունում[31]:

2007 թ. Բաղդադի հետ նավթային օրենքի վերաբերյալ բանակցությունները, այդուհանդերձ, ձախողվեցին, որից հետո Իրաքյան Քրդստանը սկսեց զարգացնել իր նավթագազային արդյունաբերությունը: Քրդերը 2007 թ. նավթի ու գազի վերաբերյալ սեփական օրենքն ընդունեցին[32]: Օրենքի 13-րդ հոդվածում նշված էր գործող և դեռևս չշահագործվող նավթահանքերից եկամուտ ստանալու մասին, սակայն 17-րդ հոդվածում, որը դաշնային իշխանությունների հետ համագործակցության մասին էր, նշված է, որ Քրդստանի կառավարությունը գործող նավթահանքերից արդյունահանված նավթագազային ռեսուրսների կառավարումը համաձայնեցնելու էր դաշնային կառավարության հետ, սակայն խոսք չկար դեռևս չշահագործվող հանքավայրերի մասին[33]: Շրջանցելով Իրաքի կառավարությանը՝ քրդական իշխանությունները պայմանագրեր ստորագրեցին միջազգային նավթային ընկերությունների հետ: Այդ քայլից հետո Բաղդադի ու Էրբիլի հարաբերությունները շարունակեցին վատթարանալ:

Մինչ այդ մի շարք փոքր նավթային ընկերություններ արդեն սկսել էին հետազոտական աշխատանքներ իրականացնել, սակայն բանակցությունների ձախողումից հետո ներգրավեցին նաև միջին մեծության ընկերություններին, այդ թվում՝ ԱՄՆ-ից: Քրդական ղեկավարությունը 2007 թ. սեփական նավթային օրենքի հիման վրա մի շարք պայմանագրեր ստորագրեց, որոնք Իրաքի նավթի նախարար Հուսեյն Շահրիստանին անօրինական որակեց[34]: Պայմանագրեր ստորագրվեցին թուրքական Genel, ամերիկյան Hunt Oil, ԱՄԷ-ի Dana Gas, բրիտանական BP, նորվեգական BNO Asa, ավստրիական OMV, հարավկորեական SK, կանադական Talisman, շվեյցարական Addax ընկերությունների հետ[35]: Բաղդադը չճանաչեց ինքնուրույն նավթային պայմանագրեր ստորագրելու Էրբիլի իրավունքը: Չնայած կողմերը համաձայնության եկան եկամուտների բաշխման սկզբունքների շուրջ, քրդերը պնդում էին, որ պետք է ինքնուրույն պայմանագրեր ստորագրելու իրավունք ստանան:

[28] Kane S., նշվ. աշխ., էջ 14:

[29] Նույն տեղում:

[30] Transcript of President George W. Bush's address to the nation on U.S. policy in Iraq, January 11, 2007. http://www.nytimes.com/2007/01/11/us/11ptext.html (մատչելի էր 01.04.2016):

[31] عبدالهادي الحساني, قانون النفط والغازبين النظريه والواقع, ص. 5, 02.06.2007, Աբդալ Հադի Ալ-Հասանի, կանուն ալ-նաֆտ վալ ղազ բեյնալ նազարիյա վալ վակիա: http://www.iier.org/oillaw/Comments%20on%20the%20Oil%20&%20Gas%20Law%202.pdf, 2007 (մատչելի էր 04.01.2016):

[32] Oil and Gas Law of the Kurdistan Region – Iraq, Decision No. (28) – 2007, KRG website, 07 Sep 2007. http://cabinet.gov.krd/uploads/documents/Kurdistan%20Oil%20and%20Gas%20Law%20English__2007_09_06_h14m0s42.pdf (մատչելի էր 01.04.2016).

[33] Տե՛ս Oil and Gas Law of the Kurdistan Region – Iraq, http://cabinet.gov.krd/uploads/documents/Kurdistan%20Oil%20and%20Gas%20Law%20English__2007_09_06_h14m0s42.pdf.

[34] Iraqi Oil minister authorized to ban Kurdistan oil exports, 24.11.2007, http://ekurd.net/mismas/articles/misc2007/11/government1277.htm (մատչելի էր 01.04.2016).

[35] KRG Ministry of Natural Resources Production Sharing Contracts, KRG website, http://cabinet.gov.krd/p/p.aspx?l=12&p=1 (մատչելի էր 01.04. 2016).

© National Library of Armenia

պայմանագրեր ստորագրելու հարցում[28]: Նշենք, որ 2004-2009 թթ. շիաներով բնակեցված հարավում տեղական իշխանությունները մեծամասամբ Ալ-Մալիքիի «Դաուայի» մրցակից Իրաքի իսլամական գերագույն խորհրդի վերահսկողության տակ էին: Այն կողմ էր շիայական շրջանի ստեղծմանը, որը կվերահսկեր Իրաքի հարավում գտնվող նավթի պաշարները[29]:

Ջորջ Բուշ Կրտսերի վարչակազմի աջակցությամբ, ինչպես նաև ճնշմամբ 2007 թ. քննարկման դրվեց նավթագազային ռեսուրսների մասին օրենքը, որը փոխզիջում էր ենթադրում սուննիների, շիաների և քրդերի միջև: Հունվարին ամերիկացիներին ուղղված Բուշի ուղերձում նշված էր, որ «Իրաքի յուրաքանչյուր քաղաքացու երկրի տնտեսությունից մասնաբաժին տալու համար Իրաքը կընդունի օրենք՝ նավթային եկամուտները բոլոր իրաքցիների միջև բաշխելու համար»[30]:

Իրաքի կառավարությունն ածխաջրածինների վերաբերյալ օրենքին հավանություն տվեց 2007 թ. փետրվարի 27-ին: Օրենքով Նավթի և գազի դաշնային խորհուրդը, որի անդամ են նաև շրջանների ներկայացուցիչները, պատասխանատվություն պետք է կրեր նավթային քաղաքականության, նավթահանքերի շահագործման համար և իրավունք ուներ փոփոխություններ կատարելու նավթային ծրագրերում ու քաղաքականությունում[31]:

2007 թ. Բաղդադի հետ նավթային օրենքի վերաբերյալ բանակցությունները, այդուհանդերձ, ձախողվեցին, որից հետո Իրաքյան Քրդստանը սկսեց զարգացնել իր նավթագազային արդյունաբերությունը: Քրդերը 2007 թ. նավթի ու գազի վերաբերյալ սեփական օրենքն ընդունեցին[32]: Օրենքի 13-րդ հոդվածում նշված էր գործող և դեռևս չշահագործվող նավթահանքերից եկամուտ ստանալու մասին, սակայն 17-րդ հոդվածում, որը դաշնային իշխանությունների հետ համագործակցության մասին էր, նշված է, որ Քրդստանի կառավարությունը գործող նավթահանքերից արդյունահանված նավթագազային ռեսուրսների կառավարումը համաձայնեցնելու էր դաշնային կառավարության հետ, սակայն խոսք չկար դեռևս չշահագործվող հանքավայրերի մասին[33]: Շրջանցելով Իրաքի կառավարությանը՝ քրդական իշխանությունները պայմանագրեր ստորագրեցին միջազգային նավթային ընկերությունների հետ: Այդ քայլից հետո Բաղդադի ու Էրբիլի հարաբերությունները շարունակեցին վատթարանալ:

Մինչ այդ մի շարք փոքր նավթային ընկերություններ արդեն սկսել էին հետազոտական աշխատանքներ իրականացնել, սակայն բանակցությունների ձախողումից հետո ներգրավեցին նաև միջին մեծության ընկերություններին, այդ թվում՝ ԱՄՆ-ից: Քրդական ղեկավարությունը 2007 թ. սեփական նավթային օրենքի հիման վրա մի շարք պայմանագրեր ստորագրեց, որոնք Իրաքի նավթի նախարար Հուսեյն Շահրիստանին անօրինական որակեց[34]: Պայմանագրեր ստորագրվեցին թուրքական Genel, ամերիկյան Hunt Oil, ԱՄԷ-ի Dana Gas, բրիտանական BP, նորվեգական BNO Asa, ավստրիական OMV, հարավկորեական SK, կանադական Talisman, շվեյցարական Addax ընկերությունների հետ[35]: Բաղդադը չճանաչեց ինքնուրույն նավթային պայմանագրեր ստորագրելու Էրբիլի իրավունքը: Չնայած կողմերը համաձայնության եկան եկամուտների բաշխման սկզբունքների շուրջ, քրդերը պնդում էին, որ պետք է ինքնուրույն պայմանագրեր ստորագրելու իրավունք ստանան:

[28] Kane S., նշվ. աշխ., էջ 14:

[29] Նույն տեղում:

[30] Transcript of President George W. Bush's address to the nation on U.S. policy in Iraq, January 11, 2007. http://www.nytimes.com/2007/01/11/us/11ptext.html (մատչելի էր 01.04.2016):

[31] عبدالهادي الحساني, قانون النفط والغازبين النظريه والواقع, ص. 5, 02.06.2007, Աբդալ Հադի Ալ-Հասանի, կանուն ալ-նաֆտ վալ գազ բեյնալ նազարիյա վալ վակիա: http://www.iier.org/oillaw/Comments%20on%20the%20Oil%20&%20Gas%20Law%202.pdf, 2007 (մատչելի էր 04.01.2016):

[32] Oil and Gas Law of the Kurdistan Region – Iraq, Decision No. (28) – 2007, KRG website, 07 Sep 2007. http://cabinet.gov.krd/uploads/documents/Kurdistan%20Oil%20and%20Gas%20Law%20English__2007_09_06_h14m0s42.pdf (մատչելի էր 01.04.2016).

[33] Տե՛ս Oil and Gas Law of the Kurdistan Region – Iraq, http://cabinet.gov.krd/uploads/documents/Kurdistan%20Oil%20and%20Gas%20Law%20English__2007_09_06_h14m0s42.pdf.

[34] Iraqi Oil minister authorized to ban Kurdistan oil exports, 24.11.2007, http://ekurd.net/mismas/articles/misc2007/11/government1277.htm (մատչելի էր 01.04.2016).

[35] KRG Ministry of Natural Resources Production Sharing Contracts, KRG website, http://cabinet.gov.krd/p/p.aspx?l=12&p=1 (մատչելի էր 01.04. 2016).

© National Library of Armenia

Ըստ սահմանադրության՝ նավթի ու գազի հետ կապված հարցերը դաշնային կառավարության բացառիկ իրավասության տակ չեն, իսկ 121-րդ հոդվածի 2-րդ մասում նշված է, որ շրջանների օրենքները գերակայում են դաշնային օրենքներին, եթե խոսքը չի վերաբերում դաշնային կառավարության բացառիկ իրավասություններին[36]: Հիմնվելով այս հոդվածի վրա՝ քրդերն ինքնուրույնություն էին պահանջում նավթային ոլորտում: Այդ նպատակով մեկնարկած խողովակաշարի շինարարությունը, որը պետք է Թաք Թաք և Թաուկե նավթահանքերից արդյունահանվող նավթը հասցներ Թուրքիայի սահման, չէր լուծում այդ խնդիրը: Իրաքը Թուրքիային կապող նավթամուղը Քիրքուք-Ջեյհանն է: Նավթի արտահանման նպատակով կառուցվող քրդական ցանկացած խողովակաշար պետք է միանար Քիրքուք-Ջեյհանին, որը քրդերի տարածքով չի անցնում և պատկանում է Իրաքին: Թուրքիայի և Իրաքի միջև գործող պայմանագրով Քիրքուք-Ջեյհան նավթամուղով հոսող նավթը համարվում է Իրաքի սեփականությունը, և չկա իրավական մեխանիզմ, որը թույլ է տալիս Անկարային անմիջապես վճարել Էրբիլին[37]: Բացի այդ, քրդերը նավթ արտահանելու համար այսպես թե այնպես պետք է ստանային Բաղդադի համաձայնությունը: Նավթի հարցում դաշնային կառավարության դիրքերն ավելի ուժեղ էին, հետևաբար վարչապետ Ալ-Մալիքին մերժեց ոչ միայն պայմանագրեր ստորագրելու իրավունքը, այլ նաև պայմանագրերի բնույթը, որով նավթ արդյունահանող ընկերությունները մասնաբաժին պետք է ստանային[38]:

Էրբիլի վրա ճնշում գործադրելու համար Իրաքի՝ 2008 թ. բյուջեի քննարկման ժամանակ սուննի և շիա արաբ պատգամավորները փորձեցին ՔՇԿ-ին փոխանցվող նավթային եկամուտները 17%-ից կրճատել մինչև 13%: Քրդերը նախագահ Ջալալ Թալաբանիի միջոցով սպառնացին վետո դնել բյուջետային օրենքի վրա, ինչի շնորհիվ կարողացան պահպանել 17%-ը[39]:

[36] Anderson L., G. Stasnfield, նշվ. աշխ., էջ 3, http://mepc.org/journal/middle-east-policy-archives/kurds-iraq-struggle-between-baghdad-and-erbil (մատչելի էր 01.04.2016).

[37] Natali D., How independent is the Iraqi-Kurdish pipeline to Turkey?, Nov 4., 2013, Al-Monitor, http://www.al-monitor.com/pulse/en/originals/2013/11/iraqi-kurdish-pipeline-turkey-oil-policy-export.html (մատչելի էր 10.05.2014).

[38] Hiltermann J., Revenge of the Kurds: Breaking Away from Baghdad. Foreign Affairs, Council of Foreign Relations, New York, 91 (6), 2012, p. 20.

[39] Kane S., նշվ. աշխ., էջ 16:

2008-2009 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակ նավթի գներն անկում ապրեցին, և նավթային եկամուտներից կախվածություն ունեցող երկու կողմերը միջանկյալ համաձայնության եկան: 2008 թ. դեկտեմբերին Բաղդադը համաձայնվեց ՔՇԿ-ի տարածքում երկու նավթահանքերը միացնել Իրաքից Թուրքիա գլխավոր խողովակաշարին: 2009 թ. մայիսին Բաղդադը թույլատրեց Էրբիլին նավթ արտահանել Թաք Թաք նավթահանքից[40]: Առաջին համաձայնությունը տևեց ընդամենը մի քանի ամիս, քանի որ քրդերը ֆինանսական լուրջ ճնշումների էին ենթարկվում արդյունահանող ընկերությունների կողմից, որոնք պահանջում էին փոխհատուցել իրենց ծախսերը: Բաղդադը պնդում էր, որ ՔՇԿ-ը ծախսերը կատարի իր ամենամյա բյուջեից: 2010 թ., երբ քրդերի՝ արդյունահանման հնարավորությունները մեծացան, Բաղդադն ու Էրբիլը նոր պայմանավորվածություն ձեռք բերեցին, որով քրդերը պետք է շարունակեին նավթի արդյունահանությունը, իսկ դաշնային կառավարությունը փոխհատուցեր ընկերությունների ներդրումները[41]: Այս պայմանավորվածությունը ևս կարճ տևեց, քանի որ վեճ ծագեց նավթային ընկերությունների՝ հետազոտման և արդյունահանման կազմակերպման հետ կապված ծախսերի վերաբերյալ: Խնդիրն ավելի էին բարդացնում Ալ-Մալիքիի և Բարզանիի հարաբերությունների սրումը և Ալ-Մալիքիի դիրքերի ամրապնդումը: Բարզանին փորձեց Ալ-Մալիքիի հակառակորդների հետ պայմանավորվածության հասնել և անվստահություն հայտնել նրան, եթե Ալ-Մալիքին շարունակի խախտել իշխանական լիազորությունների բաշխման խոստումները: Բարզանիին վստահություն էր հաղորդում այն, որ աշխարհում նավթային խոշորագույն ընկերություններից մեկը՝ ամերիկյան Exxon Mobil-ը, պայմանագիր էր ստորագրել ՔՇԿ-ի հետ, ինչը զայրացրել էր Ալ-Մալիքիի կառավարությանը, որն ընկերությանը սպառնում էր պատժամիջոցներով[42]:

Մյուս կողմից Թուրքիան ավելացրեց նավթի գնումներն Իրաքյան Քրդստանից, իսկ Ալ-Մալիքիի և Թուրքիայի վարչա-

[40] Iraqi Kurdistan begins first-time oil exports, Jun. 01, 2009, Al-Arabiya News, https://www.alarabiya.net/articles/2009/06/01/74513.html (մատչելի էր 10.05.2016).

[41] Shareef M., The United States, Iraq and the Kurds: Shock, Awe and Aftermath, New York, 2014, p. 178.

[42] Hiltermann J., նշվ. աշխ., էջ 21:

© National Library of Armenia

պետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հարաբերությունները լարված էին 2011 թ. սկսված սիրիական հակամարտության պատճառով, որտեղ Ալ-Մալիքին աջակցում էր Սիրիայի նախագահ Բաշար Ասադին: Բարզանիի «հեղաշրջումը» չստացվեց, քանի որ Ալ-Մալիքին վայելում էր Իրանի ու ԱՄՆ-ի աջակցությունը: Ալ-Մալիքին, ի պատասխան նավթի արդյունահանման քրդական բոյկոտին, սպառնաց կրճատել ՔՇԿ-ին տրամադրվող միջոցները: Ի վերջո, կողմերը եկան նախկին պայմանավորվածությանը, իսկ քրդերը նավթային առումով շարունակեցին կախված մնալ Բաղդադից[43]: 17% մասնաբաժնի շնորհիվ ՔՇԿ-ի եկամուտները 2005 թ. 2.5 միլիարդ դոլարից 2013 թ. հասան 13 միլիարդ դոլարի[44]: 2013 թ. Էրբիլն ավարտին հասցրեց նավթամուղի կառուցումը՝ միացնելով այն Քիրքուք-Ջեյհան նավթամուղին: 2014 թ. նավթամուղով Ջեյհան հասած առաջին միլիոն բարել քրդական նավթը տանկերով ուղևորվեց Եվրոպա[45]:

2014 թ. հունիսին ԻՊ-ը գրավեց Իրաքի՝ մեծությամբ երկրորդ քաղաքը՝ Մոսուլը՝ տիրանալով իրաքյան բանակի ստորաբաժանումների թողած մեծաքանակ սպառազինությանը, բանկերին, նավթագազային պաշարներին, վերամշակման գործարաններին, օդանավակայաններին: ԻՊ-ի կողմից Մոսուլի և մի շարք այլ տարածքների գրավումից իրաքյան քրդերը հայտնվեցին ռազմաճակատի առաջին գծում: Իրաքյան բանակի նահանջի պայմաններում քրդական փեշմերգան մարտեր էր մղում ԻՊ-ի դեմ նրանց առաջխաղացումը բուն Իրաքյան Քրդստանի տարածք կանգնեցնելու համար: Մոսուլի, Թիքրիթի գրավումից հետո գրոհայինները հարձակում սկսեցին քրդերի մայրաքաղաք Էրբիլի ուղղությամբ, որը մեծ ջանքերի գնով հաջողվեց կանգնեցնել:

2014 թ. հուլիսին իրաքյան բանակի ստորաբաժանումները նահանջեցին նաև Քիրքուքի շրջանից, որի նկատմամբ հավակնություններ ունի Իրաքյան Քրդստանը: ԻՊ-ի կողմից Քիրքուքի գրավումը թույլ չտալու համար քրդական փեշմերգան մտավ քաղաք: Պատերազմը ֆինանսական լուրջ խնդիրների առաջ կանգնեցրեց քրդական կառավարությանը: Հարյուր հազարավոր փախստականների առկայության, ռազմական ծախսերի ավելացման, նավթի գնի անկման պայմաններում քրդական կառավարությունը դժվարությունների առաջ կանգնեց ֆինանսական պարտավորությունները կատարելու գործում: Բնակչության մի մասին աշխատավարձերի չվճարումը հանգեցրեց սոցիալական լարվածության, և 2015 թվականի հոկտեմբերի սկզբից Սուլեյմանիեի շրջանում ցույցեր սկսվեցին ընդդեմ կառավարության և ՔԴԿ-ի: Կալադիզե, Կալար բնակավայրերում ցույցերը վերածվեցին բախումների, որի հետևանքով զոհեր եղան[46]:

2015 թվականի հոկտեմբերի դրությամբ կառավարության տվյալներով Իրաքյան Քրդստանում ապաստան էր գտել 1.5 միլիոն ներքին տեղահանված և 280 հազար սիրիացի փախըստական: Նրանց աջակցելու համար, ըստ ՔՇԿ-ի և Համաշխարհային բանկի հաշվարկների, տարեկան առնվազն 1.4 միլիարդ դոլար է անհրաժեշտ[47]: Այս զարգացումները հանգեցրին ներքաղաքական լարվածության աճի խորհրդարանական գլխավոր ուժերի՝ ՔԴԿ-ի և Գորանի միջև: Բանը հասավ նրան, որ Գորանի ներկայացուցիչներին, այդ թվում՝ խորհրդարանի խոսնակին, թույլ չտվեցին մտնել Էրբիլ՝ մասնակցելու խորհրդարանի նիստին[48]:

Ստեղծված ծանր պայմաններում Բաղդադին և Էրբիլին անհրաժեշտ էր նավթի արդյունահանման և արտահանման նոր համաձայնության հասնել, սակայն երկարաժամկետ պայմանավորվածություն, որը կբավարարեր երկու կողմին էլ, չէր հաջողվում ձեռք բերել: 2015 թվականի հունվարին քրդերն ու կենտրոնական կառավարությունը կարծես թե համաձայնության էին հասել օրական 300,000 բարել Քիրքուքից և 250,000 բարել ԻՔ-ի տարածքից վաճառել Բաղդադի միջոցով, որի դիմաց կենտրոնական իշխանությունը պետք է փոխանցեր բյուջեի 17%-ը: Նավթի նվազող գների պատճառով, սակայն, Իրա-

[43] Նույն տեղում:

[44] Natalie D., The Kurdistan Region of Iraq: Stabilizer or Spoiler?, Georgetown Journal of International Affairs, Washington, Feb. 2013, p. 73.

[45] KRG statement on first oil sales through pipeline export, http://cabinet.gov.krd/a/d.aspx?l=12&a=51589, 23,05, 2015.

[46] Three killed in violent unrest in Iraq's Kurdistan region, Oct. 10, 2015, http://www.reuters.com/article/us-iraq-kurds-protests-idUSKCN0S40JE20151010.

[47] Crisi Looms for Refugees Taken in by Iraq's Kurds, 30 Sep. 2015, http://www.bloombergview.com/articles/2015-09-30/crisis-looms-for-refugees-taken-in-by-iraq-s-kurds.

[48] Goran gathers for first meeting since MPs ousted, Oct. 18, 2015 http://rudaw.net/english/kurdistan/18102015.

© National Library of Armenia

քի իշխանությունները ձգձգում էին պայմանավորվածության իրագործումը: 2015 թ. համար Իրաքի կառավարությունը ստիպված էր բյուջեն 151 միլիարդ դոլարից կրճատել մինչև 105 միլիարդ դոլար, իսկ 2016 թվականի համար ընդունվել է 89 միլիարդանոց բյուջե[49]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով նշենք, որ ֆինանսապես Բաղդադից անկախ դառնալու համար քրդերը ցանկանում են իրավունք ստանալ ինքնուրույն տնօրինելու իրենց տարածքում գտնվող նավթահանքերը, արդյունահանումը և վաճառքը, սակայն թույլ զարգացած ենթակառուցվածքները հնարավորություն չեն տալիս ստանալու այնքան եկամուտ, որը երաշխավորվում էր Իրաքի սահմանադրությամբ: Ի պատասխան Էրբիլի նավթային «ինքնագործունեության»՝ Բաղդադը սպառնում էր, որ չի փոխանցի քրդերին հասանելիք գումարը: Դաշնային կառավարության համար նավթային գործոնն ազդեցության ամենաազդեցիկ լծակն էր Էրբիլի վրա վերջինիս զիջումներ պարտադրելու առումով:

Չնայած ԻՊ-ի գործունեությունը կենտրոնական իշխանության թուլացման համատեքստում ձեռնտու է Էրբիլին, սակայն դրա դեմ պայքարը և նավթի ցածր գները, ինքնուրույն ֆինանսական քաղաքականություն վարելու անհաջող փորձը դժվար վիճակում են դրել նաև քրդական ինքնավարությանը: Դրան գումարվել են նաև ներիշխանական հակասությունները բուն Իրաքյան Քրդստանի տարածքում՝ կապված «Գորանի» ուժեղացման և Բարզանիի նախագահության ժամկետի երկարաձգման հետ: Արդյունքում 2015 թ. վերջի դրությամբ քաղաքական ճգնաժամ էր հասունացել նաև Իրաքյան Քրդստանում:

Տարածքային հարցերի չկարգավորված լինելը մշտապես լարվածության պատճառ է դառնում: Քիրքուքը թե՛ քրդերի, թե՛ Իրաքի համար ռազմավարական կարևորություն ունի և ոչ միայն ռեսուրսային առումով: Հաշվի առնելով, որ կողմերից մեկը մյուսի հանդեպ չունի վճռորոշ առավելություն՝ տարածքային հարցերը շարունակելու են չլուծված մնալ և լուրջ սպառնալիք լինել Իրաքի կայունության համար:

[49] Frantzman S., Why Kurdistan Can't Sell It's Oil, http://nationalinterest.org/feature/why-kurdistan-cant-sell-its-oil-16364?page=2, 6 May 2016.

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Արմեն Մանվելյան, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջազգային հարաբերությունների բաժնի ավագ գիտաշխատող: Դասավանդում է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մագիստրատուրայում: Զբաղվում է արդի միջազգային հարաբերություններում էներգետիկ աշխարհաքաղաքականության հիմնախնդիրների, էներգետիկ անվտանգության և միջազգային անվտանգության հարցերի ուսումնասիրությամբ:

Գոհար Իսկանդարյան, պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջազգային հարաբերությունների բաժնի ավագ գիտաշխատող: Հետազոտությունների ոլորտներն ընդգրկում են Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության և ներքաղաքական հիմնախնդիրները:

Եվա Հարությունյան, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջազգային հարաբերությունների բաժնի ավագ գիտաշխատող: Զբաղվում է Ճապոնիայի արտաքին քաղաքականության, մասնավորապես Մերձավոր Արևելքի, Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի երկրների հետ հարաբերությունների ուսումնասիրությամբ:

Արաքս Փաշայան, պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի ավագ գիտաշխատող: Զբաղվում է արաբական երկրների ներքին և արտաքին հիմնախնդիրների, «Իսլամական համագործակցություն» կազմակերպության, ինչպես նաև քաղաքական իսլամի ուսումնասիրությամբ:

Գրիգոր Վարդանյան, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի գիտաշխատող: Զբաղվում է Սիրիայի Արաբական Հանրապետության ժամանակակից պատմության, ալավիական համայնքի, ինչպես նաև Սիրիայում ալավիների ռազմաքաղաքական ազդեցության հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

Գոռ Գևորգյան, պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի գիտաշխատող: Զբաղվում է Եգիպտոսի ներքին և արտաքին քաղաքական հիմնախնդիրներով, արաբ–իսրայելական հակամարտության, ինչպես նաև միջարաբական հարաբերությունների հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

Մուշեղ Ղահրիյան, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջազգային հարաբերությունների բաժնի գիտաշխատող: Զբաղվում է Իրաքում և Մերձավոր Արևելքի այլ երկրներում քրդական խնդրի ուսումնասիրությամբ:

© National Library of Armenia

AUTHORS

Armen Manvelyan, PhD, Senior Researcher of the Department of International Relations at the Institute of Oriental Studies, NAS RA. He engaged in the study of energy geopolitics and energy security as well as the contemporary international relations issues. Visiting lecturer of the Department of international relations at Yerevan State University.

Gohar Iskandaryan, PhD, Assoc., Prof., Senior Research Fellow of the Department of International Relations at the Institute of Oriental Studies, NAS RA. Main fields of her research include the problems of domestic politics and foreign relations of the Islamic Republic of Iran.

Yeva Harutyunyan, PhD, Senior Researcher of the Department of International Relations at the Institute of Oriental Studies, NAS RA. Main fields of her research include Japan's policy in the region of Middle East, Central Asia and the South Caucasus.

Araks Pashayan Assoc. Prof., PhD, Senior Research Fellow of the Department of Arab Countries at the Institute of Oriental Studies, NAS RA. Main fields of her research include domestic and foreign political issues of Arab Countries, Organisation of Islamic Cooperation, as well as political Islam.

GrigorVardanyan, PhD, Research Fellow at the Department of Arab Countries at the Institute of Oriental Studies, NAS RA. Main fields of his research include the problems of contemporary history of Syrian Arab Republic, developments within Syrian Alawite Community and its political-military role in Syria.

Gor Gevorgyan, PhD, Assoc., Prof., Senior Research Fellow of the Department of Arab Countries at the Institute of Oriental Studies, NAS RA. Main fields of his research include domestic and foreign political issues of Egypt, Arab–Israeli conflict and the Inter-Arab relations.

Mushegh Ghahriyan, PhD, Researcher of the Department of International Relations at the Institute of Oriental Studies, NAS RA. Main fields of his research include the Kurdish issue in Iraq and in other Middle East countries.

АВТОРЫ

Армен Манвелян, к.и.н., Старший научный сотрудник отдела Международных отношений Института Востоковедения НАН РА. Приглашенный лектор факультета Международных отношений ЕГУ. Занимается изучением энергетической геополитики, а также проблемами энергетической и международной безопасности.

Гоар Искандарян, к. и. н., доцент,
Старший научный сотрудник отдела Международных отношений Института Востоковедения НАН РА. Сфера исследований – внутренние и внешнеполитические проблемы Исламской Республики Иран.

Ева Арутюнян, к.и.н., Старший научный сотрудник отдела Международных отношений Института Востоковедения НАН РА. Занимается политикой Японии в регионах Ближнего Востока, Средней Азии и Южного Кавказа.

Аракс Пашаян к.и.н., доцент, Старший научный сотрудник отдела Арабских стран Института Востоковедения НАН РА. Занимается внутренними и внешнеполитическими проблемами арабских стран, изучением вопросов организации Исламского сотрудничества и политического ислама.

Григор Варданян к.и.н., Научный сотрудник отдела Арабских стран Института Востоковедения НАН РА. Занимается проблемами современной истории Сирийской Арабской Республики, изучением Алавитской общины Сирии и вопросами военно-политической роли Алавитов в Сирии.

Гор Геворгян, к. и. н., доцент, Научный сотрудник отдела Арабских стран Института Востоковедения НАН РА. Занимается внутренними и внешнеполитическими проблемами Египта, а также вопросами арабо-израильского конфликта и межарабскими отношениями в контексте международных политических процессов.

Мушег Гагриян, к.и.н., Научный сотрудник отдела Международных отношений Института Востоковедения НАН РА. Занимается изучением курдского вопроса в Ираке и в других ближневосточных странах.

© National Library of Armenia

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀԱՏՈՐ Y (1)

Ռուբեն Սաֆրաստյանի խմբագրությամբ

Խմբագիր՝ Ազատուհի Սահակյան
Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Հրատ. պատվեր № 752
Ստորագրված է տպագրության՝ 20.12.2016թ.:
Չափսը՝ 60 x 100 1/16, 7 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ:

© National Library of Armenia

© National Library of Armenia